



# 21-րդ դար

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

2 (66)

ԵՐԵՎԱՆ

2016

# 21-ՐԴ ԴԱՐ

## տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից

2 (66), 2016

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

### Ալեքսանդր Գասպարիշվիլի

Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական լայնախառն լրատվամատչելիության կենտրոնի վարիչ, փ.գ.թ.  
(Մոսկվա, ՌԴ)

### Ալեքսանդր Կորնիլով

Նիժնի Նովգորոդի Ն.Ք. Լոբաչևսկու անվան պետական համալսարանի արտասահմանյան տարածաշրջանագիտության և տեղային պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.թ., պրոֆեսոր  
(Նիժնի Նովգորոդ, ՌԴ)

### Աշոտ Թավադյան

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., պրոֆեսոր

### Արամ Սաֆարյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

### Արթուր Աթանեսյան

ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ.

### Բաբկեն Վարդանյան

«Հայք հաստատություն» հ/կ տնօրեն, ՀՀ պաշտպանության նախարարի ավագ խորհրդական  
Գագիկ Հարությունյան (համակարգող)

«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

### Զավեն Եկավյան

Դոկտոր, պրոֆեսոր (Լիսաբոն, Պորտուգալիա)

### Էդուարդ Լ. Դանիելյան

«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.թ.

### Կարեն Վ. Կարապետյան

Տնտեսագիտության դոկտոր (Մոսկվա, ՌԴ)

### Հրանուշ Հակոբյան

ՀՀ Սփյուռքի նախարար, ի.գ.թ.

### Միհրան Դաբաղ

Դոկտոր, պրոֆեսոր, Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետին առընթեր Սփյուռքի և Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն (Բոխում, Գերմանիա)

### Մուշեղ Լալայան

ՀՀ Կ փոխնախագահ

### Մամվել Մանուկյան

IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

### Սեյրան Օհանյան

ՀՀ Պաշտպանության նախարար, գեներալ-գնդապետ

### Սերգեյ Գրիգորյան

Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, տ.գ.թ. (Մոսկվա, ՌԴ)

### Վահագն Ազյան

«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար,

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

### Վարդան Աթոյան

«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., դոցենտ

### Վարդան Հարությունյան

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վարչության նախագահ-գլխավոր տնօրեն, տ.գ.թ.

# 21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Թիվ 2 (66), 2016թ.

## ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

*Գլխավոր խմբագիր*

**Գագիկ Հարությունյան**

*Գլխավոր խմբագրի*

*տեղակալներ*

**Վահագն Ազյան**

**Վարդան Աթոյան**

*Պատասխանատու*

*խմբագիր*

**Խոնարհիկ**

**Քարատուղանյան**

*Պատասխանատու*

*քարտուղար*

**Լուսինե Բաղդասյան**

**Աննա Ժամակոչյան**

**Արեստակես Սիմավորյան**

**Վահրամ Հովյան**

***Արման Նավասարդյան***

Վրաստանի և հարևանների միջև տնտեսական փոխհարաբերությունների զարգացման հեռանկարները ... 4

***Ջոնի Մելիքյան***

Վրաստանի արտաքին քաղաքականությունը և նրա ներքաղաքական չափումը ..... 27

***Ռոման Կարապետյան***

Տարածքային հակամարտությունները և փոխադարձ չեզոքության պահպանման հարցը Հայաստան-Վրաստան երկխոսության օրակարգում ..... 46

***Անուշավան Բարսեղյան***

Ադրբեջանական «փափուկ ուժը» Վրաստանում. ձևավորումը և հիմնական նպատակները ..... 59

***Արմեն Մանվելյան***

Հայաստան-Վրաստան էներգետիկ համագործակցության հարցի շուրջ ..... 73

***Կարեն Վերանյան***

Վրաստանի գիտական ոլորտը. վարկանշային-վիճակագրական համեմատություն ..... 82

***Վահրամ Հովյան***

Հայկական և վրացական համայնքներն արտերկրում. համեմատության եզրեր և համագործակցության հեռանկարներ ..... 96

***Դավիթ Սարգսյան***

Սփյուռքահայ լրատվամիջոցները ՀՀ աշխարհաքաղաքական ընտրության կողմնորոշիչներում ..... 110

***Էդգար Ալեքսանյան***

Համացանցը և քաղաքական կուսակցությունների զարգացման միտումները ..... 119

**ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

***Արման Նավասարդյան՝***

*Բանալի բառեր՝* Վրաստանի հարևան պետությունների աշխարհաքաղաքական և տնտեսական հետաքրքրությունները նրա նկատմամբ:

Մերօրյա աշխարհաքաղաքական գործընթացները չեն շրջանցում նաև Հարավային Կովկասը: Արդյունքում՝ Վրաստանը նույնպես ներգրավվել է տարածքային հակամարտությունների շարքում: Հարավօսական և արևազական հիմնահարցերի ձևավորմամբ խոչընդոտներ են առաջացել Վրաստանի և նրա հարևանների միջև: 2008թ. օգոստոսյան պատերազմը տարածաշրջանում նոր իրավիճակ է ստեղծել, որից շարունակաբար փորձում են օգտվել Թուրքիան և Ադրբեջանը: Մասնավորաբար, նրանք ձգտում են Վրաստանն ակտիվ մասնակից դարձնել թուրք-ադրբեջանական էներգետիկ ծրագրերում՝ մեծացնելով իրենց շահադիտական դերակատարությունը տարածաշրջանում: Հետևաբար, վրաց-ադրբեջանա-թուրքական էներգետիկ հարաբերությունների զարգացմամբ Վրաստանը լրջորեն հայտնվել է այս երկու երկրներից կախվածության մեջ, որից դուրս գալն այնքան էլ դյուրին հարց չէ: Վրաստանում մտավախություն կա, որ Վրաստանի քաղաքացի հանդիսացող ադրբեջանցիների շրջանում կառաջանան անջատողական ձգտումներ, որոնք կարող են խաթարել ոչ միայն երկրի տնտեսական, այլև աշխարհաքաղաքական և ժողովրդագրական կայունության հիմքերը: Այս հիմնախնդիրները վճռելու ամենաիրատեսական տարբերակը Վրաստանը հավանաբար կփնտրի Իրանի Իսլամական Հանրապետության հետ միջպետական հարաբերությունների զուգամիտման ճանապարհին, որն իր հերթին Հարավային Կովկասում իր դիրքերն ամրապնդելու և, ակներևաբար, Թուրքիային ու Ադր-

---

<sup>\*</sup> Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ, Արտակարգ և լիազոր դեսպան:

բեջանին հետին պլանում թողնելու խնդիրներ ունի: Վրաց-իրանական հարաբերությունների զարգացման ճանապարհին Թբիլիսին կաշխատի չհակասել Հարավային Կովկասում առկա Ռուսաստանի հեղինակությանը՝ նրա դարավոր աշխարհաքաղաքական ու տնտեսական նկրտումներով հանդերձ: Հետևաբար, Վրաստանն անպայման փորձելու է նաև կարգավորել ռուս-վրացական հարաբերությունները:

Վրաստանի շուրջ զարգացող վերոնշյալ խմորումներն անմասն չեն թողնի նաև Հայաստանին: Մասնավորաբար, Վրաստանը և Իրանը դեմ չեն երկկողմ էներգետիկ ծրագրերի իրականացմանը՝ դեպի Վրաստան իրանական գազի արտահանման համար որպես տարանցիկ երկիր դարձնելով Հայաստանը: Ավելին, նրանք մտադիր են նաև ձևավորել կայուն և մրցունակ եռակողմ էներգահամակարգ՝ Հայաստանի ներգրավմամբ, որն, անշուշտ, ամուր հիմքերի վրա կդնի Հայաստանը՝ էապես նվազեցնելով թուրք-ադրբեջանական շրջափակման ապակառուցողական ազդեցությունը:

***Վրաստանի զարգացման երաշխիքային հեռանկարը  
Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան  
եռակողմ հարաբերությունների կայունացմամբ***

Հետխորհրդային երկրների շարքում ժողովրդավարության և տնտեսության զարգացման առումով մեծ հաջողություններ է գրանցել նաև Վրաստանը: Անցնելով պատերազմի բովով և ունենալով սահմանափակ քաղաքատնտեսական հնարավորություններ՝ Վրաստանը, այնուհանդերձ, կարողացել է զգալիորեն վերականգնել իր քայքայված տնտեսությունը՝ այդպիսով հետաքրքրություն առաջացնելով արևմտյան ներդրողների համար: Անշուշտ, Վրաստանի տնտեսության բարելավման առաջնային խթաններից մեկն է համարվում փոխշահավետ հարաբերությունների քաղաքականությունն իր հարևանների՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ: Այս իմաստով վրաց-թուրքական հարաբերությունների զարգացմանն էապես նպաստել են նախ և առաջ 2007թ. նրանց միջև ազատ վիզային ռեժիմի հաստատումը և ազատ առևտրի համաձայնագրի կնքումը: Այնուհետև, Թուրքիայի հետ ապրանքաշրջանառությունն ընդլայնվում է արագ տեմպերով՝ իր գագաթնակետին հասնելով արդեն 2012թ.՝ տարեկան \$1,5 մլրդ ցուցանիշով: Նույն տարում Ադրբեջանի հետ այն կազմում է \$1,3 մլրդ [1, pp. 118-120]: 2015թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Վրաստանի թիվ

1 առևտրային գործընկերը շարունակում է մնալ Թուրքիան \$1.108.746.300 ցուցանիշով, որը կազմում է Վրաստանի ամբողջ ապրանքաշրջանառության 15,2%-ը: Ադրբեջանը նորից զիջում է Թուրքիային՝ \$590.713.500 ցուցանիշով՝ Վրաստանի ապրանքաշրջանառության 8,1% մասնաբաժնով:

Թուրքիայի և Ադրբեջանի հետ Վրաստանի տնտեսական և մշակութային հարաբերությունների զարգացմանը պետք է անդրադառնալ առանձնահատուկ դիտարկմամբ: Հարկ է նշել, որ Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի միջտնտեսական հարաբերությունների զարգացմանն ուղղված աշխատանքներն իրականացվում են եռակողմ սկզբունքով: Ասվածի վառ ապացույցն է այն, որ 2007թ. փետրվարի 7-ի համաձայնագրի շրջանակում ադրբեջանա-թուրքական կապիտալի միջոցով նախաձեռնվեց Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու շինարարությունը: Ծրագրի համաձայն՝ պետք է կառուցվեր 29 կմ երկաթգիծ՝ կապելով Ախալքալաքը Թուրքիային: Զուգահեռաբար, նախատեսվում էր նաև վերականգնել 192 կմ երկարությամբ երկաթուղային այլ հատվածներ: Նախագծային փուլում է գտնվում նաև Նախիջևան-Կարս երկաթուղու կառուցման ծրագիրը, որը նպատակ է հետապնդում վերացնել ադրբեջանական էքսկլավի տնտեսական շրջափակումը:

Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու ուղևորափոխադրողականության տարեկան ցուցանիշն էլ միտում ունի հասնելու 1 մլն-ից մինչև 3 մլն-ի, իսկ բեռնափոխադրողականությունը՝ 3 մլն-ից մինչև 16 մլն տոննայի [2, pp. 163-164]: Այնպես որ, Ասիան Եվրոպային կապելու հեռանկարով վերոնշյալ երկաթուղին բավականաչափ խոստումնային է՝ որպես ռուսական տրանսսիբիրյան երկաթուղու այլընտրանք: Հետևաբար, Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին իրականում նպատակ ունի մեղմել ռուսական երկաթուղային մոնոպոլիայի գերազդեցությունը: Ի հավաստումն այս տրամաբանության, բավական է հավելել նաև Ախալքալաքի շրջանում կառուցվող Հարավային Կովկասի, թերևս, ամենամեծ առևտրային կենտրոնի փաստը, որը նույնպես կնպաստի թուրքական կապիտալի հոսքին դեպի Վրաստան, իսկ ավելի ստույգ՝ հայաբնակ Մամցխե-Ջավախքի շրջան [1, p. 119]:

Մոտ ապագայում Թուրքիան ցանկանում է ավելացնել Վրաստանով անցնող էներգակիրների ծավալները, մասնավորաբար, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի թողունակությունը՝ տարեկան 25 մլրդ մ<sup>3</sup>-ից մինչև 60 մլրդ մ<sup>3</sup>-ի: Եվ ընդհանրապես, Վրաստանի տարածքով անցնող գազատարները

շատ շուտով նախատեսում են կապել նաև ՏՄՊ ծրագրի հետ [3, p. 16]:

2008թ. վրաց-ռուսական օգոստոսյան պատերազմը թեև իսաթարեց Վրաստանի տնտեսության հիմքերը, այնուամենայնիվ, նպաստեց նաև վրաց-ադրբեջանական և վրաց-թուրքական հարաբերությունների դինամիկ զարգացմանը: Արդյունքում՝ ադրբեջանական *SOCAR*-ը հնարավորություն ստացավ ազատորեն ընդլայնել իր գործունեությունը Վրաստանում: Մինչ այդ, այն ամբողջ Վրաստանի տարածքում ուներ ընդամենը 22 փոքր կազմակերպություն՝ 30 գազաբաշխիչ ցանցերով: 2012թ. նոյեմբերին *SOCAR*-ը ձեռք է բերում «Իտերա-Ջորջիա» կազմակերպությունը, որը տարեկան 300 մլն մ<sup>3</sup> գազ էր մատակարարում Վրաստանում գործող հարյուր ձեռնարկության: Բացառություն էր կազմում միայն Թբիլիսին, որտեղ 2005-ից, երբ «ԹբիլԳազ» ընկերությունը սնանկ ճանաչվեց, գազի գլխավոր մատակարարն էր դազախական «ԿազՏրանսԳազ» ընկերությունը: Ի վերջո, վերջին 5 տարիներին ադրբեջանական ներդրումները Վրաստանի տնտեսության մեջ աճեցին ավելի քան \$800 մլն-ով՝ անցնելով \$3 մլրդ-ի սահմանագիծը՝ հաշվի առնելով նաև Բաքու-Թբիլիսի-Էրզրում, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և Բաքու-Թբիլիսի-Կարս նախագծերում Ադրբեջանի մասնակի ֆինանսավորումները:

Ներկայումս Վրաստանում ադրբեջանական շուրջ 300 ընկերություն է գործում և վրացական 150 ընկերություն՝ Ադրբեջանում: Առանձնակի ուշադրության է արժանի *SOCAR*, ԱԶԱԼ, Փաշաբանկ, Էմբավոդ, Ադրբեջանի Միջազգային բանկ և այլ կազմակերպությունների գործունեությունը Վրաստանում: Ընդհանրապես, *SOCAR*-ը համարվում է Վրաստանի ամենամեծ հարկատուն: Այն ներդրումներ է կատարում Վրաստանում նաև բարեգործական ծրագրերի իրականացման նպատակով: 2006-2012թթ. *SOCAR*-ը կրթական, շինարարական և այլ բարեգործական ծրագրերի համար Վրաստանում ծախսել է շուրջ \$21 մլն և ապահովել մոտ 7000 աշխատատեղ [2, pp. 162-167]:

Ադրբեջանն ակտիվորեն ներդրումներ է կատարում նաև վրացական ուսումնական հաստատություններում: Ուշադրության է արժանի հատկապես Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի Կովկասագիտության ամբիոնի ֆինանսավորման իրողությունը՝ անմիջապես «Հեյդար Ալիև» հիմնադրամի կողմից<sup>1</sup>:

<sup>1</sup> *Naila Mammadova*, Heydar Aliyev Foundation: activities in the spheres of science and education, 24.06.2014 (<http://a-r.az/en/node/5292#.Vsyc5fl97Z4>)

2013թ. մարտի 18-ին Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիայի Բաքու կատարած այցի ժամանակ որոշվեց բարձրացնել երկկողմ համագործակցության արդյունավետությունը նաև ռազմական արդյունաբերության ոլորտում: Իմիջիայլոց, 2009թ. Ադրբեջանը դիմել էր Վրաստանի կառավարությանը, որպեսզի վերջինս արգելի Թբիլիսիի ռուսական ռազմարդյունաբերական տանկերի վերանորոգման աշխատանքները [2, p. 170]:

Բացի Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի միջև առկա եռակողմ համագործակցությունից՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի, Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծի, շինարարական փուլում գտնվող ՏԱՊ գազատարի և այլ նախագծերի իրականացումից, արդեն կյանքի է կոչվում նաև եռակողմ համագործակցությունն Ադրբեջանի, Ռումինիայի և Վրաստանի միջև, համաձայն որի՝ ադրբեջանական գազը պետք է Սև ծովի վրացական նավահանգիստներից մեկում հեղուկացվի և լցանավերի միջոցով տեղափոխվի Ռումինիա: Այստեղ այն նորից պետք է փոխարկվի գազային վիճակի և արտահանվի Ռումինիայի հարևան երկրներ: Ինչ խոսք, եվրոպական շուկան կասայան գազով գրավելու ծրագիրն ինչքան էլ որ անիրատեսական և զավեշտալի թվա, այնուամենայնիվ, ըստ *SOCAR*-ի՝ հնարավոր կլինի իրականացնել ծովափնյա Կուլնի նավթային տերմինալը վերազինելու և Ռումինիայում նմանատիպ ենթակառուցվածքներ հիմնելու միջոցով [2, pp. 162-163]:

Օգոստոսյան պատերազմը և վրաց-ադրբեջանական հարաբերությունների խորացումն արագ նպաստեցին նաև Թուրքիայի դերակատարության ամրապնդմանը Վրաստանում: Ստեղծելով «Կովկասի կայունության և համագործակցության հարթակ» կազմակերպությունը՝ Անկարան օգնություն ցուցաբերելու պատրաստակամություն հայտնեց կովկասյան հակամարտությունների լուծման տարբերակների առաջադրմամբ, ինչպես նաև վրաց-ադրբեջանական տնտեսական ծրագրերին անմիջական մասնակցությամբ: Թուրք-վրացական հարաբերությունների ակտիվացմանը նպաստեցին Թուրքիայի ՆԱՏՕ անդամ լինելը, Վրաստանի ցանկությունն՝ անդամակցել այդ կառույցին [3, p. 17], ինչն առավել պարզորոշ է դարձնում ՆԱՏՕ ռազմական համագործակցության շրջանակներում Վրաստանի Իմերեթի շրջանում գտնվող «Մաչխերի» ռազմաբազայում թուրքական և վրացական զորքերի միջև պարբերաբար իրականացվող համատեղ ռազմական զորավարությունների



իմաստը<sup>1</sup>: Թուրքական ֆինանսավորմամբ է գործում նաև ադրբեջանաբնակ Մառնեուլի ենթաշրջանի ավիաբազան<sup>2</sup>:

Ինչպես տեսնում ենք, Թուրքիայի դերը Կովկասում զգալիորեն աճել է, թեև սիրիական վերջին իրադարձություններից հետո, բախվելով ռուսական արգելապատնեշին, այլևս արագ ընդարձակվելու նախանշաններ չի ցուցաբերում:

Ադրբեջանը, Թուրքիան և Վրաստանը փորձում են նաև համատեղ ռազմական ծրագրեր մշակել էներգետիկ ենթակառուցվածքների պահպանման նպատակով: 2012թ. նոյեմբերին նրանք միասնաբար իրականացրին «Կովկասյան բազե 2012» գորավարժությունը: Ինչ խոսք, Ադրբեջանի և Թուրքիայի ձգտումները միանման են: Նրանք փորձում են իրենց ռազմական ներկայությունն ամրապնդել Վրաստանի ամբողջ տարածքում, որի վառ ապացույցը եղավ այն, որ 2014թ. Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի արտգործնախարարները հանդիպեցին Նախիջևանում, և արդյունքում՝ ստորագրվեց արագ արձագանքման համատեղ խումբ ստեղծելու մասին փաստաթուղթ: Նախատեսվող ռազմական խմբի կազմավորմամբ առաջ քաշվեց էներգետիկ ենթակառուցվածքների անվտանգության ապահովման հիմնահարցը, ինչը Վրաստանն առավել կախվածության մեջ կդնեի Թուրքիայից և Ադրբեջանից: Սակայն այս ծրագրի իրագործումը ձգձգվում է, որի պատճառը Մերձավոր Արևելքում տեղի ունեցող իրադարձություններն են: Թուրքիան զբաղված է ինչպես մերձավորարևելյան, այնպես էլ քրդական հարցերով: Հետևաբար, ի գործու չէ ներկայումս իրականացնել նման ռազմավարական նշանակության ծրագրեր<sup>3</sup>:

### ***Խոչընդոտներ վրաց-ադրբեջանական և վրաց-թուրքական հարաբերություններում***

Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերությունների զարգացմանը համընթաց՝ Վրաստանին անհանգստություն է պատճառում այն հանգամանքը, որ

<sup>1</sup> Georgia-Turkey-Azerbaijan Defence Ministers meet in Tbilisi, 02.04.2015 (<http://agenda.ge/news/32663/eng>)

<sup>2</sup> Марнеульская авиабаза, история взлетов и падений, 28 февраля, 2013 год (<http://springator.livejournal.com/91372.html>)

<sup>3</sup> Turkish Military Cooperation Prompts Russian Military Moves in the Caucasus, 11 July 2015 (<https://www.stratfor.com/analysis/turkish-military-cooperation-prompts-russian-military-moves-caucasus>)

Թուրքիան տնտեսական կապեր է հաստատում և կայունացնում հարաբերություններն Աբխազիայի հետ: Բավական է նշել, որ աբխազական ապրանքների արտահանումների 45%-ը և ներկրումների 60%-ը կապված են բացառապես Թուրքիայի հետ: 2010-2013թթ. թուրքական պատվիրակությունը՝ Վրաստանում Թուրքիայի դեսպանի ներկայությամբ, պարբերաբար այցելություններ է կատարել Սուխում՝ Թուրքիայի և Աբխազիայի միջև տնտեսական կապերի ընդլայնման նպատակով: Միաժամանակ, Թուրքիայում աբխազական համայնքի նկատմամբ տարեցտարի մեծանում է բարյացակամ վերաբերմունքը: Հարկ է նշել նաև, որ թուրքական իշխանությունները նպատակ ունեն պահպանել իրենց ամուր կապերն ինչպես իսլամ դավանող աբխազների, այնպես էլ նախկինում Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում ապրող մեսխեթցի թուրքերի հետ [3, p. 18]:

Վրացական կողմին լրջորեն մտահոգում է նաև Թուրքիայի տնտեսական զգալի ազդեցությունն Աջարիայում:

2014թ. մարդահամարի տվյալներով՝ Աջարիայի բնակչությունը կազմել է 336.077 մարդ<sup>1</sup>, որի 30%-ը՝ ավելի քան 100.000-ը, համարվում է մուսուլման: Վերջիններս բավական խիտ են բնակեցված Աջարիայի բարձրադիր, մարզինալացված շրջաններում, հատկապես Սամցխե-Ջավախքի սահմանին գտնվող Խուլոյի շրջանում: Իսլամի ամուր դիրքերը նկատելի են նաև Շուախևի և Քեդա շրջաններում:

Աջարիայի մուսուլման բնակչության մի մասը բնակություն է հաստատել երկրի հարևանությամբ գտնվող Գուրիայում և Սամցխե-Ջավախքում: Այս շրջաններում, մուսուլմանների տեղափոխության արդյունքում առավել արդիական է դարձել քրիստոնեական բնակավայրերին կից իսլամական հաստատությունների կառուցման հիմնահարցը, ինչը բողոքի ալիք է բարձրացնում ինչպես Աջարիայում, այնպես էլ Աջարիային կից շրջաններում: 2012թ. նոյեմբերին Աջարիայից ոչ շատ հեռու գտնվող Աջկուրիա շրջանի Նիզվազիանի գյուղում բնակիչները բողոքի ակցիա էին կազմակերպել գյուղի տներից մեկի շուրջ՝ Աջարիայից տեղափոխվածների համար մզկիթի վերակառուցման դեմ: Նմանատիպ դեպք տեղի էր ունեցել 2014թ. հուլիսին, երբ

<sup>1</sup> Preliminary Results of 2014 General Population Census of Georgia ([http://www.geostat.ge/cms/site\\_images/\\_files/english/population/According%20to%20preliminary%20results%20of%20the%202014%20population%20census%20](http://www.geostat.ge/cms/site_images/_files/english/population/According%20to%20preliminary%20results%20of%20the%202014%20population%20census%20))

Սամցիե-Չավախքի շրջանի Չելա գյուղում քրիստոնյա բնակչությունն ընդդիմացավ Աջարիայից եկած վերաբնակների կողմից գյուղի մզկիթին կից մինարեի կառուցմանը: Հետագայում Վրաստանի կառավարության կողմից խնդիր դրվեց ապամոնտաժել Չելայի մինարեն: Այս առումով, վրացական իշխանությունները որևէ լուրջ բացատրություն չտվեցին, բայց միայն պարզորոշ դարձրին այն, որ Իվանիշվիլու կառավարությունը փորձում էր Վրաստանում նվազեցնել իսլամի դերը: Այս իրադարձությունները Վրաստանի նախկին նախագահ Միխայիլ Սաակաշվիլին որակեց որպես Բիձինա Իվանիշվիլու ղեկավարության անզգույշ քաղաքականության հետևանք՝ հավելելով, որ նման մոտեցումները կարող են սրել Վրաստանում ապրող հարյուր հազարավոր մուսուլմանների հարաբերությունները քրիստոնյաների հետ:

Աջարիայում կրոնական կրթերը բորբոքվեցին հատկապես 2014թ. օգոստոսին, երբ Աջարիայի ծովափնյա հանգստավայրերից մեկում՝ Քոբուլեթիում, իսլամական դպրոցների բացման դեմ պայքարող բնակչությունը բողոքի շարժում անցկացրեց՝ պահանջելով դադարեցնել դրանց կառուցման աշխատանքները: Այս քայլի դեմ ուղղված մուսուլմանների պատասխանը շատ չուշացավ: Վրաստանի մուսուլմանների կազմակերպության ղեկավար Ջեմալ Պակասաձեն հայտարարեց, որ նմանատիպ շարժումները Վրաստանի քաղաքացիների կրոնական համոզմունքները վիրավորելու, ինչպես նաև անդաստիարակ պահվածքի դրսևորումներ են: Նա դիմեց Վրաստանի վարչապետին՝ խնդրելով գործի դնել բոլոր միջոցները տարածաշրջանում նման գործողությունները դադարեցնելու և իրավիճակի սրումը կանխելու նպատակով: Աջարիայի ինքնավարության ղեկավար Արչիլ Խաբաձեն նույնպես վերոնշյալ անհամաձայնությունները որակեց որպես վիրավորանք՝ կոչ անել Վրաստանի իշխանություններին մանրագնին հետաքննել պատահարը: Այնուհանդերձ, քրիստոնեադավան Արչիլ Խաբանաձեի նման խնդրանքները լուրջ չեն ընկալվում և քննադատություններից զերծ չեն մնում, քանի դեռ նա չի իրականացրել Աջարիայի մուսուլմանների երկու հիմնական պահանջները՝ Բաթումում ԽՍՀՄ շրջանում այրված Ազիզի մզկիթի վերակառուցումն ու վերաբացումը և մզկիթներին կից մադրասաների կառուցումը:

Աջարիայում առկա իսլամադավան բնակչությունը պարարտ հող է ստեղծում ինքնավարության տարածքում Թուրքիայի դերի մեծացման համար: Թուրքիայի ազդեցությունն Աջարիայում հատկապես ակնհայտ է դարձել

ԽՍՀՄ փլուզումից հետո: Հատկանշական է, որ 1921թ. Կարսի պայմանագրով Թուրքիան որոշակի արտոնություններ ստացավ Բաթումի նկատմամբ: Ըստ այդ պայմանագրի, Թուրքիան կարող էր գորք մտցնել Բաթում, եթե այնտեղ լարված իրավիճակ ստեղծվեր: Կարսի պայմանագրի դրույթները վերահաստատվել են նաև 1992թ. Էդուարդ Շևարդնաձեի և Թուրքիայի այն ժամանակվա նախագահ Թուրգութ Օզալի միջև կնքված համաձայնագրի արդյունքում:

Աջարիայի տնտեսության մեջ միլիոնավոր դուլարների ներդրումներից բացի, Թուրքիան ֆինանսավորում է նաև մի շարք կրթական և մշակութային ծրագրեր, որոնց միջոցով Աջարիայի երիտասարդ բնակչությունը հնարավորություն է ստանում կրթությունը շարունակել Թուրքիայում, ինչպես նաև վերականգնվում և կառուցվում են մզկիթներ և մադրասաներ: 2010թ. Բաթումի Նիկո Բերձենիշվիլի համալսարանի կողմից անցակացված հետազոտությունների համաձայն՝ պարզ է դարձել, որ Աջարիայում գործում են 184 իսլամական կառույցներ՝ 119 մզկիթ (51-ին կից գործում են մադրասաներ), 22 սեսիոնալ մզկիթ, 19 մադրասա, 15 աղոթքի տուն, 8 գիշերօթիկ դպրոց-մադրասա և մեկ աղոթքի տուն մադրասա: Ըստ Խուլոյի շրջանային ղեկավարի, այդ կրթական հաստատություններում աշակերտները սովորում են իսլամ օրական մեկ և կես ժամ: Վերոնշյալ հաստատությունները ֆինանսական աջակցություն են ստանում նաև Թուրքիայից: Վերջինս պարտավորվել է նաև վերականգնել իր տարածքում գտնվող վրացական հուշարձանները: Վրաստանն էլ իր հերթին պետք է թույլ տա, որ իր տարածքում երեք նոր մզկիթ կառուցվի, որոնցից մեկը պետք է հիմնվի Բաթումում՝ Ազիզի մզկիթի ավերակների վրա: Այնուամենայնիվ, Թուրքիայի նմանատիպ պահանջները բացասաբար են ընդունվում ոչ միայն վրացական հասարակության, այլև Վրաստանի խորհրդարանի կողմից: «Վրացական երազանք» կոալիցիայի ներկայացուցիչ Մուրման Դումբաձեն, դեմ արտահայտվելով Աջարիայում նոր մզկիթի կառուցմանը, պնդել է, որ Թուրքիան պետք է վերականգնի իր տարածքում վրացական հուշարձաններն առանց որևէ ակնկալիքների<sup>1</sup>:

Ընդհանրապես, Վրաստանի բնակչության մոտ 10%-ը համարվում է իսլամադավան: Նրանց մեծամասնությունը թյուրքական ծագմամբ մուսուլմաններ են, որոնց թիվն անցնում է 280. 000-ից: Նրանք հիմնականում բնակ-

<sup>1</sup> Islam and Religious Transformation in Adjara, European Center for Minority Issues, Thomas Liles, 12 February 2015 ([http://www.ecmi.de/uploads/tx\\_lfpubdb/Working\\_Paper\\_57\\_En.pdf](http://www.ecmi.de/uploads/tx_lfpubdb/Working_Paper_57_En.pdf))

վում են Քվեմո Քարթլիի շրջանի Բոլնիսի, Մառնեուլի և Դմանիսի ենթա-շրջաններում: Քվեմո Քարթլիում թյուրքական ծագմամբ բնակիչների կամ ադրբեջանցիների թիվը հասնում է մոտ 225.000-ի՝ կազմելով շրջանի բնակչության ավելի քան 45%-ը<sup>1</sup>: Այստեղ կրոնական և մշակութային մեծ ազդեցություն ունի նաև Ադրբեջանը: Քվեմո Քարթլիում ակտիվ գործում է «Հեյդար Ալիև» հիմնադրամը, որը մեծ ներդրումներ է կատարում հատկապես կրթական ոլորտում: Ադրբեջանի իշխանությունները նյութական օգնություն են ցուցաբերում առավելաբար Վրաստանի ադրբեջանական դպրոցներին<sup>2</sup>: Ադրբեջանից ստացվող ֆինանսավորմամբ ստեղծվում են ադրբեջանական հասարակական կազմակերպություններ, որոնցից են «Վրաստանի ադրբեջանցիների կոնգրեսը» և «Վրաստանն իմ հայրենիքն է» կազմակերպությունները, որոնք պարբերաբար բարձրացնում են Վրաստանում ադրբեջաններին որպես երկրորդ պետական լեզու ընդունելու հարցը<sup>3</sup>:

Ի դեպ, Վրաստանի տնտեսության և մշակույթի ոլորտներում կատարված ներդրումներն Ադրբեջանին և Թուրքիային թույլ են տալիս որոշակի պահանջներ ներկայացնել վրացական կառավարությանը: Ադրբեջանը հաճախ է ակնարկում այն մասին, որ Մառնեուլում պետք է բացել ադրբեջանական հյուպատոսություն, ինչը վրացական իշխանությունները պարզապես անտեսում են<sup>4</sup>: Ադրբեջանը և Թուրքիան բարձրացնում են նաև մեսիսթեցի թուրքերի վերադարձի հարցը, որոնք տասնյակ հազարներով աքսորվել էին Վրաստանից Միջին Ասիա դեռևս 1944թ: Այս հարցի շուրջ վրացական որոշ աղբյուրներ խոսում են ամենայն զգուշավորությամբ ու մտահոգությամբ՝ մեկնաբանելով, որ մեսիսթեցի թուրքերն իրականում հեռահար նպատակներ են փայփայում Վրաստանում ինքնավարություն ձեռք բերելու համար: 1980-ականներին Ուզբեկստանում տեղի ունեցած բռնաճնշումներից հետո վերադառնալով Կովկաս՝ մեսիսթեցի թուրքերի մի զգալի մասը բնակություն է հաստատել Ադրբեջանում: Այստեղ նրանց թիվն այսօր անցնում է 60.000-ից,

<sup>1</sup> Georgia's Muslim Community: A Self-fulfilling Prophecy? Section 1, The Situation: Islam Amongst Georgia's Non-Georgian Muslims ([http://www.ecmi.de/uploads/tx\\_lfpubdb/Working\\_Paper\\_58\\_En.pdf](http://www.ecmi.de/uploads/tx_lfpubdb/Working_Paper_58_En.pdf))

<sup>2</sup> New Schools opened in Georgia on the Initiative of The Heydar Aliyev Foundation (<http://www.heydaraliyev-foundation.org/en/content/view/56/582/New-schools-opened-in-Georgia-on-the-initiative-of-the-Heydar-Aliyev-Foundation>)

<sup>3</sup> Азербайджанский язык получит статус государственного в Грузии ([http://www.armtoday.info/default.asp?Lang=\\_Ru&NewsID=8109&SectionID=0&RegionID=0&Date=08/12/2009&PagePosition=92](http://www.armtoday.info/default.asp?Lang=_Ru&NewsID=8109&SectionID=0&RegionID=0&Date=08/12/2009&PagePosition=92))

<sup>4</sup> В грузинском городе Марнеули откроется консульство Азербайджана, 10.01.2008 (<http://news.day.az/georgia/103703.html>)

որոնցից շատերն ունեն Ադրբեջանի քաղաքացիություն: Մեսխեթցի թուրքերը հակված են վերադառնալ Սամցխե-Ջավախքի շրջանում գտնվող իրենց նախկին բնակավայրեր<sup>1</sup>, ինչը կարող է հիմք հանդիսանալ արհեստական կամրջի ստեղծման, որը վրացական Քվեմո Քարթլի և Սամցխե-Ջավախքի շրջաններով Թուրքիան կմիացնի Ադրբեջանին:

Այնպես որ, Թուրքիայի և Ադրբեջանի պարբերաբար հնչեցվող պահանջները վրացական գրեթե բոլոր հարթակներում առաջացնում են հակաթուրքական և հակաադրբեջանական տրամադրություններ: Մասնավորաբար, «Հայրենասերների այլանս» կուսակցությունը, որը նպատակ ունի հաջողության հասնել 2016թ. Վրաստանի խորհրդարանական ընտրություններում, պնդում է, որ Թուրքիան երբեք չի՝ եղել և չի՝ լինելու բարեկամ երկիր Վրաստանի համար [3, p. 18]: Վրացական կառավարությունն էլ իր հերթին է գիտակցում, որ թուրք-ադրբեջանական պահանջատիրական մոտեցումներից խուսափելու, ինչպես նաև այդ երկրներից Վրաստանի կախվածությունը նվազեցնելու համար հարկավոր է դիվերսիֆիկացնել երկրի տնտեսությունը: Հետևաբար, վրացական կառավարությունը ձգտում է այլ ներդրողներ գտնել երկրի տնտեսության զարգացման համար: Այս հարցում որպես լավագույն տարբերակ է նախանշվում Իրանի Իսլամական Հանրապետությունը:

### ***Վրաց-իրանական հարաբերությունների զարգացման հեռանկարները***

Իրանի Իսլամական Հանրապետության նկատմամբ միջազգային պատժամիջոցների վերացումից հետո Վրաստանի արտաքին քաղաքականության կարևոր խնդիրներից մեկն է դարձել վրաց-իրանական համագործակցության զարգացումը: ԽՍՀՄ փլուզումից հետո, ավելի քան քսան տարվա ընթացքում, վրաց-իրանական հարաբերությունները շատ սահմանափակ են եղել, թեպետ թե՛ Վրաստանը և թե՛ Իրանը բնավ չեն թաքցրել իրենց մտադրությունները երկու երկրների փոխհարաբերությունների զարգացման հարցում: Իհարկե, Իրանում դեռ թարմ են Կովկասում գերիշխող դիրք ունենալու երբեմնի նկրտումները: Տարածաշրջանում Թուրքիայի ազդեցության մեծացումն էլ կարող է լուրջ խնդիրներ առաջացնել Իրանի հասկապես հյուսիս-

<sup>1</sup> Population Transfer: The Tragedy of the Meskhetian Turks (<https://www.culturalsurvival.org/ourpublications/csq/article/population-transfer-the-tragedy-meskhetian-turks>)

արևմտյան շրջաններում, որոնք բնակեցված են հիմնականում թյուրքալեզու բնակչությամբ: Հետևաբար, Իրանը մշտապես ձգտելու է իր հարաբերությունների մերձեցմանը ոչ միայն Հայաստանի, այլև Վրաստանի հետ:

Վրաստանի համար Իրանը դիտարկվում է որպես կայուն և հուսալի գործընկեր՝ իր բնական պաշարների առատությամբ հանդերձ: Թեև, նախքան Իրանի նկատմամբ պատժամիջոցների վերացումը, Վրաստանը տարակուսանք էր հայտնում վրաց-իրանական հարաբերությունների զարգացման վերաբերյալ, ինչը կարող էր հակասել Վրաստան-ՆԱՏՕ և Վրաստան-Եվրամիություն հարաբերություններին: Ներկայումս Վրաստանի համար բացվում են հսկայական հնարավորություններ Իրանից անխաջրածնային վառելիքների ներկրման, էներգետիկ ենթակառուցվածքների զարգացման և ընդհանրապես, իրանական հսկայական կապիտալի ներհոսքի հաշվին երկրի տնտեսության աննախադեպ զարգացման համար: Սա նշանակում է ձերբազատում ոչ միայն ադրբեջանական *SOCAR* ընկերության մոնոպոլիայից, այլև թուրք-ադրբեջանական բազմաթիվ ընկերությունների ազդեցությունից և նրանց պահանջատիրական հիմնախնդիրներից:

Իրանը կարևորում է իր ներկայությունը Վրաստանում հետևյալ պատճառներով.

1. Իրանը դեմ է ԱՄՆ, ՆԱՏՕ և Իսրայելի դիրքերի ամրացմանը Վրաստանում և Հարավային Կովկասում,
2. Իրանի համար ցանկալի չէ իր երկիրը շրջանցող էներգետիկ ենթակառուցվածքների զարգացումը,
3. Իրանը նպատակ ունի Վրաստանով դուրս գալ Սև ծով և Եվրոպա,
4. Իրանը ձգտում է ամուր կապեր ունենալ Վրաստանի հետ, որպեսզի նվազեցնի Թուրքիայի և Ադրբեջանի ազդեցությունը տարածաշրջանում,
5. Իրանի համար Վրաստանը կարող է ֆորպոստ դառնալ ՆԱՏՕ-ի և այլոց կողմից իր դեմ ռազմական գործողությունների իրականացման դեպքերում [4, pp. 128-135]:

Ի դեպ, մինչև Իրանի նկատմամբ պատժամիջոցների վերացումը, Իրանի և Վրաստանի արտգործնախարարները հանդիպել են 2012 և 2013թթ. ՄԱԿ ստրասբուրգյան գրասենյակում: Արդյունքում՝ կազմվել են խորհրդարանական բարեկամության խմբեր, երկկողմ առևտրային պալատներ և միջազգա-

յին փոխադրումների հարցերով համատեղ հանձնաժողովներ: Իրանի Իսլամական Հանրապետության արտգործնախարարի տեղակալ Էբրահիմ Ռահիմպուրը 2013թ. նոյեմբերին և 2014թ. մարտին պաշտոնական այցով մեկնել է Թբիլիսի, որտեղ ներկա է գտնվել Վրաստանի նախագահի երդման արարողությանը: Նա նաև հանդիպումներ է ունեցել Վրաստանի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների հետ՝ քննարկելով էներգետիկ և մշակութային երկկողմ հարաբերությունների կայացման խնդիրներ: Հաջորդիվ՝ 2015թ. հունվարին, Վրաստանի խորհրդարանի ղեկավար Դավիթ Ուսուպաշվիլին է այցելել Իրանի Իսլամական Հանրապետություն՝ հանդիպելով ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանիի, մեջլիսի ղեկավար Ալի Արդաշիր Ամոլի Լարիջանիի, ԻԻՀ արտահանումների խորհրդի ղեկավար և ԻԻՀ նախկին նախագահ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի, ԻԻՀ ազգային անվտանգության քարտուղար Ալի Շարնխանիի և այլ բարձրաստիճան անձանց հետ: Նույն թվականի մայիսին տեղի ունեցավ վրաց-իրանական տնտեսական խորհրդի հանդիպում Թեհրանում, որտեղ ստորագրվեց տնտեսական և մշակութային ոլորտներում համագործակցության զարգացման հուշագիր: Կարևորվեց երկկողմ ապրանքաշրջանառության աճը, որն արդեն 2014թ. հասել էր \$200 մլն-ի: Նշվեց նաև, որ Վրաստանի եվրահիստեգրումը կարող է էապես նպաստել Վրաստանում իրանական ներդրումների և առևտրային փոխհարաբերությունների վերելքին, որի համար ներկայացվեցին բավական հուսադրող փաստարկներ. Վրաստան-ԵՄ ասոցացման համաձայնագրի համաձայն՝ վրացական արտադրատեսակների մուտքը ԵՄ երկրներ պետք է ավելանա 12%-ով, և առևտրային բարեփոխումների արդյունքում՝ Վրաստանի ՀՆԱ-ն՝ 4,3%-ով: Վրացական ապրանքներն էլ կարտահանվեն Եվրոպա առանց խոչընդոտների և մաքսային տուրքերի: Նման արտոնյալ պայմաններում հայտնվելով՝ Վրաստանը ձեռք կբերի շահեկան կարգավիճակ՝ արտասահմանյան և, մասնավորաբար, իրանական կապիտալի հոսքերի նվաճմամբ<sup>1</sup>:

2015թ. դեկտեմբերի 23-ին Հայաստանի, Վրաստանի և Իրանի էներգետիկայի նախարարները, ինչպես նաև ռուսական «Ռոսսետի» ընկերության գործադիր տնօրենը, Երևանում ստորագրեցին էներգետիկ ոլորտում համագործակցության հուշագիր: Ըստ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի՝ 2018թ. կշահագործվեն 400-500 կվտ հզորությամբ էլեկտրահա-

<sup>1</sup> An Envoy's Note, Georgia and Iran are in close relations for centuries, (<http://mfa.gov.ge>)



ղորդման գծեր Հայաստանի և Վրաստանի, ինչպես նաև Հայաստանի և Իրանի միջև:

Համաձայն Վրաստանի էներգետիկայի նախարար և փոխվարչապետ Կախա Քալաձեի հայտարարության՝ Վրաստանը գարնանն ու ամռանն ունենում է էլեկտրաէներգիայի ավելցուկ, իսկ ձմռանը նկատվում է հակառակ երևույթը: Ուստի, էլեկտրաէներգիայի ներկրման հարցում Վրաստանին կարող է օգնել նաև Իրանը: Այնուհանդերձ, վրացական կողմն իր մտահոգությունն է հայտնում առ այն, որ էլեկտրաէներգիայի փոխանակման ծրագրի իրականացման հարցում խոչընդոտ կարող է հանդիսանալ Ռուսաստանը: Ըստ 2015թ. օգոստոսյան հայ-ռուսական համաձայնագրի՝ Հայաստանն Իրանին և Վրաստանին միավորող էլեկտրահաղորդման գծերը պետք է շահագործվեն ռուսական ընկերության կողմից: 2013թ. դեկտեմբերի հայ-ռուսական մեկ այլ պայմանագրի համաձայն՝ ռուսական «Գազպրոմ» ընկերությունը 30 տարիների ընթացքում ներկրման մենաշնորհի իրավունք է ստացել ՀՀ տարածքում: Հետևաբար, Հայաստանի համար դյուրին չի լինելու Վրաստանի և Իրանի հետ էներգետիկ համագործակցությունը, քանի որ այս առումով առաջնային պետք է համարվի Ռուսաստանի հետ փոխհամաձայնության փաստը:

Վրաստանին հետաքրքրում է նաև Պարսից ծոցից մինչև Սև ծով բեռնափոխադրումների իրականացման հարցը՝ Իրան-Հայաստան-Վրաստան կամ Իրան-Ադրբեջան-Վրաստան ուղղություններով, ինչպես նաև առավել շահութաբեր համարվող իրանական գազի ներկրումը, որի համար, թերևս, ամենակարճ ուղին Հայաստանն է<sup>1</sup>:

Վրաստանը ձգտում է նաև Ռուսաստանի հետ էներգետիկ համագործակցության մասնակի վերականգնման՝ գիտակցելով, որ էներգետիկ կախվածությունը մեկ երկրից, տվյալ դեպքում՝ Ադրբեջանից, կայուն տնտեսական հեռանկարի երաշխիք համարվել չի կարող: Ռուսաստանի հետ էներգետիկ մերձեցմանը կարող է նպաստել ռուսական «Գազպրոմ» ընկերության բաժնետեր Բիձինա Իվանիշվիլու հեղինակությունը: Շատ է խոսվում նաև այն մասին, որ Հայաստան արտահանվող ռուսական գազը կարող է տրամադրվել Վրաստանին, իսկ Հայաստանը կներկրի իրանական գազ: Ռուսական կողմն էլ իր հերթին փորձում է ավելի մեծացնել Վրաստանի էներգե-

<sup>1</sup> Armenia, Georgia, Iran and Russia Plan to Expand Energy Cooperation, 04.01.2016, by Armen Grigoryan, ([http://www.jamestown.org/single/?tx\\_ttnews%5Btt\\_news%5D=44939&no\\_cache=1#.Vsynr\\_197Z5](http://www.jamestown.org/single/?tx_ttnews%5Btt_news%5D=44939&no_cache=1#.Vsynr_197Z5))

տիկ կախվածությունը՝ պնդելով, որ Հայաստան արտահանվող գազի 10%-ի (200 մլն մ<sup>3</sup>) փոխարեն Վրաստանը գումար կստանա<sup>1</sup>:

Հարկ է նշել, որ վրաց-իրանական համագործակցության նոր փուլը մեկնարկել է առավելաբար 2011թ., երբ Վրաստանը ոչ վիզային ռեժիմ սահմանեց ԻԻՀ քաղաքացիների համար՝ հնարավորություն տալով վերջիններիս մնալ Վրաստանի տարածքում մինչև 45 օր: Արդյունքում՝ գրանցվեց իրանական ներդրումների աննախադեպ աճ: Վրաստանում իրանցի գործարարների թիվը կտրուկ ավելացավ՝ 84-ից հասնելով 1489-ի: Իրանա-վրացական բիզնես կապերի զարգացման կենտրոնի ղեկավար Մահմուդ Դավարին էլ նշեց, որ իրանցիները Վրաստանն ընդունում են որպես ապահով երկիր ներդրումներ կատարելու համար<sup>2</sup>:

Բարիդրացիական և շահավետ համագործակցության միտումն առավել ակնառու դարձավ հատկապես 2016թ. սկզբին, երբ իրանա-վրացական փոխադարձ ոչ վիզային ռեժիմն առավել քան դյուրինացավ՝ ժամկետների սահմանափակումների բացառմամբ:

Թվում է, թե վրաց-իրանական հարաբերությունների զարգացմանն այլևս ոչ ոք խոչընդոտել չի կարող: Այնուհանդերձ, ինչքան էլ Վրաստանը ճկուն քաղաքականություն վարի հարևան երկրների, այդ թվում նաև Ռուսաստանի հետ, միննույն է, ԱՄՆ արգելքից ու նրա կապանքներից խուսափել չի կարող: 1992-2011թթ. ԱՄՆ-ը Վրաստանին \$4,24 մլն-ի օգնություն է ցուցաբերել, ուստի և վրաց-իրանական հարաբերությունների զարգացումը նրա կողմից միանշանակ համարվել չի կարող: Վրաստանում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Նորլանդը նշել է, որ Վաշինգտոնը չի թաքցնում իր մտահոգությունը վրաց-իրանական հարաբերությունների զարգացման հարցում: Հետևաբար, Վրաստանը փորձում է հավասարակշիռ և զգուշավոր հարաբերություններ վարել Իրանի հետ՝ ԱՄՆ ու իր արևմտյան գործընկերների հույզերը չբորբոքելու նպատակով: Այս տրամաբանությամբ էլ վրացական կողմը մերժեց Վրաստանում մասնաճյուղ ունենալու նպատակով իրանական «Պասարգադ» բանկի առաջարկը<sup>3</sup>:

Մեծ հաշվով, Վրաստանը կարող է տուրք չտալ ռուսական գործոնին՝ իր համար բավականաչափ շահութաբեր դարձնելով Հայաստան-Ռուսաստան-

<sup>1</sup> Georgia Struggles to Explain Why It's Dating Gazprom (<http://www.eurasianet.org/node/76776>)

<sup>2</sup> Georgia: Is Trying to Use Tbilisi to Evade Sanctions? 15.06.2013(<http://www.eurasianet.org/node/67253>)

<sup>3</sup> Georgia: Is Tehran Trying to Use Tbilisi to Evade Sanctions, (<http://www.eurasianet.org/node/67253>)

Իրան էներգետիկ համագործակցության զարգացման հնարավորությունը: Վերջինս ավելի հեռանկարային կդառնա, երբ իրականություն դառնան Տրանսկասպյան և ՏԱՆԱՊ էներգետիկ ծրագրերը, որոնց միջոցով թուրքմենական գազն Ադրբեջանի տարածքով կտեղափոխվի Եվրոպա: Բնականաբար, նման հիմնահարցի հեռանկարին չէին կարող չընդդիմանալ թե՛ Իրանը, թե՛ Ռուսաստանը: Մասնավորաբար, Իրանը չի ցանկանում զարգացնել էներգետիկ համագործակցությունն Ադրբեջանի հետ, քանի որ նրանց միջև առկա են ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական, մշակութային ու կրոնական տարաձայնություններ: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Հայաստանի և Վրաստանի դերն իրանական գազի արտահանման հարցում կարելի է համարել առավել իրատեսական: Ավելին՝ 2015թ. դեկտեմբերին Հայաստանի, Վրաստանի, Իրանի և Ռուսաստանի էներգետիկայի նախարարների քառակողմ հանդիպումը Երևանում առավել ցայտուն դարձրեց էներգետիկ համագործակցության մեկնարկը: Մասնավորաբար, համաձայն շրջանառվող, բայց ոչ պաշտոնական լուրերի՝ ԻԻՀ-ն պատրաստակամություն է հայտնում Վրաստանին մատակարարել տարեկան 300-500 մլն մ<sup>3</sup> գազ, ինչը բավական լուրջ ցուցանիշ է բնակչության սպառողական ամբողջ կարիքները բավարարելու տեսանկյունից<sup>1</sup>:

Ինչ վերաբերում է հայ-վրացական հարաբերությունների զարգացմանը, պետք է ասել, որ այն ցավազին երևույթ է համարվում Թուրքիայի և Ադրբեջանի համար: Այնուամենայնիվ, նրանց խոչընդոտումներին հակառակ, Հայաստանի առևտրի 70%-ը կատարվում է Վրաստանի տարածքով: Իսկ թե ինչ հրաշալի հեռանկարներ է խոստանում արխազական երկաթուղու գործարկումը, որը ձգձգվում է մաքսակետի տեղակայման և այլ քաղաքական հիմնախնդիրների պատճառով, պարզապես մեկնաբանությունների կարիք չունի<sup>2</sup>:

Եվ ընդհանրապես, առանց երկաթուղու տնտեսական կայուն զարգացման երաշխիքներն աննշան են: Այս առումով, բավական համոզիչ են հետևյալ փաստարկները. 2012թ. Վրաստանի հետ Հայաստանի ապրանքաշրջանառությունը կազմել է շուրջ \$332 մլն, մինչդեռ 2015թ. այն զգալիորեն նվազել է՝ հասնելով \$268.539.300-ի, որն այդ ընթացքում կազմել է Վրաստանի ընդհանուր առևտրաշրջանառության 3,7%-ը, իսկ Հայաստանն այդ ցուցանիշով՝ Վրաստանի 10-րդ առևտրային գործընկերը:

<sup>1</sup> Иран ведет переговоры по поставкам газа через Армению в Грузию, (<http://ru.oxu.az/world/110177>)

<sup>2</sup> Ոչ Եվրասիական, ոչ Եվրոպական միություն, 01.07.2016 (<http://civilnet.am>)

Փոխարենը, փոքր-ինչ ակտիվացել է առևտուրը Ռուսաստանի հետ՝ \$520.000.000-ից մինչև \$530.314.200, ինչը մեկնաբանվում է Եվրասիական միության աստիճանական զարգացմամբ, ինչպես նաև «Շահ Դենիզ» հանքավայրի հայտնաբերմամբ, որից հետո Ռուսաստանը որոշակիորեն կորցրեց իր դիրքերն Ադրբեջանում և Վրաստանում: Մինչ այդ, նա Բաքու-Նովոռուսիյսկ գազատարի միջոցով խոչընդոտում էր Վրաստանով երրորդ երկրներ ադրբեջանական գազի արտահանմանը, հետևաբար նաև՝ նրանց քաղաքատնտեսական որոշակի անկախության կայացմանը<sup>1</sup>:

Հարկ է նշել, որ 2015թ. Վրաստան ներկրվող գազի շուրջ 90%-ը ադրբեջանական էր՝ *SOCAR* պետական ընկերության աջակցությամբ, որի անունից պաշտոնական Բաքուն չի դադարում հայտարարել, թե այն կարող է բացարձակ ապահովել Վրաստանի տնտեսությանը գազի պահանջվող ծավալներով: Նախորդ տարվա նոյեմբերին, Իլիամ Ալիևի Վրաստան կատարած պաշտոնական այցի ընթացքում, նախագահների մակարդակով հրապարակված համատեղ փաստաթղթում նշվեց, որ առաջիկա տարիներին կողմերը նախատեսում են առավելագույնի հասցնել *SOCAR*-ի գազի մատակարարումը Վրաստանին:

Պաշտոնական տվյալների համաձայն՝ 2015թ. Վրաստանի գազային կարիքները 2014թ. համեմատ ավելացել են շուրջ 14%-ով՝ հասնելով 2.5 մլրդ մ<sup>3</sup>-ի: Գազի սպառման բաշխվածությունն ըստ տնտեսության ճյուղերի հետևյալ պատկերն է ունեցել. 750 մլն մ<sup>3</sup> տնային տնտեսություններին, 650 մլն մ<sup>3</sup>՝ ջերմաէլեկտրակայաններին, 1 մլրդ մ<sup>3</sup> մասնավոր արտադրական ընկերություններին: Գազի նշյալ ծավալները հիմնականում տրամադրվել են Ադրբեջանի կողմից՝ երկու պայմանագրերի համաձայն: Այսպես՝ 712 մլն մ<sup>3</sup> գազ Վրաստանն ստացել է «Բրիթիշ փեթրոլիում» ընկերությանը պատկանող Հարավկովկասյան խողովակաշարից, որը կասպիական «Շահ Դենիզից» Վրաստանի տարածքով հասնում է Թուրքիա, իսկ մնացած 1.5 մլրդ մ<sup>3</sup>-ը Վրաստանն ստացել է *SOCAR* ընկերության կողմից:

Այնուհետև, *SOCAR*-ի նախագահ Ռովնազ Աբդուլանը և վրաստանյան մասնաճյուղի ղեկավար Մահիր Մամադովը, հանդիպելով Վրաստանի նորանշանակ վարչապետ Գեորգի Կվիրիկյաշվիլու հետ, հայտարարել էին, որ պատրաստ են ձևան ամիսներին Վրաստանին գազի լրացուցիչ ծավալներ տրամադրել<sup>2</sup>:

<sup>1</sup> [http://www.geostat.ge/cms/site\\_images/\\_files/english/bop/FTTrade\\_09\\_2015\\_ENG.pdf](http://www.geostat.ge/cms/site_images/_files/english/bop/FTTrade_09_2015_ENG.pdf)

<sup>2</sup> Ումից որքան գազ. ՌԴ և Ադրբեջանի միջև, Արսեն Խառախյան (<http://armtimes.com/hy/read/78019>)

Այնուհանդերձ, ադրբեջանական կողմի ջանքերին հակառակ, Վրաստանն աստիճանաբար ավելի ու ավելի է հստակեցնում իր դիրքորոշումն ադրբեջանական էներգակիրների պաշարների բավարարությանը չհավատալու տեսակետից՝ առավել պարզորոշ դարձնելով իր հայացքներն իրանական էներգետիկ համագործակցության նկատմամբ:

Իրանա-վրացական համագործակցության զարգացման մեկ այլ պատրվակ է համարվում հարավօսական ճգնաժամի ընթացքում Վրաստանին Իրանի ցուցաբերած աջակցությունը: 2006-2008թթ. Ռուսաստանը պարբերաբար դադարեցնում էր գազի մատակարարումը Վրաստանին: Նման իրավիճակները շուտափույթ կանխվում էին ցածր գներով Վրաստանին տրամադրվող իրանական գազի հաշվին: Հետևաբար, ի հակադրություն գերտերությունների հակաիրանական մոտեցումների, Վրաստանը երբեք էլ բաց չի թողնում առիթն իր երախտագիտությունն Իրանին հայտնելու համար [4, p. 132]: Եվ այս բարեկամական տրամադրությունն ի վերջո նյութականացավ, երբ Վրաստանի կառավարության որոշման համաձայն՝ 2016թ. փետրվարի 15-ից Իրանի քաղաքացիներն ազատ Վրաստան այցելելու իրավունք ստացան<sup>1</sup>:

Ի դեպ, հարկ է նշել, որ ի հեճուկս միջազգային պատժամիջոցների՝ Իրանը երբեք էլ չի ընկճվել և չի դադարել իր ազդեցության ոլորտներն ընդլայնելու գաղափարներից: Մասնավորաբար, երբ ԽՍՀՄ փլուզումից հետո Քվեմո Քարթլիում վերածնվեցին իսլամական գաղափարները, Իրանի Իսլամական Հանրապետության միսիոներներն, ակտիվանալով Ադրբեջանում, իրենց ազդեցությունը տարածեցին նաև Վրաստանի հարավ-արևելքում՝ հիմնադրելով մի շարք կրոնական կազմակերպություններ, որոնցից է «Ահլի Բեյթ» հիմնադրամը Մառնեուլում, որը գործում է Ռասիմ Մամեդովի գլխավորությամբ և զբաղվում է իրանամետ շիական գաղափարախոսության տարածմամբ: Իրանական իշխանությունները նաև գումարներ են հատկացնում Մառնեուլում մզկիթներ կառուցելու նպատակով<sup>2</sup>:

### **Վերջաբան**

1. Վրաստանի քաղաքացի հանդիսացող ադրբեջանցիների շրջանում հնարավոր անջատողական ձգտումները կարող են խաթարել երկրի տնտե-

<sup>1</sup> Փետրվարի 9, օրվա իրադարձություններ, Վրաստան, (<http://armenian-community.ge/News/1644>)

<sup>2</sup> ГРУЗИЯ: ДЕЯТЕЛЬНОСТЬ ИРАНСКИХ МИССИОНЕРОВ ВЫЗЫВАЕТ ОПАСЕНИЯ, (<https://iwpr.net/ru/global-voices/gruziya-deyatelnost-iranskih-missionerov>)

սական, աշխարհաքաղաքական և ժողովրդագրական կայունության հիմքերը: Դա անհանգստացնում է Վրաստանի իշխանություններին և հանրությանը: Նման զարգացումներն անմասն չեն թողնի նաև Հայաստանին:

2. Վրաստանը և Իրանը դեմ չեն ձևավորել կայուն և մրցունակ էներգահամակարգ՝ Հայաստանի ներգրավմամբ, որն էապես կնվազեցնի մեզ վրա թուրք-ադրբեջանական շրջափակման ազդեցությունը:
3. Վրաստանը, Ադրբեջանը և Թուրքիան զարգացնում են միջտնտեսական հարաբերություններ: 2007թ. նախաձեռնվեց Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու շինարարությունը: Նախագծային փուլում է Նախիջևան-Կարս երկաթուղու ծրագիրը, որի նպատակն է վերացնել ադրբեջանական էքսկլավի շրջափակումը:
4. «Օգոստոսյան պատերազմը» և վրաց-ադրբեջանական հարաբերությունների խորացումը նպաստեցին Թուրքիայի դերակատարության ամրապնդմանը Վրաստանում: Իմերեթի «Մաչխերի» ռազմակայանում իրականացվում են թուրք-վրացական զորավարություններ, թուրքական ֆինանսավորմամբ է գործում ադրբեջանաբնակ Մառնեուլի ավիացիոն բազան:
5. Ըստ 2014թ. մարդահամարի՝ Աջարիայի բնակչությունը կազմել է 336.077 մարդ, որոնց 30%-ը մուսուլման է: Վերջիններս խիտ բնակեցված են Աջարիայի՝ Մամգիլե-Չավախքի սահմանին գտնվող Խուլույի շրջանում, Շուախևի և Քեդա շրջաններում: *Աջարիայի իսլամադավան բնակչությունը պարարտ հող է ստեղծում ինքնավարության տարածքում Թուրքիայի դերի մեծացման համար:*
6. Թուրքիայի և Ադրբեջանի պահանջները Վրաստանում առաջացնում են հակաթուրքական և հակաադրբեջանական տրամադրություններ: Վրաստանը գիտակցում է, որ այդ երկրներից կախվածությունը նվազեցնելու համար հարկավոր է դիվերսիֆիկացնել իր տնտեսությունը: Այդ հարցում որպես լավագույն տարբերակ է նախանշվում Իրանը:
7. Իրանը կարևորում է իր ներկայությունը Վրաստանում հետևյալ պատճառներով.
  - Իրանը դեմ է ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի, Իսրայելի, Թուրքիայի և Ադրբեջանի դիրքերի ամրացմանը Վրաստանում և Հարավային Կովկասում ու ձգտում է ամուր կապեր հաստատել Վրաստանի հետ, որպեսզի նվազեցնի նրանց ազդեցությունը տարածաշրջանում,

- Իրանի համար ցանկալի չէ իր երկիրը շրջանցող էներգետիկ ենթակառուցվածքների զարգացումը,
  - Իրանը նպատակ ունի Վրաստանով դուրս գալ Սև ծով և Եվրոպա:
8. 2015թ. դեկտեմբերին Հայաստանի, Վրաստանի, Իրանի և ՌԴ էներգետիկայի նախարարների միջև կայացավ հանդիպում: ԻԻՀ-ը պատրաստակամություն հայտնեց Վրաստանին մատակարարել տարեկան 300-500 մլն մ<sup>3</sup> գազ, ինչը լուրջ ցուցանիշ է:
  9. Իրանը երբեք չի հրաժարվել իր ազդեցության ոլորտներն ընդլայնելու գաղափարներից: «Ահլի Բեյթ» հիմնադրամը Մառնեուլում զբաղվում է շիական գաղափարախոսության տարածմամբ, հատկացվում են նաև գումարներ մզկիթներ կառուցելու նպատակով:
  10. Վրաստանը մշտապես գտնվում է տարածաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական գործընթացների, քաղաքական խմորումների կիզակետում: Այն մեծ հետաքրքրություն է ներկայացնում հարևան երկրների՝ Ադրբեջանի, Թուրքիայի, Իրանի, Ռուսաստանի և Հայաստանի համար, որոնցից յուրաքանչյուրը Վրաստանի հետ գործընկերությունը դիտարկում է յուրովի:
  11. *Ադրբեջանի և Թուրքիայի* մոտեցումներն այդ խնդրում հիմնականում համընկնում են, որոնց հիմքում ընկած են ոչ միայն առևտրաարդյունաբերական, այլև եռակողմ և փոխշահավետ էներգետիկ համագործակցության և քաղաքական հեռանկարները:
  12. Վրաստանի հետ *Իրանի* համագործակցային մոտեցումներն առավել սկզբունքային են: Վերջինս ցանկանում է այլընտրանք ունենալ Թուրքիային և Ադրբեջանին հակառակ՝ իր էներգետիկ ծրագրերն առաջ մղելու և ածխաջրածնային հոսքերը դեպի Եվրոպա ուղղելու նպատակով, ինչը կարող է իրականանալ Վրաստանի և Սև ծովի տարածքով՝ ամրապնդելով Իրանի դիրքերը ՌԴ ազդեցության գոտի համարվող Հարավային Կովկասում:
  13. *Ռուսաստանը* ձգտում է բարելավել հարաբերությունները Վրաստանի հետ՝ հաշվի առնելով թուրք-ադրբեջանական հարաբերությունների խնդիրը, ինչպես նաև իրանական գործոնի ուժեղացումը Կովկասում: Ռուսաստանն առաջին հերթին նպատակ ունի ամրագրել իր ներկայությունը վրաց-իրանական էներգետիկ ծրագրերում:

14. Վրաց-ռուսական և վրաց-իրանական հարաբերությունների զարգացումները կարող են արգասաբեր լինել *Հայաստանի* համար, թեև հայ-վրացական հարաբերությունները դեռ երկար կլինեն ոչ հավասարազոր հարթության վրա՝ Վրաստանի առավելության պահպանմամբ:
15. Եթե Հայաստանը կարողանա տարանցիկ երկիր դառնալ վրաց-իրանական գազային ծրագրի հարցում, ապա հայ-վրացական հարաբերությունները կփոխադրվեն առավել հեռանկարային հարթություն՝ թուլացնելով թուրք-ադրբեջանական ազդեցության ոլորտը:
16. *Վրաստանը* պետք է գնահատի իր հնարավորություններն ու շահադիտական հարաբերությունները բոլոր հարևանների հետ՝ զուգահեռաբար տիրապետելով նաև ներքին հիմնախնդիրներին, նկատի ունենալով Վրաստանում ապրող ավելի քան 280 հազար ադրբեջանցիների անջատողական ձգտումները:
17. Առաջիկա տասնամյակներին Վրաստանի դիվանագիտական ռազմավարության դոմինանտը սեփական սահմանների անքակտելիությունն է և ազգային փոքրամասնությունների հետ չառճակատվելը: Հակառակ դեպքում դրանք կարող են հանգեցնել տարանջատումների և տարածքային կորուստների:
18. Վրաստան - ՀՀ հարաբերությունները հիմնականում բարիդրացիական են: Նրանք ունեն կայուն փոխըմբռնում ամենակարևոր հարցերում, չնայած առկա են տարամետ շահեր: ՌԴ-Վրաստան հարաբերությունները լարված են, սակայն այժմ այնպիսի հոետորաբանություն չեն գործածում, ինչպես նախկինում: Վրաստանի եվրատլանտյան ինտեգրացիան դուր չի գալիս Ռուսաստանին, և նա կարող է դիմել անկանխատեսելի քայլերի:
19. Թուրքիայի և Ադրբեջանի հետ Վրաստանն ունի սերտ տնտեսական և քաղաքական համագործակցություն: Օրինակ, վերջերս հանդիպեցին այդ երկրների պաշտպանության և արտաքին գործերի նախարարները: Վրաստանը պետք է փորձի թուրք-ադրբեջանական տանդեմի նկատմամբ հանդես գալ որպես սուբյեկտ և չառաջնորդվել լոկ տնտեսական նկատառումներով:
20. Ադրբեջանն ու Թուրքիան Վրաստանը դիտում են որպես Հայաստանի մեկուսացման իրենց ռազմավարության մաս և պատրաստ են ներդրումներ կատարել այդ երկրում: Դա Վրաստանի համար տնտեսապես շահա-



վետ է, սակայն այդպիսով Թբիլիսին դառնում է տարածաշրջանային հավասարակշռությունը խախտող, մինչդեռ այդ հավասարակշռության պահպանումը կենսական նշանակություն ունի:

21. Կայունությունը հիմնականում պահպանվում է ոչ թե դիվանագիտական ջանքերի, այլ հավասարակշռության հիման վրա: Եվ այս իմաստով Վրաստանը կարևոր կետ է, որի դերակատարումն էական նշանակություն ունի նաև դարաբաղյան կարգավորման գործընթացի հարցում:
22. Աբխազիայի և Օսիայի խնդիրները ստիպում են Թբիլիսիին հանդես գալ թուրք-ադրբեջանական քաղաքական տրամաբանության ներքո: Արդյունքում՝ Վրաստանը հայտնվում է նրանց քաղաքականության արբանյակի դերում, ինչը սպառնալիք է թե՛ Հայաստանի, թե՛ Վրաստանի համար:
23. Պետք է ձևավորել հավասարակշռող նոր վեկտոր, որը թույլ կտա առավել խորքային հակազդեցություն ապահովել այդ գործընթացին:

*Մարտ, 2016թ.*

### Աղբյուրներ և գրականություն

1. *Kornely Kakachia & Michael Cecire*, "Georgian Foreign Policy: The Quest For Sustainable Security", The Merchant Hegemon; Georgia's Role in Turkey's Caucasus System.
2. *Kornely Kakachia & Michael Cecire*, "Georgian Foreign Policy: The Quest For Sustainable Security", An Alliance Built on Understanding: The Geopolitics of Georgian-Azerbaijani Relations by Zaur Shiriyev.
3. *Ahmet Yukleyen & Jack Walsh*, Caspian Strategy Institute Center On Politics And Social Research, "Turkey And South Caucasus Region".
4. *Kornely Kakachia & Michael Cecire*, "Georgian Foreign Policy: The Quest For Sustainable Security", The Lost Empire: Iran's Cautious Return To Georgia, by Kornely Kakachia.

## ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

### Արման Նավասարդյան

#### Ամփոփագիր

Վրաստանի հարևան պետություններից յուրաքանչյուրը նրա հետ հարաբերությունների զարգացումը դիտում է իր աշխարհաքաղաքական հետաքրքրությունների տեսանկյունից: Ադրբեջանի և Թուրքիայի մոտեցումների հիմքում ընկած են էներգետիկ համագործակցության և քաղաքական շահերը: Իրանը ցանկանում է այլընտրանք ունենալ Թուրքիայի և Ադրբեջանի հետ իր էներգետիկ ծրագրերում: Ռուսաստանը հաշվի է առնում թուրք-ադրբեջանական հարաբերությունների արգելքը, իսկ հետագայում նաև իրանական գործոնի ուժեղացումը Կովկասում: Նա նպատակ ունի նաև ամրագրել իր ներկայությունը վրաց-իրանական էներգետիկ ծրագրերում:

Հայաստանի հնարավոր մասնակցությունը վրաց-իրանական զագային ծրագրին հայ-վրացական հարաբերությունները կփոխադրի առավել հեռանկարային հարթություն՝ էապես թուլացնելով թուրք-ադրբեջանական ազդեցության ոլորտը: Վրաստանի դիվանագիտական ռազմավարության դոմինանտը, բացի տնտեսական ինտեգրացիոն գործընթացներից, կարելի է համարել սեփական սահմանների անբակտելիությունը և ազգային փոքրամասնությունների կողմից նորանոր բարդույթների հետ չառճակատվելը՝ դրանից բխող բոլոր վտանգավոր հեռանկարներով:

## ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ЭКОНОМИЧЕСКИХ ОТНОШЕНИЙ МЕЖДУ ГРУЗИЕЙ И СОСЕДНИМИ СТРАНАМИ

*Арман Навасардян*

Резюме

Каждое из соседних с Грузией государств рассматривает развитие своих отношений с нею сквозь призму собственных геополитических интересов. В основе позиции Азербайджана и Турции лежит сотрудничество в области энергетики, а также политические интересы. Иран хочет иметь альтернативу своим энергетическим проектам с Турцией и Азербайджаном. Россия принимает во внимание такое препятствие, как турецко-азербайджанские отношения, а также фактор усиления в дальнейшем позиций Ирана на Кавказе. Она хочет также обеспечить свое участие в грузино-иранских энергетических проектах. Участие Армении в грузино-иранской газовой программе откроет новые перспективы в армяно-грузинских отношениях, существенно ослабив сферу турецко-азербайджанского влияния. Доминантой в дипломатической стратегии Грузии, помимо экономической интеграции, можно считать также нерушимость собственных границ и отсутствие чреватых опасными последствиями проблем с национальными меньшинствами.

## PERSPECTIVES OF DEVELOPMENT OF ECONOMIC RELATIONS BETWEEN GEORGIA AND ITS NEIGHBOURS

*Arman Navasardyan*

Resume

Each of the neighboring countries views the development of relations with Georgia from the perspective of their geopolitical interests. The approaches of Azerbaijan and Turkey are based on energy cooperation and political interests. Iran seeks an alternative in its energy plans with Turkey and Azerbaijan. Russia considers the barrier created by Turkish - Azerbaijani relations, and further strengthening of the Iranian factor in the Caucasus, as well. It also aims to affirm its presence in Georgian-Iranian energy plans. The possible participation of Armenia in Georgian - Iranian gas projects will move the Armenian - Georgian relations into a more long-term platform, thus essentially weakening the influence of Turkish - Azerbaijani duet. Besides the economic integration processes, the dominant idea of Georgia's diplomatic strategy can also be considered the inviolability of its borders and avoiding the need to face new complexities caused by the ethnic minorities, with all their possible dangerous prospects.

# ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԱՓՈՒՄԸ

## *Ջոնի Մեյիքյան՝*

*Բանայի բառեր՝* Վրաստան, արտաքին քաղաքականություն, հետազոտական կենտրոններ, ներքաղաքական գործընթացներ, ընտրություններ, բարեփոխումներ:

Անցած դարի 90-ականների սկզբին անկախություն ձեռք բերելուց հետո Վրաստանի նոր ընտրանին ձեռնամուխ եղավ պետական իշխանության ինստիտուտների ձևավորմանը: Սակայն ներքաղաքական իրավիճակն այդ պահին բավական բարդ էր, և երկիրը մխրճվեց էթնոքաղաքական կոնֆլիկտների ու քաղաքացիական դիմակայության հորձանուտը: Երկրում պետական հեղաշրջումից հետո, 1992թ. սկզբին Թբիլիսի է վերադառնում Վրաստանի նախկին խորհրդային առաջնորդ Էդուարդ Շևարդնաձեն: Որոշակի ներքաղաքական դժվարությունների և Աբխազիայի ապաինտեգրման փորձի անհաջողությունների ֆոնին Էդ.Շևարդնաձեն, լինելով Պետխորհրդի նախագահը, խմբագրական խմբի հետ միասին 1995թ. հուլիսի 1-ին Պետական սահմանադրական հանձնաժողովին ներկայացրեց երկրի Սահմանադրության նախագիծը, որն ընդունվեց Վրաստանի խորհրդարանի կողմից 1995թ. օգոստոսի 24-ին<sup>1</sup>: Փաստաթղթի համաձայն՝ հենց այդ ժամանակ էլ մտցվեց Վրաստանի նախագահի պաշտոնը. նախագահ դարձավ Էդ.Շևարդնաձեն: Պետականակերտման գործընթացին զուգահեռ՝ 1990-ականներին Վրաստանում ձևավորվում էր նաև արտաքին քաղաքական ուղղվածությունը: Եթե սկզբում, էթնոքաղաքական հակամարտությունների և ներքաղաքական ապակայունության պատճառով արտաքին քաղաքականությունը երկրորդ պլան էր մղվում, ապա 1995-ից հետո այն առաջնային է դառնում: Վրաստանի այն ժամանակվա արտաքին քաղաքականությունը կարելի է անվանել երկակի՝ ԱՄՆ-ի ու եվրոպական գործընկերների և տարածաշրջանի երկրների (Թուրքիա, Ադրբեջան)

<sup>1</sup> «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի փորձագետ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող:

<sup>1</sup> Законодательный вестник Грузии, <https://matsne.gov.ge/ru/document/view/30346>.

հետ փոխհարաբերությունների հաստատման առումով: Սրան զուգահեռ՝ պաշտոնական Թբիլիսին փոխհարաբերություններ էր պահպանում ԽՍՀՄ իրավահաջորդ Ռուսաստանի հետ, որն այդ պահին առաջ էր տանում հետխորհրդային նախագիծը՝ Անկախ Պետությունների Համագործակցությունը (ԱՊՀ), որի անդամ էր Վրաստանը 1993-ի վերջից:

Վրաստանի արտաքին քաղաքականության համար վճռական դարձան 2003թ. նոյեմբերյան իրադարձությունները: Այդ ժամանակ, ընդվզելով խորհրդարանական ընտրությունների արդյունքների և Էդ. Շևարդնաձեի քաղաքականության դեմ, «երիտասարդ բարեփոխիչների» մի խումբ՝ Միխայիլ Սաակաշվիլու գլխավորությամբ, հեղափոխություն իրականացրեց և ստիպեց նախագահին հրաժարական տալ<sup>1</sup>: Երկրի արտաքին քաղաքականության մեջ «հեղափոխականների» և «երիտասարդ բարեփոխիչների» թիմը գրավեց վառ արտահայտված արևմտամետ կեցվածք՝ զուգահեռաբար վատացնելով փոխհարաբերությունները Ռուսաստանի Դաշնության հետ: Հակառուսական քաղաքականության գագաթնակետը դարձավ 2008թ. օգոստոսի ռուս-վրացական պատերազմը, որի արդյունքում Ռուսաստանը ճանաչեց Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունը, խզվեցին դիվանագիտական հարաբերությունները Ռուսաստանի հետ:

Արտաքին քաղաքական գործունեության դինամիկան փոխվեց 2012թ. հոկտեմբերի 1-ից հետո, երբ խորհրդարանական ընտրությունների արդյունքներով հաղթեց Բիձինա Իվանիշվիլու ընդդիմադիր «Վրացական երազանք» կոալիցիան. Իվանիշվիլին զբաղեցրեց վարչապետի պաշտոնը: Վրաստանի նոր ղեկավարությունն առաջին իսկ օրերից հայտարարեց, որ մասնակի վերանայում է երկրի արտաքին քաղաքականությունը՝ լիովին հրաժարվելով սադրիչ հակառուսական քաղաքականությունից և հռետորաբանությունից: Արտաքին քաղաքականության մյուս վեկտորները՝ տարածաշրջանայինն ու եվրատլանտյանը, մնացին անփոփոխ: Պահպանվեցին արդեն ավանդական ռազմավարական փոխհարաբերություններն ԱՄՆ-ի, հավասարակշռված և բարիդրացիական հարաբերությունները՝ Հայաստանի, Ադրբեյջանի և Թուրքիայի հետ: Ինչպես և «Միասնական ազգային շարժման» կառավարության օրոք, Վրաստանի նոր իշխանությունները որպես երկրի արտաքին քաղաքական գերակայություն նշեցին գործընկերային և բարեկամական

<sup>1</sup> Кавказский узел: Революция роз в Грузии, <http://www.kavkaz-uzel.ru/articles/233390/>.

փոխհարաբերությունները ԵՄ-ի հետ և ՆԱՏՕ-ին ու ԵՄ-ին հետագա ինտեգրման ցանկություն հայտնեցին: Սակայն, չնայած Վրաստանի իշխանությունների հավաստիացումներին, արտաքին քաղաքական հարցերը, մասնավորապես՝ փոխհարաբերությունները Ռուսաստանի հետ, քանիցս քննադատության առարկա են դարձել վրացի ընդդիմադիրների կողմից, որոնք բարձրացնում էին «Վրացական երազանքի» կառավարման պայմաններում Վրաստանի «եվրոպական ապագայի» հարցը:

### ***Վրաստանի արտաքին քաղաքականությունը Միխայիլ Սաակաշվիլու նախագահության շրջանում***

Վրաստանի 2012թ. հոկտեմբերի արտաքին քաղաքական նոր իրողություններն ավելի ճիշտ ներկայացնելու և վերլուծելու համար հարկ է քննարկել Վրաստանի երրորդ նախագահ Միխայիլ Սաակաշվիլու վարած արտաքին քաղաքականությունն ու նրա ներքաղաքական չափումը: Սկսած 2004թ.՝ Վրաստանի նոր ղեկավարությունը սկսեց երկրի բարեփոխումները և արևմտյան չափորոշիչներով նրա արդիականացումը<sup>1</sup>: Նոր թիմը հայտարարեց, որ գերակա և անայլընտրանքային է համարում երկրի արտաքին քաղաքականության եվրատլանտյան վեկտորը, և որ մտադրություն կա մտնել Հյուսիսատլանտյան դաշինք (ՆԱՏՕ) ու Եվրոպական միություն (ԵՄ): Այդ ժամանակ էլ, նշված արտաքին քաղաքական ուղղություններն ակտիվացնելու համար, Վրաստանի նախագահի 2004թ. դեկտեմբերի 17-ի №597 հրամանով կառավարության կառուցվածքում ստեղծվում է եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման հարցերով պետական նախարարի պաշտոնը, իսկ նույն թվականի դեկտեմբերի 31-ին՝ պետնախարարի աշխատակազմը: Արդյունավետ աշխատանքի և առաջադրված խնդիրների իրագործման համար նոր կառույցում ստեղծվում է երեք վարչություն՝ եվրոպական ինտեգրման, եվրատլանտյան ինտեգրման և ԵՄ ծրագրերի համակարգման: 2005թ. հիմնվում է երկու պետական հանձնաժողով՝ ՆԱՏՕ-ին ինտեգրվելու պետհանձնաժողովը և ԵՄ-ին ինտեգրվելու պետհանձնաժողովը<sup>2</sup>:

2004թ. Միխայիլ Սաակաշվիլու թիմը սկսում է հիմնարար հայեցակարգային փաստաթղթի պատրաստումը, որն ամրագրելու էր երկրի արտաքին

<sup>1</sup> Русская служба BBC: Саакашвили принес присягу президента, [http://news.bbc.co.uk/hi/russian/news/newsid\\_3427000/3427187.stm](http://news.bbc.co.uk/hi/russian/news/newsid_3427000/3427187.stm).

<sup>2</sup> Office of the State Minister on European and Euro-Atlantic Integration, <http://www.eu-nato.gov.ge/>.

քաղաքականության գերակայությունները և նրա ազգային անվտանգության սպառնալիքները: Այսպիսով, Վրաստանի ղեկավարությունը, ԱՄՆ ֆինանսական և տեխնիկական օժանդակությամբ, ավարտում է երկրի Ազգային անվտանգության հայեցակարգի պատրաստումը: Այդ փաստաթուղթն ընդունվում է երկրի խորհրդարանի կողմից 2005թ. հուլիսի 8-ին<sup>1</sup>: Փաստաթղթի նախագիծն արտացոլում էր ինչպես Վրաստանի ազգային հիմնարար արժեքները, այնպես էլ ազգային շահերը, մարտահրավերները, Վրաստանի ազգային անվտանգության քաղաքականության հիմնական ուղղությունները, ինչպես նաև նրա արտաքին քաղաքականության գերակայությունները: Փաստաթղթի համաձայն՝ Վրաստանի ազգային շահեր էին համարվում. 1. տարածքային ամբողջականությունը, 2. ազգային միասնությունը, 3. տարածաշրջանային կայունությունը, 4. ազատության և դեմոկրատիայի ամրապնդումը հարևան երկրներում և տարածաշրջանում, 5. երկրի տարանցիկ գործառույթի ամրացումը և էներգամատակարարման այլընտրանքային ուղիների ապահովումը, 6. էկոլոգիական անվտանգությունը, 7. ազգային և մշակութային ինքնության ապահովումը<sup>2</sup>:

Հայեցակարգում, Վրաստանի արտաքին քաղաքականության հիմնական գերակայությունների բաժնում, նշված էին. արևմտամետ արտաքին քաղաքական գծի կառուցման կարևորությունը, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ուկրաինայի, Թուրքիայի և Ադրբեյջանի հետ «ռազմավարական գործընկերությանն» աջակցության շարունակումը, գործընկերությունը Ռուսաստանի և «պրագմատիկ համագործակցությունը» Հայաստանի Հանրապետության հետ: Նույն տեղում նշվում է, որ Վրաստանը պարտավորվում է ապահովել Վրաստանում ապրող բոլոր էթնիկ և կրոնական խմբերի շահերի, իրավունքների և ազատությունների պաշտպանությունը»: Հիմնարար ազգային շահերի պաշտպանության, ինչպես նաև մարտահրավերների և սպառնալիքների վերացման համար հայեցակարգի հեղինակներն առանձնացրել են պետության հետևյալ գերակայությունները. 1. պետական կառավարման ուժեղացում, 2. դեմոկրատական ինստիտուտների ուժեղացում, 3. երկրի

<sup>1</sup> Civil.ge: Завершилась работа над Концепцией национальной безопасности Грузии, <http://www.civil.ge/rus/article.php?id=8045>.

<sup>2</sup> Меликян Дж., Приоритеты внешней политики Грузии в контексте обеспечения национальной безопасности страны // Сборник материалов республиканской научной конференции 4-5 ноября 2014 года, Российско-Армянский (Славянский) университет, сс. 92-103.

պաշտպանունակության ամրապնդում, 4. տարածքային ամբողջականության վերականգնում, 5. եվրատլանտյան ինտեգրացիա և այլն<sup>1</sup>:

Վրաստանի եվրատլանտյան ինտեգրման վրա կանգ առնելով՝ նշենք, որ երկրի ներսում եվրատլանտյան ինտեգրման գաղափարի տարածման համար Վրաստանի նախագահի 2005թ. սեպտեմբերի 19-ի №752 հրամանով ստեղծվում է ՆԱՏՕ և ԵՄ գծով տեղեկատվական կենտրոնը<sup>2</sup>, որն ունի հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ: Վրաստանի մայրաքաղաքում գլխավոր գրասենյակից բացի կենտրոնն ութ ներկայացուցչություն ունի երկրի շրջաններում: Այս կառույցի նախագծերը ֆինանսավորվում են ինչպես Վրաստանի պետբյուջեից, այնպես էլ ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի կողմից: Այդ նույն տարիներին էլ ավելի են ակտիվանում նաև ոչ կառավարական կազմակերպությունները և այսպես կոչված «ուղեղային կենտրոնները»<sup>3</sup>, որոնցից են վրացական առաջատար *think tank*երը՝ Վրաստանի Ատլանտիկական խորհուրդը (1996) և Ռազմավարական միջազգային հետազոտությունների վրացական հիմնադրամը (1998): Վրաստանի արդեն արտահերթ նախագահական ընտրությունների ժամանակ՝ 2008թ. սկզբին, երկրի բնակչության առջև դրվեց նրա «ապագայի» վերաբերյալ հարցին պատասխանելու անհրաժեշտությունը:

Վրաստանի վառ արտահայտված եվրատլանտյան արտաքին քաղաքականությունը և հակառուսական հռետորաբանության շարունակական սաստկացումը ժամանակի ընթացքում էլ ավելի էին բարդացնում Վրաստանի նոր ղեկավարության առանց այդ էլ չստացված փոխհարաբերությունները Ռուսաստանի Դաշնության հետ՝ երկու երկրներին բերել-հասցնելով օգոստոսյան պատերազմին: Ռուս-վրացական հակամարտությունը 2008թ. օգոստոսին աղետալի հետևանքներ ունեցավ Վրաստանի համար, այդ թվում Ռուսաստանի կողմից Աբխազիան և Հարավային Օսիան անկախ պետություններ ճանաչելու պատճառով: Այդ բոլոր իրադարձությունները ստիպեցին պաշտոնական Թբիլիսիին վերանայել 2005թ. Ազգային անվտանգության հայեցակարգը: Այսպիսով, մի քանի տարվա աշխատանքից հետո երկրի խորհրդարանը 2011թ. դեկտեմբերի 23-ին 150 «կողմ» ձայնով հաստատեց

<sup>1</sup> Меликян Дж., Внешняя политика Грузии после парламентских выборов в октябре 2012: взгляд из Армении // Центральная Азия и Кавказ (Журнал социально-политических исследований). СА&СС Press, Швеция, 2014, Том 17, Выпуск 1, сс. 78-88.

<sup>2</sup> Information Centre on NATO and EU, <http://www.natoinfo.ge/ge/struqtura>.

<sup>3</sup> Меликян Дж., Исследовательские центры Грузии (этапы становления и основные направления деятельности) // «21 век», НОФ Нораванк, 2015, №4, сс. 38-50.

փաստաթղթի նորացված տարբերակը<sup>1</sup>:

Հարկ է նշել, որ փաստաթղթում երկու հիմնական փոփոխություն է կատարվել: Առաջին՝ Ռուսաստանը գործընկեր երկրից (2005թ. հայեցակարգով) վերածվել է «Վրաստանի ազգային անվտանգության «գլխավոր սպառնալիքի և մարտահրավերի»: Մասնավորապես, տրվել են հետևյալ ձևակերպումները. «Վրաստանի տարածքի ռուսաստանյան օկուպացիա», «ռազմական նոր ագրեսիայի վտանգ Ռուսաստանի կողմից» և «Ռուսաստանի կողմից օկուպացված տարածքներից կազմակերպված ահաբեկչական գործողություններ»: Երկրորդ՝ ուժեղացավ երկրի եվրատլանտյան ինտեգրման դերը: Փաստաթղթի համաձայն՝ այս ուղղությունը հանդիսանում էր և շարունակում է հանդիսանալ «երկրի արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության ամենակարևոր գերակայություններից մեկը»: Մինևույն ժամանակ, հեղինակները հատկապես նշում էին, որ Ռուսաստանի հետ օգոստոսյան պատերազմը չկարողացավ փոխել երկրի ձգտումը՝ մտնել ՆԱՏՕ, և 2004թ. հետո երկիրը «մեծ առաջընթացի» հասավ այս ուղղությամբ:

Փոփոխությունները 2001թ. հայեցակարգում հիմնականում չեն վերաբերել տարածաշրջանի հարևան երկրների հետ հարաբերություններին: Նոր փաստաթուղթը Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերություններն ամրագրել է որպես «ռազմավարական գործընկերություն», իսկ Հայաստանի հետ հարաբերության սահմանումը «պրագմատիկ համագործակցությունից» դարձել է «սերտ գործընկերություն»<sup>2</sup>:

Ամփոփելով Միխայիլ Սասկաշվիլու նախագահության շրջանում Վրաստանի արտաքին քաղաքականության արդյունքները՝ պետք է նշել, որ Վրաստանի եվրատլանտյան վեկտորն ավելի է կարևորվել և դարձել պաշտոնական Թբիլիսիի արտաքին քաղաքական գործունեության հիմնական ուղղությունը: Բացի այդ, վերջնականապես փչացան հարաբերությունները Ռուսաստանի հետ, ինչի պատճառը 2008թ. օգոստոսի պատերազմն էր և երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը: Տարածաշրջանային մակարդակում Վրաստանը ներկայանում է որպես տարանցող երկիր, «աշխարհաքաղաքական խաչմերուկ» «Հյուսիս-Հարավ» և

<sup>1</sup> Civil.ge: Новая Концепция национальной безопасности Грузии, <http://www.civil.ge/rus/article.php?id=22911>.

<sup>2</sup> National Security Concept of Georgia, 2011, [http://www.parliament.ge/files/292\\_880\\_927746\\_concept\\_en.pdf](http://www.parliament.ge/files/292_880_927746_concept_en.pdf).



«Արևմուտք-Արևելք» հատման առանցքում, ինչպես նաև «Կովկասի կենտրոն», ինչպես սիրում էր ասել նախկին նախագահ Միխայիլ Սասկաշվիլին:

Սակայն վատթարացած ներքաղաքական իրավիճակը՝ պայմանավորված ֆինանսական ճգնաժամով, կառավարող կուսակցության քաղաքական և տնտեսական մոնոպոլացմամբ, ինչպես նաև ռուսական շուկայի փակումը վրացի աշխատանքային միգրանտների ու ապրանքների համար, այս ամենը նպաստեցին երկրի բնակչության դժգոհության աճին: Արդյունքում՝ 2012թ. հոկտեմբերի խորհրդարանական ընտրություններում տեղի ունեցավ անսխադեպ իշխանափոխություն դեմոկրատական ճանապարհով, և երկրում իշխանության եկավ ընդդիմադիր «Վրացական երազանք» կոալիցիան՝ գործարար և մեկենաս Բիձինա Իվանիշվիլու գլխավորությամբ:

### ***Վրաստանի արտաքին քաղաքականությունը 2012թ. հոկտեմբերից հետո և նրա ներքաղաքական չափումը***

2012թ. հոկտեմբերի 1-ի խորհրդարանական ընտրությունները նշանավորեցին առաջին ժողովրդավարական իշխանափոխությունը Վրաստանում: «Վրացական երազանք» ընդդիմադիր կոալիցիան կարողացավ օգտվել երկրի ներքաղաքական իրավիճակը և իշխանությունը փոխելու բնակչության ցանկությունից: Արժե նշել, որ ներքաղաքական խնդիրների կողքին (դժգոհություն նախկին նախագահ Սասկաշվիլու թիմի անսահման իշխանությունից, վերջինի կողմից ընդդիմադիր կուսակցությունների և միավորումների հետապնդումներ և այլն) ցանկություն կար նաև վերականգնել հարաբերությունները հարևան Ռուսաստանի հետ, որը մշտապես արտահանման շուկա է հանդիսացել վրացական արտադրանքի և աշխատուժի համար: Նոր իշխանությունների բոլոր առաջարկությունները ներառված էին «Ուժեղ, դեմոկրատական, միասնական Վրաստանի համար» նախընտրական ծրագրում<sup>1</sup>, որի իրագործմանն էլ ձեռնամուխ եղավ Բիձինա Իվանիշվիլու «Վրացական երազանք» կոալիցիան: Ծրագիրը հաստատվեց խորհրդարանի, զուգահեռաբար՝ կառավարության<sup>2</sup> կողմից 2012թ. հոկտեմբերի 25-ին: Դրանում սոցիալ-տնտեսական ոլորտի խնդիրների կողքին տեղ գտան նաև երկրի արտաքին քաղաքականության վերաբերյալ դրույթներ:

<sup>1</sup> Текст программы: “Для сильной, демократической и единой Грузии”. “Тбилисская неделя”: <http://www.georgianpress.ru/politics/22479-dlya-silnoy-demokraticeskoy-i-edinoy-gruzii.html>.

<sup>2</sup> Новости-Грузия: Парламент Грузии утвердил правительство Иванишвили, Нацдвижение проголосовало против, <http://newsgeorgia.ru/politics/20121025/215293033.html>.

Փաստաթղթի վերլուծությունը ցույց է տալիս, որ նոր ծրագրի և քաղաքականության արտաքին քաղաքական հիմնական վեկտորները գլխավորապես համընկնում են այն ուղղությունների հետ, որոնք նշված էին Վրաստանի 2011թ. արտաքին քաղաքականության հայեցակարգի վերջին խմբագրության մեջ: Այս ծրագրում, ինչպես և 2011թ. հայեցակարգում, երկրի հիմնական գերակայությունը մնում է եվրոպամետ արտաքին քաղաքական կողմնորոշումը, ինչպես նաև Վրաստանի ձգտումը՝ ինտեգրվել և անդամակցել Հյուսիսատլանտյան դաշինքին, նախաստորագրել, իսկ հետագայում նաև ստորագրել ստոգիատիվ անդամակցության համաձայնագիր ԵՄ-ի հետ: Վրաստանի նոր կառավարության «գլխավոր դաշնակիցը» նշվում էր ԱՄՆ-ը<sup>1</sup>: Ինչ վերաբերում է հարևան երկրների հետ փոխհարաբերություններին, ապա այս ուղղությամբ ևս փոփոխություններ գրեթե չէին կատարվել: Երկրի վարչապետը, ինչպես և կառավարության մյուս բարձրաստիճան պաշտոնյաները, սկսեցին հայտարարություններ անել Հարավային Կովկասում Վրաստանի էլ ավելի հավասարակշռված արտաքին քաղաքականության մասին<sup>2</sup>: Միակ նորարարությունը երկրի նոր իշխանությունների հրաժարումն էր հակառուսական հռետորաբանությունից և Ռուսաստանի Դաշնության հետ շփումներ հաստատելու ցանկության մասին հայտարարությունները:

Զնայած իշխանափոխությանը՝ նախագահ Միխայիլ Սաակաշվիլին մնաց պետության ղեկավարի պաշտոնին և գլխավորում էր «Միասնական ազգային շարժումը» (ՄԱՇ), որն ընդդիմադիր ճամբար էր անցել: Սահմանադրության փոփոխությունները<sup>3</sup>, որոնք նախաձեռնել էր ինքը՝ Սաակաշվիլին, պետք է ուժի մեջ մտնեին 2013թ. հոկտեմբերի նախագահական ընտրություններից հետո: Այսպիսով, նա մնում էր պետության ղեկավարը՝ իրական լիազորություններով, բայց մասամբ հրաժարվեց դրանցից այսպես կոչված «կոաբատացիայի» (նախորդ և նոր իշխանությունների համակցություն և համագործակցություն) գործընթացի շրջանակում: Մանավանդ որ տեղական ինքնակառավարման մարմիններն այդ պահին կազմված էին ընդդիմադիր ՄԱՇ ներկայացուցիչներից: Այս ամենն իշխող կոալիցիայի համար որոշակի

<sup>1</sup> Тбилисская неделя: «Для сильной, демократической и единой Грузии», <http://www.georgianpress.ru/politics/22479-dlya-silnoy-demokraticeskoy-i-edinoy-gruzii.html>.

<sup>2</sup> Грузия On-line: Иванишвили считает успешной внешней политикой новых властей, <http://www.apsny.ge/2013/pol/1360110723.php>.

<sup>3</sup> Саакашвили подписал изменения в Конституцию Грузии, сокращающие полномочия президента, <http://korrespondent.net/world/1135162-saakashvili-podpisal-izmeneniya-v-konstituciyu-gruzii-sokrashchayushchie-polnomochiya-prezidenta>.

դժվարություններ էր ստեղծում ինչպես երկրի ներքին կյանքում, այնպես էլ Ռուսաստանի հետ շփումները կարգավորելու և «ագրեսիվ հայտարարություններից» հրաժարվելու հարցում:

Տարածաշրջանային առաջին այցելություններին (Բաքու, Երևան, Անկարա) զուգահեռ՝ 2012թ. հոկտեմբերի վերջին ստեղծվեց Վրաստանի վարչապետի՝ Ռուսաստանի հետ փոխհարաբերությունների գծով հատուկ ներկայացուցչի պաշտոնը: Վարչապետ Բիձինա Իվանիշվիլու 2012թ. նոյեմբերի 1-ի որոշմամբ այդ պաշտոնին նշանակվեց ՌԴ-ում Վրաստանի նախկին դեսպան (2000-2004թթ.) Զուրաբ Աբաշիձեն<sup>1</sup>: Այդ ժամանակ էլ հենց սկսվեց երկխոսությունը Մոսկվայի հետ «Աբաշիձե-Կարասին» ձևաչափով, որը լրացրեց 2008-ից (այն պահից, երբ խզվել էին դիվանագիտական հարաբերությունները) գործող Ժնևյան բանավեճերի ձևաչափը Անդրկովկասում անվտանգության վերաբերյալ, որոնք տեղի են ունենում ԵՄ, ՄԱԿ, ԵԱՀԿ միջնորդությամբ, Վրաստանից, Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Աբխազիայից և Հարավային Օսիայից պատվիրակությունների մասնակցությամբ: Որպես բանակցությունների հետևանք՝ ռուսական շուկան բացվեց վրացական գյուղտնտարտադրանքի, հանքային ջրերի և գինու-օղու արդյունաբերության արտադրանքի համար:

Ռուսաստանի հետ երկխոսության պատճառով Միխայիլ Սաակաշվիլու գլխավորած «Միասնական ազգային շարժումը» խիստ քննադատության ենթարկեց կոալիցիայի գործողությունները՝ նշելով, որ կառավարությունը «կասկածի տակ է դրել» Վրաստանի եվրոպական ինտեգրման արտաքին քաղաքական գիծը: Հունվարի 21-ին Ստրասբուրգում, Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի ձմեռային խորհրդաժողովում Միխայիլ Սաակաշվիլին, որպես նախագահ վերջին անգամ ելույթ ունենալով խորհրդարանականների առջև, ներկայացրեց երկրում խորհրդարանական ընտրություններից հետո ստեղծված ներքաղաքական իրավիճակը<sup>2</sup>՝ հայտարարելով, թե Վրաստանի ներկայիս և նախորդ կառավարությունների միջև չկա երկրի արտաքին քաղաքական գծի վերաբերյալ միասնական տեսլական:

Ընդդիմադիր ՄԱՇ-ի՝ նոր կառավարության վարկաբեկման ռազմավարությունը չեզոքացնելու համար 2013թ. հունվարից սկսեց մշակվել մի

<sup>1</sup> Новости-Грузия: Иванишвили назначил спецпредставителя по вопросам отношений с Россией, <http://www.newsgeorgia.ru/politics/20121101/215306407.html>.

<sup>2</sup> Голос Америки: Саакашвили в ПАСЕ: Россия должна освободиться от имперских амбиций, <http://www.golos-ameriki.ru/content/saakashvili-pace-speech/1588220.html>.

փաստաթուղթ, որը պետք է ամրագրեր Վրաստանի արտաքին քաղաքականության արևմտամետ ուղղվածությունը: Դժվարին բանակրիվներից հետո, որոնք սկսվեցին փետրվարին, խորհրդարանական մեծամասնությունը ՄԱՇ իր ընդդիմախոսներին առաջարկեց խորհրդատվություններ կազմակերպել և ստորագրել միջխմբակցային համաձայնագրեր երկրի արտաքին քաղաքականության վերաբերյալ: «Վրաստանի արտաքին քաղաքականության ուղղությունների մասին» համաձայնագիրը խորհրդարանն ընդունեց միաձայն (89 կողմ- հեղ.) 2013թ. մարտի 7-ին<sup>1</sup>:

Փաստաթուղթը բաղկացած էր 19 կետից, որոնք սահմանում էին Վրաստանի ազգային շահերը և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները: Բանաձևի երրորդ կետը մեկ անգամ ևս ընդգծում էր, որ երկրի արտաքին քաղաքականության գլխավոր ռազմավարական գերակայությունը ինտեգրումն է եվրոպական (ԵՄ) և հյուսիսատլանտյան (ՆԱՏՕ) կառույցներին: Սակայն համաձայնագրի 4-րդ կետն ամրագրում էր, որ Վրաստանի արտաքին քաղաքականության եվրոպական և եվրատլանտյան ուղղություններն առաջին հերթին ծառայում են երկրի կայուն դեմոկրատական զարգացմանն ու անվտանգությանը՝ ուղղված չլինելով որևէ երրորդ պետության դեմ (ենթադրվում էր Ռուսաստանը- հեղ.): Համաձայնագրում, ինչպես և կառավարության ծրագրում և 2011թ. Ազգային անվտանգության հայեցակարգում հատուկ շեշտադրում էր կատարվում ԱՄՆ-ի հետ փոխհարաբերությունների վրա, որը 9-րդ կետում ներկայացվում է որպես Վրաստանի գլխավոր դաշնակից: Մինևույն ժամանակ, 14-րդ կետը շարունակում էր նախորդ իշխանությունների քաղաքականությունը հարևան երկրների հետ փոխհարաբերություններում և նշում էր, որ Վրաստանի համար կարևոր է երկկողմ տնտեսական և քաղաքական հարաբերությունների խորացումն Ադրբեջանի, Թուրքիայի և Հայաստանի հետ:

Խորհրդարանական ընդդիմության հետ որպես կոնսենսուս և ի հաստատումն արտաքին քաղաքականության եվրոպական ու եվրատլանտյան վեկտորների պահպանման՝ միջխմբակցային փաստաթղթում նշվում էր, որ Վրաստանը հրաժարվում է անդամակցել միջազգային այնպիսի կազմակերպությունների, որոնք հակասում են վերը նշված գերակայությանը, ինչը միանշանակ բացառում էր Վրաստանի հնարավոր ընդգրկումը հետխորհրդային միավորումներում, ինչպիսին են ԱՊՀ-ն և ԵԱՏՄ-ն: Համաձայնագրի 11-րդ

<sup>1</sup> Наталия Смольникова: Полный текст резолюции «О направлениях внешней политики Грузии», <http://www.newsgeorgia.ru/politics/20130308/215583721.html>.

կետում նշված էր, որ «Վրաստանը երկխոսություն է վարում Ռուսաստանի հետ ինչպես ժնկում անցկացվող միջազգային մեխանիզմների օգտագործմամբ, այնպես էլ երկկողմ ձևաչափով, իսկ այդ երկխոսության նպատակը կոնֆլիկտի կարգավորումն է, բարիդրացիական հարաբերությունների ձևավորումն ու զարգացումը»:

2013թ. հոկտեմբերին Վրաստանում տեղի ունեցած նախագահական ընտրությունների արդյունքներով հաղթեց «Վրացական երազանք» կառավարող կոալիցիայի թեկնածու Գեորգի Մարգվելաշվիլին: Այդ ժամանակ էլ Բիձինա Իվանիշվիլին, ինչպես մինչ այդ խոստացել էր, «հեռացավ քաղաքականությունից», իսկ նոր կառավարության ղեկավար դարձավ Վրաստանի ՆԳՆ նախկին ղեկավար Իրակլի Ղարիբաշվիլին, որը հայտարարեց, որ շարունակելու է Բիձինա Իվանիշվիլու կառավարության արտաքին քաղաքական գիծը և իրականացնելու է «Ուժեղ, դեմոկրատական, միասնական Վրաստանի համար» կառավարական ծրագիրը: Վրաստանի նոր կառավարության գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ վարչապետի փոփոխությունը ոչ մի կերպ չի ազդել Վրաստանի արտաքին քաղաքական գերակայությունների վրա:

Արդեն նախագահի փոփոխությունից հետո և առ այսօր, վրացուսական շարունակվող բարդ երկխոսության ֆոնին, ՄԱՇ ընդդիմադիր թիմը վերջին տարիներին կազմակերպել է տարբեր տեսակի բողոքի ակցիաներ «Վրացական երազանք» կոալիցիայի այսպես կոչված «ռուսամետ քաղաքականության» դեմ՝ նրան մեղադրելով եվրաինտեգրումից հեռանալու և ռուսական օկուպացիային զիջումներ անելու մեջ<sup>1</sup>:

Զնայած մեղադրանքներին՝ հենց նոր կառավարության օրոք՝ 2013թ. նոյեմբերի 29-ին, Վիլնյուսում ընթացող «Արևելյան գործընկերության» գագաթաժողովի շրջանակներում Վրաստանի ԱԳՆ ղեկավար Մայա Փանջիկիձեն և ԵՄ՝ արտաքին գործերի և անվտանգության ոլորտի հարցերով Գերագույն ներկայացուցիչ Քեթրին Էշթոնը պաշտոնապես նախաստորագրեցին ԵՄ-ին Վրաստանի ասոցացման համաձայնագիրը<sup>2</sup>: Դրան զուգահեռ՝ Վրաստանի Էկոնոմիկայի նախարար Գեորգի Կվիրիկաշվիլին և առևտրի գծով եվրահանձակատար Կարել դե Գուիթը ստորագրեցին ԵՄ-ի հետ ասոցացման

<sup>1</sup> Власти Грузии проводят политику в интересах России, заявили участники митинга в Тбилиси <http://www.kavkaz-uzel.ru/articles/252432/>.

<sup>2</sup> Голос Америки: Грузия парафировала соглашение с Евросоюзом, <http://www.golos-ameriki.ru/content/georgia-vilnius/1800445.html>.

փաստաթղթի այն մասը, որտեղ խոսվում է ազատ առևտրի համապարփակ գոտու մասին: Վրաստանի խորհրդարանն այս փաստաթուղթը հաստատեց 2014թ. հուլիսի 18-ին: Այս քաղաքականության արդյունքում 2014թ. հունիսի 27-ին ստորագրվեց ԵՄ-ի հետ ասոցացման համաձայնագիրը, ներառյալ ազատ առևտրի խորացված գոտու մասին պայմանագիրը (*DCFTA*), որը փոխարինեց Վրաստանի և ԵՄ-ի միջև 1996թ. «Գործընկերության և համագործակցության մասին» համաձայնագրին: Սրանով իսկ ԵՄ-ի հետ ասոցացման համաձայնագիրը նոր իրավական հիմք ստեղծեց Վրաստանի և ԵՄ հետագա համագործակցության համար: Ներկա պահին համաձայնագիրն անցել է ԵՄ անդամ երկրների և Եվրախորհրդարանի կողմից վավերացման ընթացակարգը և ամբողջովին գործարկվել է:

2015թ. վերջին՝ դեկտեմբերի 18-ին, Եվրահանձնաժողովը հրապարակեց վերջնական դրական եզրակացությունն այն մասին, որ Վրաստանը կատարել է Եվրամիության հետ Վիզային ռեժիմի ազատականացման գործողությունների պլանը (*VZAP*): Հաշվետվության մեջ ասված էր, որ պահանջների կատարումը համապատասխանում է եվրոպական և միջազգային չափորոշիչներին: Դրանից հետո, ինչպես և սպասվում էր, մարտի 9-ին Եվրահանձնաժողովը հանդես եկավ պաշտոնական առաջարկությամբ<sup>1</sup>՝ ուղղված Եվրախորհրդարանին և ԵՄ Խորհրդին՝ վերացնել վիզաները Վրաստանի քաղաքացիների համար Շենգենյան գոտում: Օրենսդրական նախաձեռնությունը, որը հրապարակվեց Եվրամիության փաստաթղթերի ցանկում, ուժի մեջ մտնելուց առաջ պետք է հաստատեն Եվրախորհրդարանը և ԵՄ անդամ պետությունները: Նախաձեռնության մեջ ասվում է, որ բարեփոխումների տեսակետից Վրաստանը կատարել է Վիզային ազատականացման գործողությունների պլանով նախատեսված բոլոր խնդիրները և «բավարարում է բոլոր համապատասխան չափանիշներին, որպեսզի նրա քաղաքացիներն ազատվեն վիզային պահանջներից»: Վրաստանի ղեկավարությունը ողջունեց Եվրահանձնաժողովի այս նախաձեռնությունը՝ հույս հայտնելով, որ այն շուտով կհաստատվի:

Ինչ վերաբերում է ՆԱՏՕ-ի հետ Վրաստանի հարաբերություններին, ապա 2014թ. սեպտեմբերին, Ուելսում ՆԱՏՕ զագաթաժողովի ընթացքում դաշինքի անդամ երկրների և Վրաստանի կողմից ընդունվեց «Միջոցառումների էական փաթեթ», որը պետք է օգնի Վրաստանին դաշինքին անդամակցելու

<sup>1</sup> Civil.ge: Еврокомиссия предлагает странам ЕС упразднить визы для Грузии  
<http://civil.ge/rus/article.php?id=27900>.

ձգտման գործում: Այս փաստաթղթի շրջանակում 2015թ. օգոստոսի 27-ին Վրաստանի պաշտպանության նախարարության «Կրծանիս» Ազգային ուսումնական կենտրոնի տարածքում հիմնվեց Վրաստանի և ՆԱՏՕ համատեղ վարժանքային և գնահատման կենտրոնը: Չնայած սրան, պաշտոնական Թբիլիսիի նպատակը անդամակցությունն է Հյուսիսատլանտյան դաշինքին, այլ ոչ թե այն միջանկյալ փուլը, որը կա այսօր:

Բրյուսելի հստակ պատասխանն ստացվեց 2015թ. դեկտեմբերի 2-ին, ՆԱՏՕ անդամ երկրների արտգործնախարարների հանդիպման ժամանակ, երբ վերջինները հայտարարեցին<sup>1</sup>, թե ՆԱՏՕ-ին անդամակցելու համար Վրաստանը պետք է անցնի «Անդամակցության գործողությունների պլանի» փուլը, որը երկրին չեն տրամադրում 2008-ից հետո: Հետո արդեն՝ փետրվարի 11-ին «Վրաստան-ՆԱՏՕ» հանձնաժողովի հերթական բրյուսելյան նիստում (ՆԱՏՕ անդամ պետությունների<sup>2</sup> և Վրաստանի պաշտպանության նախարարների մակարդակով) ՆԱՏՕ գլխավոր քարտուղար Յենս Սթոլտենբերգը նշեց, որ Վրաստանի հետ աշխատանք է տարվում ՆԱՏՕ 2014թ. ուելսյան գազաթաժողովում համաձայնեցված Էական փաթեթի բոլոր ոլորտների ուղղությամբ:

Մարտի 2-ին Բրյուսել կատարած այցի շրջանակներում Վրաստանի ԱԳ նախարար Միխայիլ Ջանելիձեն հանդիպել է ՆԱՏՕ գլխավոր քարտուղարի տեղակալ Ալեքսանդր Վերշբոուի հետ, որը հաստատել է դաշինքի կողմից Վրաստանին ցուցաբերվող աջակցությունը «բարեփոխումների հավակնոտ օրակարգի» վերաբերյալ: ՆԱՏՕ գլխավոր քարտուղարի տեղակալը նշել է նաև, որ Վրաստան-ՆԱՏՕ Էական փաթեթն իրագործվում է «լավ», և ընդգծել է, որ դաշնակիցները պատրաստ են «գտնել ուղիներ Վրաստանի հետ ՆԱՏՕ համագործակցության ուժեղացման համար»: ԱԳՆ տեղեկատվությամբ՝ նիստի ժամանակ կողմերը քննարկել են նաև ՆԱՏՕ-ին Վրաստանի ինտեգրման գործընթացի զարգացման և քաղաքական ու գործնական համագործակցության խորացման հարցերը՝ դաշինքի Վարչապետի գազաթաժողովին պատրաստվելու համատեքստում, որը տեղի է ունենալու ս.թ. օգոստոսին:

Վրաստանի արտաքին քաղաքական ուղղություններից են Ռուսաստանի հետ փոխհարաբերությունները, որոնք 2012-2015թթ. բավական բարդ են եղել:

<sup>1</sup> Civil.ge: НАТО Грузии: ПДЧ остается неотъемлемой частью интеграции, <http://www.civil.ge/rus/article.php?id=27670>.

<sup>2</sup> NATO Defence Ministers confirm Georgia is moving closer to NATO; [http://www.nato.int/cps/en/natohq/news\\_127982.htm?utm\\_source=twitter&utm\\_medium=smc&utm\\_campaign=160211+defmin+georgia](http://www.nato.int/cps/en/natohq/news_127982.htm?utm_source=twitter&utm_medium=smc&utm_campaign=160211+defmin+georgia).

Եվ սա՝ այն դեպքում, երբ վրացական ամենամեծ սփյուռքը գտնվում է Ռուսաստանում. այն տարբեր տվյալներով կազմում է մինչև մեկ միլիոն մարդ (ինչպես ՌԴ, այնպես էլ Վրաստանի քաղաքացիներ): Չնայած դիվանագիտական հարաբերությունների բացակայությանը և Աբխազիայի և Հարավային Օսիայի հետ կապված քաղաքական խնդիրներին՝ 2015թ. դրությամբ<sup>1</sup> Ռուսաստանը դեռևս առաջատարն է հանդիսանում Վրաստան կատարվող դրամական փոխանցումների քանակով. նրա բաժինը կազմում է 40% (49% 2014-ին): Վրաստանի Ազգային բանկի տվյալներով՝ 2015թ. Ռուսաստանից Վրաստան է ուղարկվել \$432,68 մլն (39%-ով պակաս, քան 2014-ին) \$1,08 մլրդ ընդհանուր գումարից (\$1,44 մլրդ 2014-ին): Համեմատության համար նշենք, որ երկրորդ տեղում ԵՄ անդամ Հունաստանն է, որտեղից փոխանցվել է \$117,68 մլն (42,5%-ով պակաս, քան 2014-ին): Վրացական արտադրանքի առջև ռուսական շուկայի բացումից հետո Ռուսաստանը մտավ Վրաստանի առևտրային գործընկեր երկրների հնգյակի մեջ: Վրաստանի Վիճակագրական ծառայության տվյալներով՝ 2015թ. Ռուսաստանը հանդիսանում է Վրաստանի երկրորդ առևտրային գործընկերը (երրորդ տեղում՝ 2014թ. տվյալներով) և հինգերորդն է վրացական արտադրանքը ներմուծող երկրների ցուցակում: Վրաստանի և Ռուսաստանի առևտրաշրջանառությունը 2015թ. կազմել է \$788,5 մլն, այդ թվում ներմուծումն աճել է 8,7%-ով՝ կազմելով \$625,6 մլն, իսկ արտահանումը կրճատվել է 40,7%-ով և կազմել \$162,8 մլն: Միջպետական այցելությունների մասով 2015 թվականն ավարտվել է Ռուսաստանի ԱԳՆ դրական որոշմամբ Վրաստանի քաղաքացիների համար վիզային ռեժիմի ազատականացման գծով (պարզեցվել է ցանկացած ժամկետի գործնական, աշխատանքային և ուսումնական վիզաների ստացման կարգը): Սակայն արդեն 2016թ. հունվարին այդ հարաբերությունները քննադատվեցին ինչպես ընդդիմության, այնպես էլ վրացական հասարակայնության մի մասի կողմից: Այս ամենը պայմանավորված էր հարևանների, այդ թվում նաև Ռուսաստանի հետ Թբիլիսիի գազային բանակցություններով, որոնք ավարտվեցին հոգուտ պաշտոնական Բաքվի:

Չնայած արտաքին քաղաքականության վեկտորներից յուրաքանչյուրը կարևոր նշանակություն ունի Վրաստանի համար, այնուամենայնիվ, հարկ է դիտարկել, թե ինչպես է երկրի բնակչությունը գնահատում կառավարության արտաքին քաղաքական գործունեությունը: Դրա համար դիմենք ԱՄՆ Ազ-


<sup>1</sup> *Джонни Меликян*: Грузия в январе 2016 года: обзор внутривалитической ситуации, [http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT\\_ID=14475](http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=14475).



գային-դեմոկրատական ինստիտուտի (NDI) «Հանրային տրամադրությունը Վրաստանում» հետազոտության տվյալներին<sup>1</sup>, որն անցկացվել է փետրվարի 23-ից մինչև մարտի 14-ը: Նշենք նաև, որ, չնայած սոցիալական հետազոտությունները չեն կարող ներկայացնել Վրաստանում տիրող իրավիճակի ամբողջական պատկերը, բայց և այնպես դրանք առավել մոտ են արտաքին քաղաքական դիրքորոշման վերաբերյալ վրացական հասարակությունում տիրող տրամադրությունը ներկայացնելուն:

*Գծապատկեր 1*

*«Ինչպիսի՞ն պետք է լինի Վրաստանի արտաքին քաղաքականությունը»  
հարցի պատասխանները*




Հետազոտության տվյալներով (*Գծապատկեր 1*)՝ պատասխանելով այն հարցին, թե ինչպիսին պետք է լինի Վրաստանի արտաքին քաղաքականությունը, հարցվողների 14%-ը պատասխանել է «արևմտամետ», 52%-ը՝ «արևմտամետ, բայց պետք է լավ հարաբերություններ պահպանել Ռուսաստանի հետ», 16%-ը՝ «ռուսամետ, բայց պետք է լավ հարաբերություններ պահպանել ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի հետ», իսկ 5%-ը պատասխանել է «ռուսամետ»: Միևնույն ժամանակ, հարցվողների 77%-ը հավանություն է տվել Վրաստանի կառավարության հռչակած նպատակին, որպեսզի երկիրը դառնա ԵՄ անդամ. 2015թ. օգոստոսին նրանց թիվը կազմել է 61%: Պատասխանելով «աջակցո՞ւմ եք արդյոք ԵՄ-ի հետ անվիզա ռեժիմ մտցնելու հեռանկարին» հարցին՝

<sup>1</sup> National Democratic Institute, CRRC Georgia: Results of March 2016 Public Opinion Poll in Georgia, <https://www.ndi.org/March-2016-Public-Opinion-Poll-Georgia>.

հարցվողների 84%-ը պատասխանել է դրական, իսկ 72%-ը պատասխանել է, թե դա կարող է իրենց օգուտ բերել: ՆԱՏՕ-ում Վրաստանի ինտեգրման օգտին է արտահայտվել հարցվածների 68%-ը, որոնք հավանություն են տվել կառավարության հռչակած այդ նպատակին: Վրաստանում ՆԱՏՕ հակառակորդները կազմում են 19%:

Գծապատկեր 2

Վրաստանի բնակչության՝ ԵՄ-ին և ԵԱՏՄ-ին կողմնակից լինելու դինամիկան




Հետաքրքիր է նաև Եվրամիությանը և Եվրասիական տնտեսական միությանը Վրաստանի ինտեգրման կողմնակիցների և հակառակորդների դինամիկան: Ընտրություն կատարելով ԵՄ-ի և ԵԱՏՄ-ի միջև՝ հարցվողների 61%-ն արտահայտվել է ԵՄ օգտին, այն դեպքում, երբ 20%-ն ընտրել է ԵԱՏՄ-ն: Այսպիսով, ինչպես նշվել է հետազոտությունում (Գծապատկեր 2), եվրոպական ինտեգրման կողմնակիցների թիվն ավելացել է՝ 2015թ. օգոստոսի 47%-ի փոխարեն հասնելով 61-ի: Դրան զուգահեռ՝ հետազոտության համաձայն, նկատվում է այն բնակիչների թվաքանակի կրճատում, ովքեր կողմնակից են եղել Վրաստանի ինտեգրմանը 2015թ. հունվարի 1-ից գործող Եվրասիական տնտեսական միությանը: Նրանց թիվը կրճատվել է (2015թ. նոյեմբերին՝ 24%, 2015թ. օգոստոսին՝ 28% և այժմ՝ 20%):

Նույն հետազոտության համաձայն՝ Ռուսաստանի հանդեպ Վրաստանի քաղաքացիների վերաբերմունքը կարելի է բնութագրել որպես երկակի. բնակչության մի մասի համար, որը գտնվում է պետական գաղափարախոսության և

ԶԼՄ ազդեցության ներքո, Ռուսաստանն «ամենամեծ սպառնալիքն է» իրենց երկրին, այն դեպքում, երբ բնակչության երկրորդ խմբի համար դա «երկիր է, որը բոլորից լավ կապահովի Վրաստանի անվտանգությունը»: Հարցվածների 47%-ը Ռուսաստանն անվանել է Վրաստանի անվտանգության «մեծագույն սպառնալիքը»: Երկրորդ տեղում ԻԼԻՊ սպառնալիքն է՝ 8%, երրորդ տեղում՝ ԱՄՆ-ը (7%): Այն երկրների/կազմակերպությունների թվում, որոնք լավագույն ձևով կարող են ապահովել Վրաստանի անվտանգությունը, նշվել են ՆԱՏՕ-ն՝ 23%, ԵՄ-ը՝ 13%, և որքան էլ տարօրինակ է՝ Ռուսաստանը՝ 13%, որի ցուցանիշը նույնն է, ինչ և ԵՄ-ինը, որին ջանում է անդամակցել պաշտոնական Թբիլիսին:

Գծապատկեր 3

*Երկրներ/կազմակերպություններ, որոնք կարող են ապահովել Վրաստանի անվտանգությունը*



Ամփոփելով՝ կարելի է ասել, որ այս հետազոտություններն ինչ-որ չափով արտացոլում և հաստատում են այն, որ բնակչությունը պաշտպանում է «Վրացական երազանք» կոալիցիայի, ավելի կոնկրետ՝ «Վրացական երազանք-Դեմոկրատական Վրաստան» կուսակցության արտաքին քաղաքականությունը եվրատլանտյան կառույցներին ինտեգրման մասով՝ զուգահեռ պաշտպանելով նաև Ռուսաստանի հետ փոխհարաբերությունների և երկխոսության պահպանման անհրաժեշտությունը: Պարզ է նաև, որ Վրաստանում նկատվում է հուսախաբություն երկրի քաղաքականությունից բարձր սպասելիքների հարցում, որոնք ստեղծվել էին երկրի իշխանությունների և ԶԼՄ-ի կողմից ՄԱՇ կառավարման շրջանում: Մնում է միայն պրագմատիկ ընտրու-

թյունը, որը ներկա պահին ուղղված է դեպի Բրյուսել: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա հարևան երկիր լինելով, որը տնտեսական ազդեցություն ունի Վրաստանում և նրա ներքաղաքական կյանքի ակտոր է հանդիսանում, կարող է համարվել ինչպես «սպառնալիքի», այնպես էլ հարևան Վրաստանի «անվտանգության ապահովման» գործոն (ոչ միշտ՝ իր կամքով, այլ հիմնականում ի հաշիվ ընդդիմության կողմից «ռուսական սպառնալիքի», «եվրասիականության սպառնալիքի»<sup>1</sup> մանիպուլյացիայի և այլն), ինչը բնական է, եթե հաշվի առնենք Ռուսաստանի ինչպես դրական, այնպես էլ բացասական դերն անկախ Վրաստանի կայացման գործում:

*Ապրիլ, 2016թ.*

**ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ՆՐԱ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԱՓՈՒՄԸ**

*Ջոնի Մեկիքյան*

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է հետխորհրդային շրջանում Վրաստանի արտաքին քաղաքականության կայացման, զարգացման և հետագա փոփոխությունների ուսումնասիրությանը: Վերլուծվել են Վրաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգային փաստաթղթերը և հիմնական գերակայությունները (եվրոպական և եվրատլանտյան ինտեգրում) Միխայիլ Սաակաշվիլու կառավարման տարիներին: Դիտարկվել են նաև արտաքին քաղաքական այն բոլոր փոփոխությունները, որոնք կատարվել են 2012թ. հոկտեմբերի խորհրդարանական ընտրություններից հետո, այդ թվում և ուղղակի երկխոսության հաստատումը Ռուսաստանի հետ: Դիտարկվել են այն փաստաթղթերը, որոնք ընդունվել են Վրաստանի նոր ղեկավարության կողմից՝ «Վրացական երազանք» կոալիցիայի գլխավորությամբ: ԱՄՆ Ազգային դեմոկրատական ինստիտուտի վերջին սոցիետազոտության տվյալների հիման վրա վերլուծվել են Վրաստանի բնակչության կողմից երկրի արտաքին քաղաքականության և դրա հիմնական գերակայությունների վերաբերյալ ընկալումները:

<sup>1</sup>Նշենք վրացի քաղաքական և հասարակական գործիչների շարունակական հայտարարություններն այն մասին, որ երկրում «աճում» կամ «նվազում» է ռուսական պրոպագանդան, ինչպես նաև բողոքները որոշ կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների գործունեությունից, որոնք պիտակավորվում են որպես «ռուսամետ»:

## ВНЕШНЯЯ ПОЛИТИКА ГРУЗИИ И ЕЕ ВНУТРИПОЛИТИЧЕСКОЕ ИЗМЕРЕНИЕ

*Джонни Меликян*

### Резюме

Данная статья посвящена исследованию становления, развития и дальнейшей трансформации внешней политики Грузии в постсоветский период. В исследовании дается анализ концептуальных документов и основных приоритетов внешней политики Грузии в период президентства Михаила Саакашвили – европейской и евроатлантической интеграции. В работе также рассматриваются все те внешнеполитические изменения, которые имели место после парламентских выборов октября 2012г., в том числе налаживание прямого диалога с Россией. Автором рассмотрены также те документы, которые были приняты новым руководством Грузии во главе с коалицией «Грузинская мечта». Кроме того, на основе данных последнего социального исследования Национального демократического института США, был сделан анализ восприятия населением Грузии внешней политики страны и ее основных приоритетов.

## GEORGIA'S FOREIGN POLICY AND ITS DOMESTIC POLITICAL DIMENSION

*Joni Melikyan*

### Resume

The article studies establishment, development and further transformation of Georgia's foreign policy in the post-Soviet period. The study analyzes the concept papers and main priorities of Georgian foreign policy – European and Euro Atlantic integration, in the period of Mikheil Saakashvili's presidency. The study also considers the foreign policy changes that occurred after the parliamentary elections in 2012, including involvement in a direct dialog with Russia. The author reviews the documents adopted by the new Georgian leadership under the Georgian Dream coalition. In addition, an analysis of Georgian population's perceptions of the country's foreign policies and its priorities is provided based on the data of a recent social survey conducted by the US National Democratic Institution.

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՉԵԶՈՔՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՐՑԸ  
ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ**

*Ռոման Կարապետյան\**

*Բանալի բառեր*՝ տարածաշրջանային անվտանգություն, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր, Աբխազիայի և Հարավային Օսիայի հակամարտություններ, Հայաստան-Վրաստան հարաբերություններ:

ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասը դարձավ տարածքային հակամարտությունների ամենաթեժ կետերից մեկն աշխարհում, որտեղ ժամանակային փոքր տարբերությամբ գլուխ բարձրացրին Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի և Հարավային Օսիայի խնդիրները: Կարճ ժամանակահատվածում դրանք վերաճեցին տարածքային լայնամասշտաբ հակամարտությունների՝ ներառելով ներքին և արտաքին բազմաթիվ ակտորների: Ավելի քան երկու և կես տասնամյակների ընթացքում հակամարտությունների կողմերին չի հաջողվում գտնել դրանց լուծման բանալին, և այժմ էլ այս երեք հակամարտությունները շարունակում են պարբերաբար ցնցել և ապակայունացնել տարածաշրջանային հարաբերական անդորրն ու կայունությունը:

Ներկայում այս երեք հիմնահարցերից առավել ակտիվ վիճակում է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը: Խնդրի մի կողմում կանգնած են ինքնորոշման իրավունքի իրացման համար պայքարող Արցախի հայ ժողովուրդն ու նրա անվտանգության երաշխավոր Հայաստանի Հանրապետությունը, իսկ մյուս կողմում՝ Ադրբեջանը: Աբխազիայի և Հարավային Օսիայի դեպքում հատվում են, մի կողմից, անկախության ճանապարհը բռնած երկու ինքնավար հանրապետությունների ու նրանց հիմնական դաշնակից Ռուսաստանի, իսկ մյուս կողմից էլ՝ Վրաստանի շահերը: Փաստորեն, տարածաշրջանում առկա հակամարտությունները դուրս են եկել երկկողմ կամ տարածաշրջանային մակարդակից և արտաքին ակտորների թվի պակաս չեն

\* ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, պ.գ.թ.:

զգում: Հենց արտաքին դերակատարների թիվը, հետևաբար՝ նրանց շահերի բախումն ու կարծիքների տարամետությունն էլ բերում է նրան, որ հակամարտությունների կարգավորման գործընթացները հեռու են դրական միտումներ արձանագրելուց:

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առաջնահերթություններից են հարևան երկրների հետ փոխհարաբերությունների կարգավորումն ու զարգացումը, ինչպես նաև տարածաշրջանի կայուն և անվտանգ զարգացման համար բարենպաստ միջավայրի ստեղծումը: Այս հրամայականներից ելնելով՝ առաջին հերթին կարևորվում է տարածաշրջանում առկա հակամարտությունների խաղաղ կարգավորումը: Հայաստանի համար կարևոր նշանակություն ունեն Վրաստանի հետ հարաբերությունները, ինչն առավել արժևորվում է երկրի երկկողմանի շրջափակման պայմաններում: Սակայն Հայաստանն ու Վրաստանն ունեն սկզբունքորեն տարբերվող դիրքորոշումներ արտաքին քաղաքական և տնտեսական գործընկերների ընտրության հարցում: Տարածաշրջանում վերջին մի քանի տարիների զարգացումներն ու տնտեսաքաղաքական տեղաշարժերը կողմերին մշտապես հեռացնում են միմյանցից, և Վրաստանը ժամանակի ընթացքում դառնում է հենց այդ նույն շրջափակման մի օղակը: Ներկայում Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա եռակողմ ձևաչափով հարաճուն համագործակցությունը ոչ միայն վտանգում է Վրաստանի «խարխուլ չեզոքությունը» Լեռնային Ղարաբաղի հիմնահարցում, այլ նաև անմիջական վտանգ է ներկայացնում Հայաստանի անվտանգության համար: Եթե 1990-ականներին և 21-րդ դարի առաջին տասնամյակում այդ համագործակցությունն ուներ հիմնականում տնտեսական ձևաչափեր, ապա այժմ այն վերաճում է քաղաքական և ռազմական համագործակցության [1, pp. 11-20]: Դժվար է ակնկալել, որ այս պայմաններում Վրաստանը կկարողանա պահպանել լիարժեք չեզոքություն Լեռնային Ղարաբաղի հարցում, հատկապես, եթե վերջին ժամանակներում արդեն ականատես ենք լինում հակառակ պատկերի առավել հաճախակի դրսևորումների:

Տարածքային հակամարտությունների վերաբերյալ ներկա դիրքորոշումները հասկանալու համար նախ անհրաժեշտ է մի փոքր հետ նայել և փորձել դիտարկել հակամարտություններում երկու երկրների պաշտոնական դիրքորոշումների փոփոխման դինամիկան: 1991թ. մարտին այդ ժամանակ դեռ Վրաստանի Գերագույն խորհրդի նախագահ Ջ.Գամսախուրդիան իր

ելույթներից մեկում ասել է. «Ադրբեջանի և Հայաստանի միջև վեճին մենք չենք ուզում միջամտել: Նախկինում ես մի անգամ նշել եմ, որ Ղարաբաղը պատկանում է Հայաստանին, բայց այսօր ես չեմ կարող ունենալ այդպիսի դիրքորոշում» [2, էջ 35]: Այս ելույթի շեշտադրումից կարող ենք եզրակացնել, որ Զ.Գամսախուրդիան, թեպետ անձնական բացահայտ համակրանք ուներ հայկական կողմի հանդեպ, սակայն որպես պետական պաշտոնյա չէր կարող ասել այն, ինչի մասին հայտարարել էր նախկինում: Կարծում ենք, որ այս գիծը պահպանվեց նաև Վրաստանի հաջորդ նախագահների ղեկավարման տարիներին:

Պաշտոնական Թբիլիսիի դիրքորոշումը փոխվում էր Անկարայի հետ հարաբերությունների զարգացմանը զուգընթաց: Վրաստանը, չնայած Աբխազական հակամարտության սրմանն ու թուրքիայի որոշ շրջանակների բացահայտ աջակցությանը վերջինիս, ակտիվորեն զարգացնում էր հարաբերությունները Թուրքիայի հետ: Դրանով Վրաստանը ձգտում էր երկու հիմնական խնդիր լուծել.

1. թուլացնել Ռուսաստանի ազդեցությունը Վրաստանի տնտեսության վրա՝ այն փոխարինելով թուրքական մասնաբաժնով,
2. Թուրքիայի միջոցով զարգացնել կապերը ՆԱՏՕ-ի հետ:

1992թ. մարտին արդեն Անկարա կատարած այցից հետո Վրաստանի պետական խորհրդի նախագահ Է.Շևարդնաձեն հայտարարեց, որ Թուրքիայի հետ Վրաստանի հարաբերությունները մոտ են ռազմավարական լինելուն [3, էջ 43-44]:

Ղեկավարման առաջին տարիներին Էդ.Շևարդնաձեի՝ ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման միջնորդական ջանքերն առավել ակտիվ էին: 1992թ. գարնան սկզբին նա հանդես եկավ հայտարարությամբ, որ անհրաժեշտ է ակտիվացնել հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացը՝ այդ հարցում տեսնելով նաև Վրաստանի ակտիվ միջնորդության հեռանկարը: Ապրիլին Էդ.Շևարդնաձեի միջնորդությամբ Անկարայում տեղի ունեցավ ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի հանդիպումը Ադրբեջանի պաշտոնակից Ա.Էլչիբեյի հետ: Հաշվի առնելով այն, որ հանդիպումը կազմակերպվել էր Թուրքիայի նախագահ Թ.Օզալի հուղարկավորության ընթացքում և տևել է ընդամենը րոպեներ, չենք կարող խոսել դրա արդյունավետության մասին [4, c. 468]:



1992թ. մայիսի 6-ին Թբիլիսի ժամանեց Իտալիայի խորհրդարանի անդամ Ս.Ռաֆայելին՝ ԵԱՀԽ շրջանակներում Լեռնային Ղարաբաղի հարցերով Մինսկի խորհրդածոդովի նախապատրաստման և անցկացման գործում Վրաստանի և անձամբ Էդ.Շևարդնաձեի դերն ու կարգավիճակը որոշելու նպատակով: Հաստատելով հիմնախնդրի կարգավորման հարցին իր նպաստը բերելու պատրաստակամությունը՝ իտալացի խորհրդակցանի հետ հանդիպման ժամանակ Էդ.Շևարդնաձեն կարծիք հայտնեց, որ հակամարտության կարգավորմանն իր նպաստը կարող է բերել տարածաշրջանային երկրների մասնակցությամբ երկխոսության մեկնարկը: Նա առաջարկում էր խորհրդակցությունների շարք անցկացնել Անդրկովկասի երեք երկրների մասնակցությամբ [5]: Հետաքրքիր է, որ ընդամենը երեք ամիս անց արդեն Էդ.Շևարդնաձեն խոսում էր ոչ թե եռակողմ, այլ քառակողմ ձևաչափով երկխոսության մեկնարկի մասին՝ դրա մեջ տեսնելով նաև Թուրքիային: Կարծում ենք, որ պաշտոնական Թբիլիսիի դիրքորոշման մեջ այս փոփոխությունը խոսում էր միմիայն Թուրքիայի հետ աճող համագործակցության մասին [6]:

Հետագայում Էդ.Շևարդնաձեն առավել պասիվ դիրքորոշում որդեգրեց: Նախ, Աբխազիայի և Հարավային Օսիայի հիմնախնդիրների հետ կապված, սրվեցին Ռուսաստանի հետ հարաբերությունները, որից հետո Ռուսաստանի հետ կապող ուղիները գրեթե կտրվեցին, և Վրաստանը հայացքը հառեց դեպի Թուրքիան: Էդ.Շևարդնաձեն լավ գիտակցում էր նաև, որ տարածաշրջանում Վրաստանի դերի բարձրացումը պայմանավորված էր հենց Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրով: Ադրբեջանն աստիճանաբար ընդգրկվում էր արևելք-արևմուտք էներգետիկ հաղորդակցության ծրագրերի մեջ, որոնք վերջինիս համար, Հայաստանի հետ հարաբերությունների բացակայության և Իրանի նկատմամբ արևմտյան պատժամիջոցների առկայության պայմաններում, հնարավոր էր կյանքի կոչել միայն Վրաստանի տարածքով:

1990-ական թթ. վերջից վրաց-ադրբեջանական համագործակցությունը նոր փուլ մտավ, որի առաջին առարկայական արդյունքը Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղն էր: Վրաստանի պաշտոնական շրջանակներում աստիճանաբար սկսեցին ավելի շատ խոսել այն մասին, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրում ստատուս քվոյի և հայ-ադրբեջանական հարաբերություններում լարվածության պահպանման դեպքում է հնարավոր միայն պահպանել և խորացնել տարածաշրջանում Վրաստանի տարանցիկ մոնոպոլիստական

դիրքերը [7, p. 70]: Նույնիսկ այս պայմաններում պաշտոնական Թբիլիսին երբեմն փորձում էր ցույց տալ, թե մտահոգված է հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորմամբ: 1999թ. նոյեմբերի 25-ին Վրաստանի կառավարության նիստում նախագահ Էդ.Շևարձնաձեն ասել է. «Թեև Հայաստանի և Ադրբեջանի միջև դարձյալ մեծ բարդություններ կան, սակայն այստեղ Վրաստանին եզակի դեր է պատկանում: Մենք այդ դերը կարող ենք կատարել երկկողմ կամ եռակողմ հարաբերությունների զարգացման տեսանկյունից»<sup>1</sup>: Ինչ վերաբերում է վրաց-ադրբեջանական հարաձուռն համագործակցությանը, ապա Վրաստանի պաշտոնական շրջանակները պաշտոնական շփումների ժամանակ մշտապես փորձել են հավաստիացնել հայկական կողմին, որ այն չի կարող ուղղված լինել Հայաստանի դեմ: 2001թ. գարնանը պաշտոնական այցով Երևանում գտնվող Վրաստանի արտաքին գործերի նախարար Ի.Մենաղարիշվիլին հայտարարեց, որ ցանկացած համագործակցության ֆորում, որին մասնակցում է Վրաստանը, չի կարող ուղղված լինել Հայաստանի դեմ<sup>2</sup>:

Վրաց-թյուրքական համագործակցության հիմքերն էլ ավելի ամրացան Մ.Սաակաշվիլու նախագահության տարիներին, որը ոչ միայն այրեց Ռուսաստանի հետ հարաբերությունների բոլոր կամուրջները, այլ նաև ամբողջությամբ սևեռվեց դեպի արևմուտք: 2008թ. Հարավային Օսիայի պատերազմով տարածաշրջանի երկրների միջև անդունդն էլ ավելի մեծ ճեղքեր տվեց՝ ավելացնելով տարածաշրջանային անվտանգության սպառնալիքների չափաբաժինը: Պաշտոնական Երևանը ռուս-վրացական հաշտեցման գործընթացում միջնորդության մի քանի փորձեր արեց, սակայն այդպես էլ չհաջողվեց ստանձնել հաշտարարի դերը: Որքան էլ մեծ էին սպասելիքներն ու կանխատեսումները՝ ռուս-վրացական երկխոսությունը չկայացավ նաև Մ.Սաակաշվիլու հեռանալուց հետո: Ավելին, Վրաստանը շարունակեց արտաքին քաղաքականության այն գիծը, որի հիմքերը դրվել էին 1990-ականներին և ամրապնդվել Մ.Սաակաշվիլու նախագահության տարիներին: 2012թ. Վրաստանի վարչապետ դարձած Բ.Իվանիշվիլին իր առաջին պաշտոնական այցը կատարեց Բաքու: Մեր կարծիքով, այս քայլով նա առաջին հերթին տալիս էր այն հարցերի պատասխանները, որոնք ծագել էին Մ.Սաակաշվիլու հեռանալուց հետո:

Եթե նախկինում Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագոր-

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության պատմա-դիվանագիտական (ՀՀ ԱԳՆ ՊԴԱ) բաժնի նյութեր, ցուցակ 5, գործ 290, էջ 83:

<sup>2</sup> ՀՀ ԱԳՆ ՊԴԱ բաժնի նյութեր, ցուցակ 7, գործ 236, էջ 137:

Ծակցությունը հիմնականում ուներ տնտեսական ձևաչափեր, ապա վերջին տարիներին դրանք ներառում են նաև քաղաքական ու ռազմական ուղղություններ: Սա աստիճանաբար բերում է նրան, որ Վրաստանն անխուսափելիորեն հայտնվում է թուրք-ադրբեջանական արտաքին քաղաքական հորձանուտում: Հաճախ նաև ադրբեջանական աղբյուրները տեղեկություններ են տարածում Լեռնային Ղարաբաղի հիմնահարցում Վրաստանի ադրբեջանամետ դիրքորոշման մասով: Այդպիսի դեպքերից մեկի վերաբերյալ էլ 2013թ. հունվարի 17-ին Երևան կատարած այցի ընթացքում մեկնաբանություններ կատարեց Վրաստանի վարչապետ Բ.Իվանիշվիլին. «Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ հայտարարությունն աղավաղված էր<sup>1</sup>, և դրանից հետո տրվել է պաշտոնական պարզաբանում»: Իսկ ինչ վերաբերում է Ի.Ալիևի հետ հանդիպման ընթացքում դարաբաղյան հիմնահարցի վերաբերյալ քննարկմանը, Վրաստանի վարչապետն ասել է հետևյալը. «Ես փոխանցել եմ Ալիևի դիրքորոշումը Հայաստանի վարչապետին, բայց մանրամասները չեմ ներկայացնի: Այս հարցն իսկապես բարդ է, և առաջիկայում բավական դժվար կլինի այն լուծելը: Ես ցանկանում եմ, որ այն կարգավորվի խաղաղ ճանապարհով»<sup>2</sup>:

2014թ. դեկտեմբերի 10-ին Կարսում կայացած հանդիպման ժամանակ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարները հետևյալ բովանդակությամբ համատեղ հայտարարությունն են արել. «Քննարկելով տարածաշրջանում առկա իրավիճակը՝ մենք փոխադարձաբար վերահաստատում ենք աջակցությունը միմյանց ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը: Այս առիթով մեկ անգամ ևս կոչ ենք անում շուտափույթ կերպով հանգուցալուծել Ադրբեջանի Հանրապետության Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում և դրա շուրջ ծավալված հակամարտությունը, ինչպես նաև Վրաստանի տարածաշրջաններում՝ Աբխազիայում և Ցխինվալում առկա կոնֆլիկտները: Այս հակամարտությունները պետք է կարգավորվեն միջազգային իրավունքի հիմնարար նորմերի, մասնավորապես՝ ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և միջազգայնորեն ճանաչված սահմանների անքակտելիության սկզբունքների վրա»<sup>3</sup>:

<sup>1</sup> Նկատի ունի այն, որ ադրբեջանական լրատվամիջոցները, մեկնաբանելով 2013թ. հունվարի 14-ին Լիտվա կատարած այցի ընթացքում Վրաստանի արտգործնախարար Մ.Փանջիկիձեի ելույթը, նշել էին, որ վերջինս հայտարարել է, թե Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը հնարավոր է կարգավորել միայն Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչման միջոցով:

<sup>2</sup> <http://www.aravot.am/2013/01/17/316340/>

<sup>3</sup> <http://armenpress.am/arm/news/787713/>

Ինչ վերաբերում է հիմնախնդրի կարգավորման հարցում միջնորդական առաքելություն իրականացնելուն, ապա այս մասով Վրաստանում պաշտոնական տեսակետները տարբերվում են: Վրաստանի արտաքին գործերի նախարար Մ.Փանջիկիձեն հայտարարել է, որ, թեպետ իրենք ունեն լավ հարաբերություններ Հայաստանի և Ադրբեջանի հետ, այնուամենայնիվ, չեն պատրաստվում խառնվել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման գործընթացին<sup>1</sup>: Փոխարենը, Վրաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Վ.Կապանաձեն ասել է, որ Վրաստանը, որպես երկու երկրների հետ լավ հարաբերություններ ունեցող կողմ, պետք է հնարավորության դեպքում միջնորդի դեր ստանձնի<sup>2</sup>:

Կարծում ենք, որ Ադրբեջանի հետ ռազմական համագործակցության աճի պայմաններում Վրաստանի չեզոքության ապահովման հարցում Հայաստանի խնդիրն ավելի է բարդանում: Այդ համագործակցության հիմքերը դրվել են 2014թ. օգոստոսին Նախիջևանում, որտեղ որոշվել է քայլեր ձեռնարկել եռակողմ ռազմական համագործակցության զարգացման վերաբերյալ, իսկ որպես առաջին քայլ՝ անցկացնել համատեղ գորավարժություններ: Վրաստանի պաշտպանության նախարար Ի.Ալասանիան Նախիջևանում հայտարարել է, որ եռակողմ ձևաչափով հանդիպման նախաձեռնողը վրացական կողմն է՝ մինչև նույն ժամանակ հավելելով, որ այն ուղղված չէ որևէ երրորդ կողմի դեմ<sup>3</sup>: Կարծում ենք, որ, որքան էլ պաշտոնական Թբիլիսին այս դաշինքի գործունեության մեջ չի տեսնում Հայաստանի դեմ միտումներ, այնուամենայնիվ, դա անխուսափելի է: Ադրբեջանի ռազմական ղեկավարությունը նմանատիպ ամեն հանդիպման ժամանակ խոսում է այն մասին, որ Հայաստանը վտանգ է ներկայացնում հարևանների և ողջ տարածաշրջանի երկրների անվտանգության համար:

Եռակողմ ռազմական համագործակցությունը նոր որակներ ստացավ 2015թ ընթացքում: Մայիսի 4-ին Անկարայում երեք երկրների զինված ուժերի ղեկավարների հանդիպման ժամանակ քննարկվել է երկաթուղային գծերի և էներգակիրների մատակարարման ենթակառուցվածքների անվտանգության վերաբերյալ հարցը: Որոշվել է ստեղծել ռազմական համագործակցությունը համակարգող խումբ<sup>4</sup>: 2015թ. վերջերից ռուս-թուրքական հարաբերությունների

<sup>1</sup> <http://armenpress.am/arm/news/704786/lx-khndrum-vrastani-dirqoroshumy-sharunakum-e-mnal-anpopokh.html>

<sup>2</sup> <http://www.azatutyun.am/archive/news/20160404/2031/2031.html?id=27653255>

<sup>3</sup> <http://www.azatutyun.am/content/article/26933461.html>

<sup>4</sup> <http://www.razm.info/63720>

սրման ֆոնին, երբ ավելի հաճախակի են դարձել Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա եռակողմ պաշտոնական շփումները, Թուրքիան առիթը բաց չի թողնում խոսելու Հարավային Կովկասում առկա տարածքային հակամարտությունների մասին: Եթե նախկինում Թուրքիան խուսափում էր բարձրաձայն խոսել Աբխազիայի և Հարավային Օսիայի պատկանելության հարցում իր դիրքորոշման մասին, ապա ներկայում դա անում է հատուկ շեշտադրումով: 2016թ. փետրվարի 19-ին Թբիլիսիում արտգործնախարարների եռակողմ հանդիպման ժամանակ Թուրքիայի ներկայացուցիչ Մ.Չավուշօղլուն հայտարարեց, որ Աբխազիան և Հարավային Օսիան հանդիսանում են Վրաստանի, իսկ Լեռնային Ղարաբաղը՝ Ադրբեջանի տարածք<sup>1</sup>: Բաքվի և Անկարայի ներկայացուցիչները եռակողմ հանդիպումների ժամանակ առիթը բաց չեն թողնում խոսելու նաև հայկական զինված ուժերի «բռնագավթած» տարածքների, նրանց ազդեցիկ գործողությունների և դրանք չեզոքացնելու անհրաժեշտության մասին:

Ինչ վերաբերում է ներկայացվող հիմնախնդրի հակառակ բևեռին՝ պաշտոնական Երևանը մինչ այժմ պահպանում է կառուցողական չեզոքություն Աբխազիայի և Հարավային Օսիայի հիմնախնդիրներում: Բոլոր երկկողմ փաստաթղթերում Հայաստանը ճանաչում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը, իսկ Աբխազիայի և Հարավային Օսիայի հիմնախնդիրներում առաջնորդվում է չեզոքության վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունով: Վրաստանի հետ ձեռք է բերվել համաձայնություն համագործակցել միջազգային կազմակերպություններում և խորհրդակցել՝ նախքան կողմերի համար կարևորություն ներկայացնող հարցերի շուրջ դիրքորոշում արտահայտելը, իսկ այն հարցերում, որտեղ դիրքորոշումները տարբերվում են, պայմանավորվածություն է ձեռք բերվել ձեռնպահ մնալ<sup>2</sup>: Այդ պայմանավորվածությունները Հայաստանը գրեթե անխափան պահում է: Պաշտոնական Երևանը երբեմն նաև խախտել է այդ պայմանավորվածությունը, սակայն՝ հոգուտ Վրաստանի: Օրինակ, 1998թ. ապրիլի 28-30-ը Մոսկվայում կայացած ԱՊՀ երկրների ղեկավարների գագաթաժողովում վրացաբխազական հակամարտության կարգավորման հարցում ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանը պաշտպանեց Վրաստանի դիրքորոշումը, ինչն, իհարկե, արժանացավ պաշտոնական Մոսկվայի բուռն արձագանքին:

<sup>1</sup> <http://civilnet.am/2016/02/19/turkey-azerbaijan-georgia-fm-trilateral-tbilisi/#.Vwp2afmLTIU>

<sup>2</sup> ՀՀ ԱԳՆ ՊԴԱ բաժնի նյութեր, ցուցակ 7, գործ 236, էջ 216:

Պաշտոնական Երևանը մշտապես ջանքեր է գործադրել Վրաստանի տարածքային հակամարտությունների հարցում իր դրական ներուժն օգտագործելու հարցում: Երևանում նույնիսկ մի քանի անգամ կազմակերպվել են վրացական և հարավօսական բանակցող խմբերի ավագ պաշտոնյաների հանդիպումներ<sup>1</sup>: Այդ ջանքերն առավել ակտիվացան 2008թ. հարավօսական պատերազմից հետո: Գաղտնիք չէ, որ Հայաստանի համար մեծ կարևորություն է ներկայացնում Աբխազական երկաթուղու բացման հարցը, ուստի, աբխազական և հարավօսական հակամարտությունների կարգավորումը Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում ունի իր կարևոր տեղը:

Ինչպես վերը նշեցինք, վրացական կողմը չի կարողանում պահպանել պաշտոնական պայմանավորվածությունները: Դրա վառ վկայությունն է այն, որ միջազգային տարբեր հարթակներում Թբիլիսիի ներկայացուցիչները բազմիցս կողմ են քվեարկել ադրբեջանական կամ թուրքական ծագմամբ հակահայկական բանաձևերին: Ամենավերջին վկայությունը Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովում Մեծ Բրիտանիայի և Բոսնիայի ներկայացուցիչների բանաձևերն էին, որոնցից երկուսին էլ նիստերին ներկայացած վրացի երեք պատգամավորները կողմ են քվեարկել: Թեպետ ԵՄԽՎ պատվիրակները չեն ներկայացնում իրենց պետության պաշտոնական դիրքորոշումը, մենք հակված չենք կարծելու, թե նրանք որևէ կերպ հաշվի չեն առնում իրենց պետության արտաքին քաղաքական շահերն ու առաջնահերթությունները: Մյուս կողմից էլ, դա խոսում է սովյալ երկրի, այս դեպքում՝ Վրաստանի, քաղաքական որոշակի շրջանակների դիրքորոշման մասին: Կարծում ենք նաև, որ միջազգային հարթակներում Հայաստանի վերաբերյալ Վրաստանի ներկայացուցիչների գործունեությունը երկու երկրների միջև փախհարաբերությունների հիմնական ցուցիչներից է: Վրաստանի պաշտպանության նախարար Թ.Խիդաշելին հետևյալ ձևով է մեկնաբանել վրացի պատվիրակների քվեարկությունը. «Ես այլևս ԵՄԽՎ Վրաստանի պատվիրակության անդամ չեմ և ընդամենը մեկ տարի առաջ եմ եղել ԵՄԽՎ-ում խորհրդարանական: Ես չեմ կարող մեկնաբանել իմ գործընկերների որոշումը և քվեարկությունը, քանի որ մենք և խորհրդարանը տարբեր մարդիկ ենք: Բայց կարող եմ ասել, որ եթե նայեք Վրաստանի և Հայաստանի պատվիրակների քվեարկության վիճակագրությունը, ես չեմ կարծում, թե մեկը մյուսից գոհ է: Ես դա կարող եմ իմ ԵՄԽՎ

<sup>1</sup> ՀՀ ԱԳՆ ՊԴԱ բաժնի նյութեր, ցուցակ 6, գործ 135, էջ 124:

փորձից ասել: Կարծում եմ, որ այսպես է աշխատում քաղաքականությունը»<sup>1</sup>: Վրացի պաշտոնյայի ելույթի շեշտադրումներից կարող ենք եզրակացնել, որ Թբիլիսիում էլ մտահոգություններ ունեն հայկական կողմի պահելաձևի մասով: Ինչպես ՄԱԿ-ում, այնպես էլ ԵԽՄՎ-ում և եվրոպական այլ հարթակներում եղել են դեպքեր, երբ առաջադրվող բանաձևերը վերաբերել են Հարավային Կովկասի երեք հակամարտություններին միաժամանակ: Այս դեպքում, իհարկե, խնդիրն այլ է, և դրանք անհրաժեշտ է այլ հարթության մեջ դիտարկել:

Կարծում ենք, որ Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցությունն ունի մի քանի հիմնական շեշտադրումներ, որոնք բխում են այս հարթակի մեջ ընդգրկված երկրների՝ իրարից բավականաչափ տարբերվող արտաքին քաղաքական խնդիրներից: Այն առաջին հերթին ուղղված է Ռուսաստանի և Հայաստանի դեմ առանձին-առանձին վերցրած, ինչպես նաև հայ-ռուսական ռազմական համագործակցության դեմ: Մյուս կողմից էլ, այն ունի հակաիրանական որոշակի շեշտադրումներ: Թուրքիան դեռևս 1990-ականներից փորձում է հետ պահել Վրաստանին Իրանի հետ համագործակցությունից: Իրանի պաշտոնական շրջանակները մեկ անգամ չէ, որ խոսել են Իրան-Հայաստան-Վրաստան եռակողմ համագործակցության զարգացման հեռանկարների մասին<sup>2</sup>: Պաշտոնական Թեհրանը բազմիցս դիվանագիտական խողովակներով հասկացրել է Թբիլիսիին, որ վերջինս չափից շատ մեծ ուշադրություն է դարձնում Ադրբեջանի հետ հարաբերություններին և անտեսում Իրանի հետ համագործակցելու հեռանկարները<sup>3</sup>: Իրանը ցանկանում էր դառնալ դեպի Վրաստան գազ արտահանող հիմնական երկիրը, սակայն Վրաստանը նախընտրեց ադրբեջանական գազը: Կարծում ենք, որ այս հարցում մեծ դեր խաղաց նաև այն հանգամանքը, որ Վրաստանը, արտաքին քաղաքականության օրակարգում առաջնային տեղում դիտարկելով արևմուտքի հետ հարաբերությունների զարգացումը՝ ինչ-որ տեղ չէր համարձակվում ծավալել հարաբերությունները մի երկրի հետ, որը նույն արևմուտքի կողմից ենթարկվում էր տնտեսական պատժամիջոցների: Ներկայում, երբ այդ պատժամիջոցների մեծ մասը հանվել է, նոր հեռանկարներ են բացվում Իրան-Հայաստան-Վրաստան եռակողմ համագործակցության համար, որի հիմքերը դրվել են նույն ուղղությամբ գազատարի կառուցման վերաբերյալ պայմանագրի ստորագրումով:

<sup>1</sup> <http://www.aypoupen.com/4612/armenia-beware-of-the-georgian-friend/>

<sup>2</sup> ՀՀ ԱԳՆ ՊՂԱ բաժնի կյութեր, ցուցակ 3, գործ 118, էջ 127:

<sup>3</sup> ՀՀ ԱԳՆ ՊՂԱ բաժնի կյութեր, ցուցակ 6, գործ 135, էջ 61:

Թուրքիայի և Ադրբեջանի հետ համագործակցության զարգացման արդյունքում Վրաստանում առաջ են եկել այլ խնդիրներ ևս: Ներկայում Վրաստանում արտասահմանյան կապիտալի մեծ մասը թյուրքական ծագում ունի, երկրում ակտիվացել են մահմեդական տարրերը, որոնք ժամանակի ընթացքում կարող են բերել Վրաստանի «թուրքականացման» ու անմիջական վտանգ ներկայացնել նրա անվտանգությանը:

Փաստորեն, ներկայում Վրաստանը, մի կողմից, տուրք է տալիս թուրք-ադրբեջանական քաղաքական տանդեմին, մյուս կողմից էլ՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների բարելավման բացասական միտումների պայմաններում, էլ ավելի է հեռանում Աբխազիայի և Հարավային Օսիայի հարցերում վերջինիս հետ բանակցային սեղանի շուրջ նստելու հեռանկարից: Պաշտոնական Երևանն էլ, ունենալով ռազմավարական նշանակության հարաբերություններ Ռուսաստանի հետ, չի աջակցում Վրաստանի կողմից առաջադրվող հակառուսական բանաձևերին: Կարծում ենք, որ այս պարագայում պետք է գտնել մի այնպիսի բանաձև, որի դեպքում կողմերն առաջին հերթին չեն վնասի միմյանց շահերը, և հետո՝ իրենց նպաստը կբերեն հակամարտությունների կարգավորմանը: Կարծում ենք նաև, որ կողմերի ներուժը դեռևս սպառված չէ, և այս առումով նրանք շատ անելիքներ ունեն: Այս պահին լավագույն տարբերակը կլինի փոխադարձ չեզոքության պահպանման վերաբերյալ պայմանավորվածությունների կատարումը, իսկ որպես հեռակա նպատակ պետք է դիտարկել բազմակողմ ձևաչափով բանակցությունների սեղանի շուրջ նստելու հեռանկարը:

2016թ. ապրիլի սկզբին Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի լայնամասշտաբ ռազմական գործողությունների ծավալման պայմաններում այս հիմնախնդիրն առավել քան արդիական է դառնում: Ներկայում մեր խնդիրը պետք է լինի նաև Վրաստանի հետ երկխոսության օրակարգում այս հարցը առավել հստակ դնելը: Վրաստանը պետք է չեզոքություն պահպանի բոլոր ոլորտներում, այդ թվում՝ երբ իր տարածքը տրամադրում է տարանցիկ փոխադրումների համար: Գաղտնիք չէ, որ Ադրբեջանը Թուրքիայից և եվրոպական գործընկերներից գնած զենքն ու տեխնիկան ներմուծում է Վրաստանի տարածքով: Մինչդեռ Վրաստանը մշտապես խոչընդոտներ, իսկ երբեմն՝ արգելքներ է ստեղծում Ռուսաստանից Հայաստան ներկրվող զենքի և տեխնիկայի համար:

Ներկայացվող հիմնախնդրի ուսումնասիրության արդյունքում փորձել ենք կատարել նաև մի քանի հիմնական հարցադրումներ և եզրահանգումներ:



Արդյո՞ք պաշտոնական Երևանը Վրաստան-Ադրբեջան հարաճուն համագործակցության պայմաններում ունի Թբիլիսիի չեզոքության ապահովման համար բավարար մեխանիզմներ: Կարծում ենք, որ մինչ այժմ մեր գլխավոր և ամենաարդյունավետ գործիքը եղել և մնում է Վրաստանի հայ համայնքի, մասնավորապես՝ ջավախահայության գործոնը: Ուստի, պետք է ամեն գնով ամրացնել և ուժեղացնել այդ գործոնը: Անհրաժեշտ է նաև ամրացնել Իրան-Հայաստան-Վրաստան ձևաչափով համագործակցությունը, որը կնպաստի թուրք-ադրբեջանական շրջափակումից դուրս գալուն: Ընդ որում, այդ համագործակցությունը մեծ չափով կնպաստի և՛ Հայաստանի, և՛ Վրաստանի ապաշրջափակմանը:

*Ապրիլ, 2016թ.*

### Աղբյուրներ և գրականություն

1. Armenian-Georgian Relations: Challenges and opportunities for the Bilateral Cooperation, Yerevan, PSAA, 2014.
2. *Գազանձեան Կ.*, Հայաստանի Հանրապետութեան անաջին տարիները. շարաթական թղթակցութիւնների հավաքածու, Բեյրութ, 1997:
3. *Արշակյան Գ., Եղիազարյան Ա.*, Թուրք-վրացական հարաբերությունները Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության համատեքստում 1991-2001թթ., «21-րդ դար», #2 (48), 2013:
4. *Шилова Р.*, «Армения и Грузия: добрососедство и связь с внешним миром», Армения: проблемы независимого развития, РИСИ, Москва, 1998.
5. «Վրաստան» շարաթաթերթ, 16.04.1992:
6. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 18.07.1992:
7. *Deriglazova L., Minasyan S.*, Nagorno-Karabakh: The Paradoxes of Strength and Weakness in an Asymetric Conflict, CIS Research Papers, #3, June 2011.

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵՎ ՓՈՒՍԴԱՐԸ ՉԵԶՈՔՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՐՑԸ  
ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ**

### *Ռոման Կարապետյան*

#### Ամփոփագիր

Հայաստան-Վրաստան երկկողմ փոխհարաբերությունների գլխավոր հարցերից մեկն էլ Լեռնային Ղարաբաղի, Արխազիայի և Հարավային Օսիայի հակամարտություններում փոխադարձ չեզոքության պահպանման հարցն է: Վերջին երկու տասնամյակներում, մի կողմից, Վրաստանի և Ադրբեջանի միջև, իսկ մյուս կողմից էլ՝ Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա եռակողմ ձևաչափով, համագործակցությունը

գարգացման դինամիկ տեմպեր ունի: Այս պայմաններում Ադրբեջանի և Թուրքիայի հետ Վրաստանի ռազմաքաղաքական համագործակցությունը Հայաստանի դեմ ուղղության նոր երանգներ է ստանում:

## ТЕРРИТОРИАЛЬНЫЕ КОНФЛИКТЫ И ВОПРОС ВЗАИМНОГО НЕЙТРАЛИТЕТА В ПОВЕСТКЕ АРМЯНО-ГРУЗИНСКОГО ДИАЛОГА

*Роман Карапетыан*

Резюме

Одной из основных задач в повестке армяно-грузинских двусторонних отношений является вопрос сохранения нейтралитета по проблемам Нагорного Карабаха, Абхазии и Южной Осетии. За последние два десятилетия сотрудничество между Грузией и Азербайджаном, с одной стороны, и трехсторонний формат сотрудничества Азербайджан-Грузия-Турция – с другой, имеет динамичные темпы развития. В этих условиях военно-политическое сотрудничество Грузии с Турцией и Азербайджаном принимает новые антиармянские оттенки.

## TERRITORIAL CONFLICTS AND THE ISSUE OF MUTUAL NEUTRALITY IN THE AGENDA OF THE ARMENIAN-GEORGIAN DIALOGUE

*Roman Karapetyan*

Resume

One of the main issues on the agenda of the Armenian-Georgian bilateral relations is to keep neutrality on the Nagorno-Karabakh, Abkhazia and South Ossetia conflicts. Over the last two decades the cooperation between Georgia and Azerbaijan on the one hand, and in Azerbaijan-Georgia-Turkey trilateral format, on the other, has a dynamic pace of development. In these circumstances, Georgian military and political cooperation with Turkey and Azerbaijan gains new overtones of being directed against Armenia.

# ԱՂԻԲԵՋԱՆԱԿԱՆ «ՓԱՓՈՒԿ ՈՒԺՐ» ՎՐԱՍՏԱՆՈՒՄ. ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

## *Անուշավան Բարսեղյան՝*

*Բանալի բառեր՝* աղբբեջանական «փափուկ ուժը» Վրաստանում, աղբբեջանական «փափուկ ուժի» հիմնական տարրերը, «փափուկ ուժի» թիրախը և նպատակները:

Հայաստանի և Վրաստանի միջև համագործակցության հեռանկարները գնահատելու համար, երկկողմանի հնարավորություններն ուսումնասիրելուց զատ, անհրաժեշտ է դիտարկել նաև այն գործոնների ձևավորման միտումները, որոնք կարող են բացասաբար ազդել հայ-վրացական հարաբերությունների վրա:

Այդպիսի գործոններից են Հայաստանի հետ թշնամական հարաբերություններ ունեցող Աղբբեջանի և Թուրքիայի ազդեցության հնարավորությունները Վրաստանի ներքին և արտաքին քաղաքականության վրա:

Ներկայում քաղաքագիտության մեջ լայնորեն ուսումնասիրվում է «փափուկ ուժը»՝ որպես այլ երկրների վրա արդյունավետ ազդեցության կարևոր գործիք: Ըստ ամերիկացի քաղաքագետ Ջ.Նեյի, եթե «կոշտ ուժը» ցանկալի արդյունքի հասնելու նպատակով տնտեսական և ռազմական հզորության կիրառությունն է, ապա «փափուկ ուժի» էությունը մշակույթի, քաղաքական արժեքների և արտաքին քաղաքականության միջոցով երկրի նկատմամբ համակրանքի առաջացման և համատեղ ծրագրերում կամավոր մասնակցության խթանումն է [1]:

Նշենք, սակայն, որ տնտեսական ուժը կարելի է դիտարկել ինչպես «կոշտ», այնպես էլ «փափուկ» ուժի գործիք՝ կախված օգտագործման ձևից: Եթե այն դրսևորվում է տնտեսական էմբարգոների, պատժամիջոցների, հակադեմպինգային մեխանիզմների, ներկրման քվոտաների, արտադրության և արտաքին ներդրումների սահմանափակումների տեսքով և հանդիսանում է որպես «մտրակ» այս կամ այն միջազգային սուբյեկտի վրա ճնշում բանեցնե-

*՝ «Նորավանք» ԳԿՀ քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ:*

լու նպատակով, ապա դա, անշուշտ, «կոշտ» ուժի տարր է: Սակայն նույն այդ ուժը կարող է խաղալ նաև «բլիթի» դեր՝ ապահովելով առևտրային բարենպաստ ռեժիմի և վարկերի տրամադրում, ուղղակի ներդրումներ տնտեսությունում, սովյալ երկրի տարածքում արտադրության հիմնում և այլն:

Մեկ պետության տնտեսական ներկայությունը մյուսի տարածքում ունի ոչ միանշանակ հետևանքներ, եթե այն դիտարկենք ուժային ազդեցության տեսանկյունից: Մի կողմից՝ այն, որպես կանոն, բարենպաստ է այն երկրի համար, որի տարածքում գործում են արտերկրյա արտադրություններ և ծառայություններ: Դրանք ստեղծում են լրացուցիչ աշխատատեղեր, նոր տեխնոլոգիաներ, բավարարում են որոշակի ապրանքների պահանջարկը, խթանում են մրցակցությունը և նպաստում տնտեսության զարգացմանը: Դրա հետ մեկտեղ, դա հանգեցնում է այդ պետության վրա արտաքին ճնշման հնարավորությունների առաջացմանը<sup>1</sup>:

Ուսումնասիրելով անկախություն ստանալուց ի վեր Ադրբեջանի և Վրաստանի միջև ձևավորվող հարաբերությունները՝ կարող ենք արձանագրել Վրաստանում ադրբեջանական «փափուկ ուժի» առաջացման միտումները: Դրա հիմնական տարրերն են.

- էներգետիկ և տրանսպորտային միջազգային նախագծերում համատեղ մասնակցությունը,
- ադրբեջանական էներգակիրներից Վրաստանի միակողմանի կախվածությունը,
- վրացական տնտեսությունում ադրբեջանական կապիտալի աճող ներկայությունը,
- հանրային դիվանագիտությունը:

Այստեղ կարևոր է արձանագրել նաև այն հանգամանքը, որ նշված տարրերը կրում են երկարատև բնույթ, ի տարբերություն «փափուկ ուժի» կարճաժամկետ գործիքների՝ լրատվամիջոցների և սոցիալական մեդիաների:

Առավել մանրամասն անդրադառնանք Վրաստան-Ադրբեջան փոխհարաբերություններին՝ նշելով, սակայն, որ նույնիսկ այս պարագայում հնա-

<sup>1</sup> Ю. Давидов, Понятие «жесткой» «мягкой» силы в теории международных отношений, Журнал теории международных отношений и мировой политики, «Международные процессы», <http://www.intertrends.ru/four/006.htm>

րավոր չէ շրջանցել Թուրքիայի դերը, որն առավել ակնհայտ ընդգծվում է Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցության ձևաչափում: Հարկ է նշել, որ Վրաստանի նկատմամբ Թուրքիայի և Ադրբեջանի ռազմավարական նպատակները և ազդեցության ձևերը շատ ընդհանրություններ ունեն, իսկ մարտավարական ծրագրերը փոխլրացնում են միմյանց:

Մինչ Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցությանն անցնելը, անհրաժեշտ է դիտարկել Վրաստանի և Ադրբեջանի մասնակցությամբ հիմնադրված մեկ այլ միջազգային կազմակերպություն՝ ՎՈւԱՄ-ը, որի շրջանակներում առաջին անգամ փորձ արվեց համակարգված ձևով իրականացնել տարածաշրջանային էներգետիկ և տրանսպորտային նախագծերը:

**ՎՈւԱՄ.** 1997թ. Ստրասբուրգում Վրաստանը, Ուկրաինան, Ադրբեջանը և Մոլդովան (հետագայում միացավ Ուզբեկստանը), համաձայնության գալով ՎՈւԱՄ կազմավորման հարցում, հետապնդում էին հետևյալ հիմնական ընդհանուր նպատակները.

- կասպյան նավթի արտահանումը Եվրոպա այլընտրանքային ճանապարհով,
- տրանսպորտային միջանցքի ստեղծումը Եվրոպայի և Ասիայի միջև,
- տարածքային ամբողջականության սկզբունքի պաշտպանությունը:

Թե՛ էներգետիկ և թե՛ տրանսպորտային նոր ուրվագծվող երթուղիները պետք է իրականացվեին Ռուսաստանը և Իրանը շրջանցելով: Բացի տնտեսական եկամուտներ ստանալուց, կողմերը հետապնդում էին ՌԴ-ից էներգետիկ և քաղաքական կախվածությունը թուլացնելու նպատակ և ակտիվ աջակցություն էին ստանում ԱՄՆ-ից:

Ինչպես կտեսնենք հետագայում, սրանք դարձան հիմնական ընդհանուր նպատակները Վրաստան-Ադրբեջան համագործակցության այլ ձևաչափերի համար ևս:

Ադրբեջանում 1994թ. «դարի պայմանագիրը» կնքելուց հետո առաջնային դարձավ նավթի արտահանման ուղիների հարցը, բացի հյուսիսային ուղղությունից՝ առաջ մղվեց Վրաստան - Սև ծով - Եվրոպա երթուղին, որի որոշ ճյուղավորումներ պետք է անցնեին ուկրաինական նավահանգիստներով:

1998թ. շահագործման հանձնվեցին Բաքու-Նովոռոսիյսկ, 1999թ.՝ Բաքու-Սուփսա խողովակաշարերը, որոնց միջոցով նավահանգիստներ հասած

նավթը լցանավերով պետք է անցնեն Դարդանելի նեղուցը: Թբիլիսին հույս ունեն, որ որպես հիմնական երթուղի կդառնար Բաքու-Սուվիաս տարբերակը, սակայն դրան ամեն կերպ ընդդիմանում էր Թուրքիան՝ մերթընդմերթ սպառնալով փակել Դարդանելի նեղուցը լցանավերի համար: Թե՛ Թուրքիան, թե՛ ԱՄՆ վարչակազմն ակտիվորեն առաջ էին մղում Բաքու-Թբիլիսի-Ջեյհան տարբերակը, որը, կողմերի խորին համոզմամբ, ավելի ամուր իրար կկապեր Ադրբեջանը, Վրաստանը և Թուրքիան: Այս տարբերակին էր հակված նաև Ադրբեջանը, որը ձգտում էր ամրացնել կապերը եղբայրական Թուրքիայի հետ:

Ի վերջո, 1999թ. ԵԱՀԿ Ստամբուլյան խորհրդատվորդի ընթացքում Վրաստանի նախագահը Թուրքիայի և Ադրբեջանի իր գործընկերների հետ ստորագրեց Բաքու-Ջեյհան խողովակաշարի շինարարության մեկնարկի մասին համաձայնագիրը:

ՎՈՒԱՄ երկրներից միայն Ադրբեջանն էր շահագրգռված նշված երթուղու իրականացմամբ, և դա դարձավ այն հիմնական պատճառներից մեկը, որը բերեց այդ կազմակերպության ակտիվության նվազման:

Փոխարենը Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարի (2006թ.) և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի (2007թ.) գործարկմամբ նոր թափ ստացավ Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցությունը, խորացան փոխշահավետ տնտեսական կապերը:

**Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան.** Կլանելով ՎՈՒԱՄ-ի առջև դրված տնտեսական բնույթի հիմնական խնդիրները, այն է՝ էներգետիկ և տրանսպորտային միջազգային նախագծերի իրականացումը, Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցությունը դարձավ գործուն ձևաչափ և ժամանակի ընթացքում վերաճեց քաղաքական միավորման, ինչին նպաստեցին նաև այլ գործոններ:

Նախ 2004թ. Վրաստանի կտրուկ շրջադարձը դեպի Արևմուտք, այնուհետև 2008թ. ռուս-վրացական պատերազմը ստիպեցին Թբիլիսիին ավելի մերձենալ Անկարային և Բաքվին: Փորձելով ազատվել ռուսական ազդեցությունից՝ Վրաստանը հայտնվեց մյուս երկու հարևաններից քաղաքատնտեսական կախվածության մեջ: Ռուսաստանի հետ թշնամական հարաբերությունները նրան գրկեցին տարածաշրջանային այլընտրանքից և ավելի խոցելի դարձրին թուրք-ադրբեջանական տանդեմի համար: Դիտարկելով անկախություն ստանալուց ի վեր Վրաստանի արտաքին քաղաքականության հիմ-

նական վեկտորների փոփոխությունը՝ տեսանելի է դառնում մի օրինաչափություն. որքան երկիրը հեռանում է Ռուսաստանից, այնքան ավելի խորն է հայտնվում թուրք-ադրբեջանական արցանի մեջ:

Մյուս էական գործոնը թուրք-ադրբեջանական եղբայրության նոր բռնկումն էր: 2009-2010թթ. Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման գործընթացը որոշակի բացասական ազդեցություն ունեցավ թուրք-ադրբեջանական հարաբերությունների վրա: 2010թ. օգոստոսին Բաքվում Թուրքիայի նախագահ Ա.Գյուլի և ԱՀ նախագահ Ի.Ալիևի միջև ստորագրված «Ռազմավարական գործընկերության և փոխգործակցության մասին» համաձայնագիրը երկու տարի տևած լարված հարաբերություններից հետո վերականգնեց համերաշխությունը երկու երկրների միջև [2]: Ա.Գյուլի հավաստիացումներն առ այն, թե Թուրքիան մշտապես կլինի Ադրբեջանի կողքին, նոր թափ հաղորդեցին նրանց գործակցությանը, այդ թվում՝ եռակողմ ձևաչափով:


2012թ. Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի արտգործնախարարների հանդիպումը նշանավորվեց Տրապիզոնի հռչակագրի ստորագրմամբ, որը հիմք դրեց փոխադարձ շահերի հիման վրա մշտական խորհրդակցությունների անցկացման համար: Նախկին ընդհանուր նպատակներին ավելացավ տարածաշրջանի անվտանգության և կայունության ընդհանուր մոտեցումների ամրագրումը: Պարբերական բնույթ ստացած հանդիպումների (Տրապիզոն՝ 2012թ., Բաթում՝ 2013թ., Գյանջա՝ 2013թ., Կարս՝ 2014թ., Թբիլիսի՝ 2016թ.) ընթացքում մշտապես ճշգրտվում են գործակցության ընդհանուր և կոնկրետ ուղղությունները, արդեն ուրվագծվում են ռազմական համագործակցության ձևերը:

Անդրադառնանք այս տարի Թբիլիսիում կայացած հինգերորդ եռակողմ հանդիպմանն ընդունված հռչակագրին, որում ԼՂ-ը համարվում է Ադրբեջանի մաս, գերակա են համարվում տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության սկզբունքները, վերահաստատվում է ռազմավարական գործընկերությունը խորացնելու հանձնառությունը, դատապարտվում են փետրվարին Անկարայում և Դիարբեքիքում տեղի ունեցած ահաբեկչությունները, համերաշխություն է հայտնվում Թուրքիային ահաբեկչության դեմ պայքարում:

Հենվելով Վրաստանի Ազգային վիճակագրական տեսչության հրապարակած տվյալների վրա՝ տեսնենք, թե ինչպես է ազդել եռակողմ համագործակցությունն Ադրբեջանի և Թուրքիայի հետ Վրաստանի ապրանքաշրջանա-


ռության և Վրաստանում կատարվող ներդրումների դինամիկայի վրա (Գծապատկեր 1).

Գծապատկեր 1



Եթե նշված ժամանակահատվածում Թուրքիայի կողմից իրականացվող ներդրումների չափաբաժինը գրեթե փոփոխության չի ենթարկվել, ապա Ադրբեջանը շեշտակիորեն մեծացրել է դրանց ծավալները՝ 2015թ. դառնալով առաջինը Վրաստանում ներդրումներ կատարած երկրների շարքում (Գծապատկեր 2.) (ներդրումների կառուցվածքին կանդրադառնանք ավելի ուշ):

Գծապատկեր 2






Վրաստանի արտահանման գծագրում երևում է, որ միջազգային էներգետիկ և տրանսպորտային նախագծերում համատեղ մասնակցությունը և քաղաքական հարաբերությունների բարձր մակարդակը տեսանելի կերպով չեն խթանել Վրաստանի արտահանումը դեպի այդ երկրներ, ինչը տնտեսության զարգացման հիմնական ցուցիչներից մեկն է: Նույնիսկ 2005-2007թթ., երբ Վրաստանը բախվեց գյուղմթերքների և գինու ՌԴ արտահանման արգելանքին, Վրաստանի արտահանման աճը Թուրքիա և Ադրբեջան համեմատելի է Հայաստան արտահանվող ապրանքների աճին:

2011-2014թթ. դեպի Ադրբեջան իրականացված արտահանման կորն ուղիղ համեմատական է այդ տարիներին Վրաստանից ավտոմեքենաների արտահանման դինամիկայի հետ, այսինքն՝ կարող ենք նշել, որ այդ ժամանակահատվածի արտահանման աճը հիմնականում պայմանավորված է դեպի Ադրբեջան ավտոմեքենաների արտահանմամբ:

Գծապատկեր 3



Ներկրման պատկերը վկայում է թուրքական ապրանքների կողմից վրացական շուկան կլանելու մասին: 2007-2008թթ. ադրբեջանական ներկրման աճը պայմանավորված է ռուսական գազից հրաժարվելով և այն ամբողջությամբ Ադրբեջանից ստանալով: Դիագրամները վկայում են, որ Վրաստանը երկու երկրների հետ հարաբերություններում հիմնականում հանդիսանում է որպես սպառող:

Ամփոփելով եռակողմ համագործակցության թեման՝ կարող ենք ասել, որ «փափուկ ուժի» բաղադրիչներից մեկը՝ համատեղ ծրագրերում կամավոր մասնակցությունը, ապահովվում է բազմակողմ ձևաչափով: Մյուս բաղադրիչները՝ տնտեսական, քաղաքական և մշակութային գրավչությունը, Ադրբեջանը փորձում է ապահովել արդեն երկկողմ մակարդակում:

**Վրաստան-Ադրբեջան.** Վրաստանի և Ադրբեջանի փոխհարաբերությունները մշտապես կարևորվել են երկու երկրների ղեկավարության կողմից: Ժամանակին Էդ.Շևարդնաձեն ասում էր, թե «Վրաստանն աշխարհաքաղաքական փակուղի է առանց Ադրբեջանի, այնպես, ինչպես Ադրբեջանն առանց Վրաստանի» [3]: Սակայն երկու երկրների հարաբերությունները խորացան հատկապես Մ.Սասկաշվիլու ղեկավարման տարիներին: Հենց նրա օրոք ընդունված Վրաստանի ազգային անվտանգության հայեցակարգում Ադրբեջանը բնորոշվեց որպես «ռազմավարական գործընկեր», նրա որոշմամբ 2007թ. Վրաստանը հրաժարվեց ռուսական գազից և էներգետիկ լիակատար կախվածության մեջ հայտնվեց Ադրբեջանից: Ներկայում Վրաստան ներկրվող նավթամթերքների և գազի 80-90%-ը բաժին է ընկնում Ադրբեջանին, որն իրականացնում է ադրբեջանական *SOCAR* ընկերությունը: Մինչ 2015թ. հոկտեմբերի 1-ը *SOCAR Georgia*-ն (*SOCAR*-ի դուստր ձեռնարկությունը) Վրաստանում կառուցել է 5150 կմ գազատար և ունի մոտ 208.000 բաժանորդ, 100 բենզինի և դիզելային, 20 գազալիցքավորման կայան:

Ընդհանրապես, էներգետիկ քաղաքականության միջոցով այլ երկրների վրա ներազդելու Բաքվի հակումները նոր չեն: Դրանք դիպուկ բնութագրում է Ա.Յունուսովը՝ ներկայացնելով 1990-ականներին «դարի գործարքը» կնքելուց հետո Ադրբեջանի իշխանության և հանրության շրջանում տիրող իրավիճակը. «Ելնելով երկրում տիրող քաղաքական իրողություններից, մենթալիտետից և ձևավորված կենսակերպից՝ բացարձակ վստահություն էր տիրում, որ ամերիկացի գործարարներին նավթահանքերով և այլ շահավետ գործարքներով հրապուրելով հնարավոր կլինի Բաքվից ազդել ԱՄՆ տարբեր մակարդակներում Ադրբեջանի համար կարևոր որոշումների ընդունման վրա» [4, c. 93]:

Վերջին ամիսներին գազի ներկրման դիվերսիֆիկացման նպատակով Ռուսաստանի և Իրանի հետ Վրաստանի իշխանությունների վարած բանակցությունները և, ի վերջո, ադրբեջանական գազի նոր ծավալների գնման մասին կնքված համաձայնագիրը վկայում են ադրբեջանական «փափուկ

ուժի» ևս մեկ ազդեցիկ դրսևորման մասին: Նպատակի իրագործման համար Բաքվի կողմից գործի մեջ դրվեցին բոլոր լծակները, սկսած ամենաբարձր մակարդակով հանդիպումներից մինչև էներգետիկ ոլորտի ղեկավարների կողմից հնչեցված շանտաժը: Օգտագործվեցին նաև Վրաստանի տնտեսական կյանքում ունեցած ներգրավվածության միջոցով *SOCAR*-ի ձեռք բերած ազդեցության լծակները վրացական որոշ լրատվամիջոցների նկատմամբ, որոնք սկսեցին ամեն կերպ խեղաթուրել էներգակիրների դիվերսիֆիկացմանն ուղղված քաղաքականությունը՝ հաճախ գերծ չմնալով հակառուսական և հակահայկական հրապարակումներից:

Քաղաքական որոշ ընդդիմադիր շրջանակներ նույնպես բացասականորեն արտահայտվեցին ռուսական կամ իրանական գազի գնման հնարավոր գործարքների վերաբերյալ: «Ազատ դեմոկրատներ» կուսակցության առաջնորդներից Ա.Պետրիաշվիլին կասկած հայտնեց, որ «Գազպրոմի» հետ վարվող բանակցությունները կոչված են ծառայելու ոչ թե ազգային, այլ մասնավոր շահերին և լուրջ սպառնալիք են երկրի էներգետիկ անկախությանը, իսկ «Միասնական ազգային շարժում» կուսակցության անդամ Ն.Ցիկրաուլին ներկայացրեց իրենց ավանդական դիրքորոշումն առ այն, որ Ադրբեջանը Վրաստանի ռազմավարական գործընկերն է, և ընթացող բանակցությունները կարող են վնասել վերջինիս շահերին:


Ինչպես արդեն նշվել է վերևում, Վրաստանի ընդհանուր արտաքին ներդրումներում պատկառելի տոկոս են կազմում ադրբեջանական ներդրումները: Դիտարկենք 2015թ. Ադրբեջանի կողմից կատարված ներդրումները բացարձակ արժեքով և այլ երկրների հետ համեմատության մեջ (*Գծապատկեր 4*):

Բնականաբար, այստեղ մեծ տոկոս են կազմում *SOCAR*-ի ներդրած գումարները, ինչպես նաև Հեյդար Ալիևի հիմնադրամի կողմից Քվեմո-Քարթլիում կրթական և մշակութային նախագծերի վրա ծախսված գումարները: Վրաստանում գործում է 300 ադրբեջանական ընկերություն, որոնք գործունեություն են ծավալում շինարարության, զբոսաշրջության և տրանսպորտի ոլորտներում [2]:

Որոշ դեպքերում շինարարությունում արված ներդրումները, բացի բիզնես շահերից, ունեն նաև ռազմավարական նշանակություն: Մասնավորապես, Թբիլիսիի արվարձաններից մեկում ադրբեջանական ներդրումներով կառուցվող թաղամասում ամեն կերպ խրախուսվում է ադրբեջանցիների

բնակեցումը: Վրաստանի խորհրդարանի պատգամավորական հանձնախմբի հաշվարկների համաձայն, սույն թաղամասի ընտրագանգվածը 10 տարի հետո կարող է վճռորոշ լինել Թբիլիսիի քաղաքապետի ընտրություններում:

Գծապատկեր 4



Տրանսպորտային նախագծերը, մասնավորապես՝ Կարծախի անցակետից Ջավախքով Վրաստան գնացող ճանապարհի (վերանորոգվել է թուրքական միջոցներով) և Բաքու-Թբիլիսի-Կարս կառուցվող երկաթուղու ենթակառուցվածքների զարգացումը, կարող են բերել Ջավախքի էթնիկ կազմի փոփոխության՝ ի հաշիվ հայ բնակչության:

Ինչպես նշում է Վրաստանի Եվրասիայի ինստիտուտի փորձագետ Գեորգի Վեկուան, «Քվեմո-Քարթլիի կողմից բիզնես ներկայությունը մեծացնում է Ադրբեջանը, իսկ Աջարիայի կողմից՝ Թուրքիան: Մտահոգություն է առաջացնում այն, որ սրանք ոչ միայն և ոչ այնքան բիզնես նախագծեր են, որքան քաղաքականություն, որը դեռ պարզ չէ, թե ինչի կվերաձվի: Այս նախագծերն առաջ են շարժվում կառուցվող Կարս-Ախալքալաք-Թբիլիսի երկաթուղով դեմոգրաֆիական ծանրակշիռ ամրապնդմամբ»<sup>1</sup>:

Դրական կերպար ստեղծելու նպատակով Բաքուն ակտիվորեն օգտագործում է նաև հանրային դիվանագիտությունը, որը ևս «փափուկ ուժի» տարրերից մեկն է: Այստեղ ներգրավվում են Վրաստանում ադրբեջանական հա-

<sup>1</sup> Турецкая община Аджарии превращается в политический и экономический фактор: грузинские эксперты, <http://regnum.ru/news/polit/1748404.html>

մայնքի ներուժը, մշակութային և կրթական կապերը, փորձագիտական շրջանակների համագործակցության հնարավորությունները:

Պաշտոնական Բաքուն բարդ, գլոբալ քաղաքական և տնտեսական գործընթացների դարաշրջանում, երկրի ազգային շահերի պաշտպանության գործում մեծ հույսեր է կապում ադրբեջանական սփյուռքի հետ: Հատկապես նախատեսվում է սփյուռքի կազմակերպությունների կողմից հանրային դիվանագիտության համալիր մեթոդների օգտագործումը՝ գիտաժողովների, ցուցահանդեսների, մշակութային միջոցառումների անցկացում, գիտական և հրատարակչական գործունեություն, տեղի իշխանության մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն՝ Ադրբեջանի դրական կերպարի ձևավորման նպատակով [5, c. 112]:

Առաջնահերթությունների, նպատակների և խնդիրների թվում նշվում են նաև տվյալ երկրի ներքին հասարակական-քաղաքական կյանքին սփյուռքի ակտիվ մասնակցությունը, համագործակցությունը լոբբիստական կազմակերպությունների հետ [5, c. 114]:

Հանրային մակարդակով հաստատվել է «Ադրբեջանցիների և վրացիների եղբայրության օր», և եթե այդ կապակցությամբ նույնիսկ չանցկացվեն խոշոր միջոցառումներ, տեղեկատվական դաշտում դրա արձարծումը կարող է որոշակի ազդեցություն թողնել հանրային կարծիքի վրա:

Փորձագիտական մակարդակում ադրբեջանական կողմից շարժիչ ուժ է հանդիսանում ԱՀ նախագահին առընթեր Ռազմավարական հետազոտությունների կենտրոնը, որը պարբերաբար իր վերլուծություններում անդրադառնում է Վրաստանին և կապեր հաստատում վրաց գործընկերների հետ: Այդ նպատակին էր ծառայում նաև 2014թ. Բաքվում անցկացված բավական ներկայացուցչական գիտաժողովն ադրբեջանցի, վրացի և թուրք փորձագետների մասնակցությամբ, որի ընթացքում վերահաստատվել է երեք երկրների միջև փորձագիտական մակարդակով համագործակցության խորացման անհրաժեշտությունը:

Թվում էր, թե վրաց-ադրբեջանական հարաբերություններում ստեղծված իրավիճակը պետք է մտահոգություն առաջացնի նաև վրաց փորձագետների շրջանում, սակայն նրանք հիմնականում հրաժարվում են այդ բովանդակությամբ հրապարակային ելույթներից, քանի որ ռուս-թուրքական լարվածության խորապատկերին դա կարող է դիտվել ռուսամետության դրսևորում և անմիջապես բացասական արձագանք ստանալ լրատվամիջոցներում:

Մյուս կողմից, հաշվի առնելով Թուրքիայի և Վրաստանի ուժերի անհամաչափությունը՝ քաղաքական և փորձագիտական մակարդակներում առավել մտահոգիչ է թվում թուրքական աճող ազդեցության վտանգը և որոշակիորեն աչքաթող է արվում արևելյան կողմից եկող նմանատիպ սպառնալիքը: Եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ այս երկու ուժերը ցանկալի արդյունքի հասնելու համար անհրաժեշտ պահին կարող են մեկտեղել իրենց հնարավորությունները, պատկերն ավելի լիարժեք կդառնա:

Վրաստանում, հատկապես Աջարիայում, թուրքական ներկայության դեմ առավել վճռական պայքար է մղում Վրաստանի Ուղղափառ եկեղեցին, որի մի քանի սպասավորներ Աջարիայի ապաթուրքականացման մասին քարոզում են անգամ ժամերգությունների ընթացքում [6]: Նման հեռանկարից խուսափելու և Ադրբեջանի դրական կերպար ստեղծելու նպատակով, հաշվի առնելով Վրաստանի Ուղղափառ եկեղեցու հեղինակությունը և ազդեցությունը վրաց հասարակության վրա, ադրբեջանական *SOCAR* ընկերությունն իր վրա է վերցրել Վրաստանի տարածքում գործող եկեղեցիների կողմից օգտագործված բնական գազի ծախսերը:

Ելնելով Ադրբեջանի ազգային անվտանգության հայեցակարգում սահմանված առաջնային սպառնալիքների բնույթից<sup>1</sup>, արտաքին քաղաքականության հիմնադրույթներից<sup>2</sup> և հաշվի առնելով Հայաստանի ու հայության նկատմամբ Ադրբեջանի թշնամական անթաքույց վերաբերմունքը՝ հասկանալի է, որ Վրաստանում ձևավորված ադրբեջանական «փափուկ ուժի» հիմնական թիրախը Հայաստանն է: Դրա միջոցով Ադրբեջանը փորձում է.

- մեկուսացնել Հայաստանը տարածաշրջանային և միջազգային էներգետիկ, տրանսպորտային նախագծերից,
- խորացնել Հայաստանի տնտեսական շրջափակումը,
- խոչընդոտել Վրաստանի տարածքով Ռուսաստանից Հայաստան ռազմամթերքի առաքմանը,
- վնասել Վրաստանի հետ Հայաստանի հարաբերությունների զարգացմանը,
- Վրաստանում ստեղծել Հայաստանի բացասական կերպար՝ շրջանառության մեջ դնելով Վրաստանից իբր Հայաստանի ունեցած տարածքային պահանջների թեզը,

<sup>1</sup> Концепция национальной безопасности Азербайджанской республики, <http://eurasian-defence.ru/?q=node/30535>

<sup>2</sup> Внешняя Политика Азербайджана, [http://www.azerbaijans.com/content\\_1004\\_ru.html](http://www.azerbaijans.com/content_1004_ru.html)

- տրանսպորտային նախագծերի և ներդրումների միջոցով իրենց օգտին փոխել (ամրապնդել) ռազմավարական նշանակության շրջանների էթնիկ կազմը:

Պաշտոնական Թբիլիսիի հետ հարաբերությունների Բարձր մակարդակը Բաքվի կողմից օգտագործվում է նաև քարոզչական նպատակներով: Ադրբեջանի Բարձրաստիճան պաշտոնյաներն ամեն առիթի դեպքում շեշտում են Նվ.Կովկասի երկրների միջև համագործակցության մեծ ներուժը, որին, իրենց պնդմամբ, խոչընդոտում է Հայաստանի քաղաքականությունը:

Այս ամենով հանդերձ, Վրաստանը կարևորում է Հայաստանի հետ փոխշահավետ կապերի զարգացումը և բարիդրացիական հարաբերությունների խորացումը: Հաշվի առնելով հատկապես Ռուսաստանի հետ առկա խնդրահարույց հարաբերությունների վիճակը և թուրք-ադրբեջանական «աքցանի» մեջ հայտնվելու մշտական վտանգը՝ Վրաստանի ազգային շահերից են բխում Հայաստանի հետ կապերի ընդլայնումը և սերտացումը:

Սա այն դեպքն է, երբ երկու երկրները հավասարապես ունեն միմյանց կարիքը և պետք է համատեղ ջանքեր ձեռնարկեն իրավիճակը շտկելու ուղղությամբ:

*Ապրիլ, 2016թ.*

### Աղբյուրներ և գրականություն

1. *Joseph S. Nye*, *Soft Power. The Means to Success in World Politics*. New York: Public Affairs, 2004.
2. *Javid Valiyev*, *Azerbaijan-Georgia-Turkey Triangle: The Main Features of Cooperation*.
3. Независимый Азербайджан: Новые ориентиры, том 2, стр. 40, РИСИ 2000г., Москва.
4. *Ариф Юнусов*, "Азербайджан в начале XXI века: конфликты и потенциальные угрозы", Баку, 2007.
5. *Ибрагимов И.*, Стратегия эффективного влияния, Внешняя политика, «мягкая сила» и энергетическая дипломатия Азербайджана в 21-м веке, Москва, 2016.
6. Վ.Տեր-Մաթևոսյան, Թուրքիայի քաղաքական և սոցիալ-տնտեսական գործունեության հետևանքները Վրաստանում, «21-րդ ԴԱԸ», # 1, 2016:

**ԱՂԲԵՋԱՆԱԿԱՆ «ՓԱՓՈՒԿ ՈՒԺԸ» ՎՐԱՍՏԱՆՈՒՄ.  
ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

*Անուշավան Բարսեղյան*

Ամփոփագիր

Բազմակողմ և երկկողմ ձևաչափերով հաստատված կապերի միջոցով, Վրաստանի տնտեսությունում ուղղակի ներդրումների, երկկողմանի տնտեսական կապերի ընդլայնման և էներգետիկ, տրանսպորտային միջազգային նախագծերում համատեղ մասնակցության ճանապարհով Ադրբեջանը ձգտում է «փափուկ ուժ» ձևավորել, որը հնարավորություն կտա առաջ մղել սեփական ռազմավարական շահերը: Բաքուն ակտիվորեն օգտագործում է նաև հանրային դիվանագիտությունը (դրանում ներգրավելով Վրաստանում ադրբեջանական համայնքի ներուժը), մշակութային և կրթական կապերը, փորձագիտական շրջանակների համագործակցության հնարավորությունները:

**АЗЕРБАЙДЖАНСКАЯ «МЯГКАЯ СИЛА» В ГРУЗИИ:  
ФОРМИРОВАНИЕ И ОСНОВНЫЕ ЦЕЛИ**

*Анушаван Барсегян*

Резюме

За счет установления связей в многостороннем и двустороннем формате, прямых инвестиций в экономику Грузии, расширения двусторонних экономических связей и совместного участия в международных энергетических и транспортных проектах Азербайджан стремится сформировать «мягкую силу», которая позволит продвигать его собственные стратегические интересы. Баку также активно использует общественную дипломатию (вовлекая в нее потенциал азербайджанской общины Грузии), культурные и образовательные связи, возможности сотрудничества экспертных кругов.

**AZERBAIJANI “SOFT POWER” IN GEORGIA:  
FORMATION AND MAIN OBJECTIVES**

*Anushavan Barseghyan*

Resume

Through connections established in multilateral and bilateral formats, direct investments in Georgian economy, expansion of bilateral economic relations and joint participation in international energy and transport projects Azerbaijan strives to form “soft power” which would allow advancing its strategic interests. Baku actively employs also public diplomacy (also involving the potential of the Azeri community in Georgia), cultural and educational links, and opportunities of collaboration between expert circles.



# ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

## *Արևեն Մանվելյան\**

*Բանայի բառեր*՝ Վրաստան-Հայաստան էներգետիկ համագործակցություն, աշխարհաքաղաքական շահեր, էներգակիր սպառող և արտահանող պետություններ, էներգետիկ համաշխարհային շուկա:

### ***Հարավային Կովկասի էներգետիկ անվտանգության համակարգերը. ընդհանրություններ և տարբերություններ***

Հետխորհրդային շրջանում Հարավային Կովկասում ձևավորվել է էներգետիկ անվտանգության երկու համակարգ, որոնք ստեղծվել են տարբեր խնդիրների լուծման համար: Մի համակարգը կարելի է կոչել տարածաշրջանային, որտեղ ընդգրկված են Ադրբեջանը և Վրաստանը, ինչպես նաև մասամբ Թուրքիան, որի հիմնական նպատակն է ադրբեջանական էներգակիրների արտահանումն Արևմուտք, և որն ապահովում է տարանցիկ պետությունների էներգետիկ անվտանգությունը: Երկրորդ համակարգը լուծում է տեղային խնդիր և ուղղված է Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության համակարգի պահպանմանը:

Թե՛ Ռուսաստան-Հայաստան և թե՛ հետագայում կառուցված Իրան-Հայաստան գազատարները նախատեսված են ՀՀ-ում և Արցախում էներգետիկ անվտանգության համակարգի մակարդակի բարձրացմանը: Նույն խնդրի լուծմանն են ուղղված նաև ՀՀ տարածքում գործող էլեկտրաէներգիայի գեներացնող համակարգերը՝ Մեծամորի ատոմակայանը և կառուցված ու կառուցվող ջերմա- և հիդրոկայանները:

Համագործակցությունը վերը նշված երկու համակարգերի՝ տարածաշրջանայինի և տեղայինի միջև գրեթե զրոյական էր, քանի որ դրանք սկզբից ևեթ տարբեր նպատակներ էին հետապնդում. առաջին դեպքում մաս կազմել էներգակիրների տարանցման գործընթացին և այսպիսով ապահովել նաև

\* ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ.գ.թ., էներգետիկ աշխարհաքաղաքականության և անվտանգության մասնագետ:

սեփական էներգանվտանգության համակարգը, երկրորդ դեպքում, դուրս լինելով տարանցիկ ուղիներից՝ վերածվել էներգասպառման կարևոր բաղկացուցիչի և ապահովել սեփական էներգետիկ անվտանգության համակարգի մակարդակը՝ խուսափելու համար էներգաձգնաժամերի կրկնությունից:

Ինչպես ցույց տվեց վրաց-ռուսական հակամարտությունը, էներգանվտանգության հայկական համակարգը բավական կենսունակ է, և որոշակի թերությունների վերացման դեպքում կարող է լինել բավական կայուն: Հնգօրյա այդ կոնֆլիկտի ժամանակ հիմնական խնդիրն առաջացավ բենզինի մատակարարման հետ կապված, սակայն այդ հարցը կարճ ժամանակ անց հնարավոր եղավ լուծել՝ բենզինի և դիզվառելիքի մատակարարումներ կազմակերպելով Իրանի Իսլամական Հանրապետությունից:

***Էներգետիկ աշխարհաքաղաքական շահերը և Կովկաս-կասպյան տարածաշրջանում մեծ տերությունների դերակատարությունը***

Էներգանվտանգության նշված համակարգերի ձևավորումը պայմանավորված էր ոչ միայն առկա հակամարտություններով, ինչն անհնար էր դարձնում ՀՀ համագործակցությունը էներգակիրներով հարուստ Ադրբեջանի հետ, այլև մեծ տերությունների շահերով, որոնք ԽՍՀՄ քայքայումից հետո ակտիվորեն ներգրավվեցին տարածաշրջանում ընթացող գործընթացներում:

Արևմուտքի, հատկապես ԱՄՆ-ի համար տարածաշրջանը հետաքրքիր էր որպես տրասնպորտային միջանցք առաջին հերթին Կենտրոնական Ասիա դուրս գալու համար, որն իր աշխարհագրական դիրքով աշխարհառավարական նշանակություն ունի վերջինիս համար: Պակաս կարևոր չէր նաև էներգակիրների առկայությունն այդ տարածաշրջանում:

Հետագայում, էներգակիրների գների կտրուկ բարձրացման շրջանում, առաջնային դարձավ նաև էներգետիկ բաղկացուցիչը, և տարածաշրջանը սկսեց դիտարկվել որպես դեպի Արևմուտք Ադրբեջանի և ապա՝ Կենտրոնական Ասիայի էներգակիրների արտահանման կարևորագույն ուղի:

Ռուսաստանի համար Հարավային Կովկասը նախ դիտարկվում է որպես անվտանգության կարևորագույն տարածք, որտեղ արևմտյան տերությունների ակտիվությունը գնահատում է որպես սպառնալիք իր շահերին: Ռուսաստանը նույն կերպ անվտանգության կարևոր բաղկացուցիչ էր դիտարկում նաև Կասպից ծովի ավազանը:

Կովկաս-կասպյան տարածաշրջանի նկատմամբ իր քաղաքականությունը մշակելիս ԱՄՆ-ը առաջին հերթին շարժվում էր էներգետիկ աշխարհաքաղաքականության հայտնի սկզբունքով՝ վերահսկել էներգակիրների ոչ միայն արդյունահանման, այլև դրանց տարանցման ուղիները<sup>1</sup>:

Տարածաշրջանի նկատմամբ Եվրամիության, ԱՄՆ և Ռուսաստանի մոտեցումների այս տարբերությունները և հակադրություններն ուղղակիորեն իրենց հակասությունների մեջ են ներքաշում տարածաշրջանի պետություններին, որոնք շատ դեպքերում հայտնվում են տարբեր ճամբարներում, ինչը խանգարում է նաև հետագա համագործակցությանը:

***Իրանի դեմ պատժամիջոցների չեղարկումը և էներգակիրների ցածր գների ազդեցությունը տարածաշրջանի էներգետիկ և անվտանգային դինամիկայի վրա***

Հարավային Կովկասում ընթացող փոփոխությունները պայմանավորված են Մեծ Մերձավոր Արևելքում տեղի ունեցող խորքային ճգնաժամով, որը նախ և առաջ արտահայտվում է Սիրիայում և Իրաքում ընթացող պատերազմներով և դրա շուրջ մեծ տերությունների միջև ծավալվող նոր մրցակցությամբ: Իսկ էներգետիկ շուկայում առկա փոփոխություններն արտահայտվում են երկու երևույթով՝ միջազգային սակարաններում նավթի գների անկմամբ և Իրանի նկատմամբ պատժամիջոցների չեղարկմամբ: Ի դեպ, այս երկու գործընթացը կարելի է գնահատել որպես նույն գործողության երկու տարբեր կողմ, որոնք միմյանց հետ կապված են և նպատակ են հետապնդում արմատական փոփոխություն իրականացնել նավթի համաշխարհային շուկայում՝ նվազեցնելու համար նավթի գները: Սա էլ, իր հերթին, էականորեն ազդում է ոչ միայն էներգետիկ անվտանգության գլոբալ, այլև տեղային համակարգերի վրա:

Այս փոփոխությունները հատկապես էական ազդեցություն են գործում Հարավային Կովկասի հանրապետությունների վրա, երբ էներգետիկ համաշխարհային շուկայում նկատելի է դառնում Իրանի դերակատարության աճը, որի ազդեցությունը տարածաշրջանի պետությունների էներգետիկ անվտանգության համակարգերի վրա դեռևս մինչև վերջ ուսումնասիրված և գնահատված չէ:

Իրանի մուտքը Հարավային Կովկասի էներգետիկ շուկա, եթե, իհարկե, այն ճիշտ գնահատվի և օգտագործվի, կարող է զգալիորեն փոխել այդ դաշտը՝

<sup>1</sup> *Malvin A. Conant, Farn Racine Gold, The Geopolitics of Energy. Westview press. Boulder, Colorado. 1978.*

այն հավասարակշռելով և բարձրացնելով էներգակիրներ սպառող պետությունների դերակատարությունն ու նվազեցնելով նրանց կախվածությունը տարածաշրջան էներգակիրներ ներկրող հիմնական պետություններից՝ Ռուսաստանից և Ադրբեյջանից:

***Էներգետիկ համագործակցության նոր ձևաչափերի  
ձևավորման օրինաչափությունները***

Վերը նշված փոփոխությունները հուշում են, որ էներգակիրներ սպառող պետությունները պետք է մշակեն համագործակցության նոր ձևաչափ, որը կհամապատասխանի և համահունչ կլինի էներգետիկ համաշխարհային շուկայում առկա նոր մարտահրավերներին: Իսկ այդ մարտահրավերներն առաջին հերթին արտահայտվում են էներգետիկ աշխարհառազմավարական կենտրոնների տեղաշարժով, այսինքն, երբ էներգետիկ գործոնի, հատկապես դրա գնագոյացման վրա ազդելու ռեսուրսներն այդ տարածաշրջանները սկսում են կորցնել: Սա հատկապես նկատելի է Մեծ Մերձավոր Արևելքի օրինակով, երբ վերջինս շարունակաբար կորցնում է նախկին նշանակությունը որպես համաշխարհային շուկա նավթի հիմնական մատակարարի և գնագոյացման քաղաքականության վրա ազդող կարևորագույն տարածաշրջանի:

Բացի այդ, էներգետիկ հզորությունների ստեղծման հարցում նոր տեխնոլոգիաների կիրառումը՝ այսպես կոչված վերականգնողական էներգետիկայի զարգացումը, էապես ազդում է էներգետիկ հումքի դասական մատակարար պետությունների վարքագծի վրա՝ շարունակաբար նվազեցնելով նրանց նշանակությունը որպես էներգետիկ շուկայի հիմնական խաղացողների:

Հիբրիդային և էլեկտրական շարժիչով աշխատող մեքենաների արտադրության կտրուկ աճը և այդ տեխնոլոգիաների էժանացումը սկսում են արմատապես փոխել նաև այդ շուկան՝ անընդհատ նվազեցնելով նավթ արդյունահանող պետությունների կշիռը մեքենաշինության համաշխարհային շուկայում:

***Էներգակիրներ սպառող և արտահանող պետությունների  
շահերի բախման օրինաչափության և համագործակցության  
անհրաժեշտության մասին***

Գործուն և արդյունավետ էներգետիկ անվտանգության համակարգերն անհրաժեշտ են ինչպես էներգակիրներ արդյունահանող, այնպես էլ սպառող

պետություններին: Եթե առաջինների համար կարևոր են էներգակիրների արտահանման կայունությունը և շուկաների բազմազանությունը, ապա երկրորդների համար էական է ներմուծման նոր աղբյուրների և տարանցիկ ուղիների բազմազանացումը:

Կարևոր է նաև նոր տեխնոլոգիաների միջոցով էներգատար արտադրությունում էներգակիրների սպառման ծավալների նվազեցումը և առկա միջոցների ավելի արդյունավետ օգտագործումը բարձրացնելու հարցը:

Միջազգային հարաբերություններում արդյունահանող և սպառող պետությունների միջև առկա ու խորացող հակասություններն արտահայտվել են նաև տարբեր միջազգային կառույցների ստեղծմամբ, ինչպես, օրինակ, ՕՊԵԿ-ը (*The Organization of the Petroleum Exporting Countries (OPEC)*<sup>1</sup> և Միջազգային էներգետիկ գործակալությունը (*The International Energy Agency(IEA)*)<sup>2</sup>: Եթե առաջինը ստեղծվեց նավթ արտահանող պետությունների շահերի պաշտպանության համար, ապա երկրորդը 1973թ. հայտնի էմբարգոյից հետո նպատակ է հետապնդում պաշտպանել էներգակիրներ սպառող պետությունների շահերը:

Արտահանող և սպառող պետությունների միջև ձևավորված հակասությունները և ընթացող հակամարտությունը հաճախ դառնում են վճռական և էապես ազդում են միջպետական և միջազգային հարաբերությունների վրա: Վերը նշված կառույցներն էներգակիրների արդյունահանման, տարանցման, բաշխման և այդ բնագավառում նոր տեխնոլոգիաների ներմուծման հարցում ձեռք են բերել կարևոր խաղացողի նշանակություն: Այդ կազմակերպությունների անդամ պետությունների շահերի ընդհանրությունը միջազգային և էներգետիկ անվտանգության հարցերում ստիպում է համատեղել սեփական ջանքերը՝ ստեղծված իրավիճակում առավելագույն օգուտը ստանալու մղումով:

Միջազգային էներգետիկ շուկայում վերջին երկու տարիներին տեղի ունեցող փոփոխությունները մեկ անգամ ևս փաստում են, որ էներգակիրներ արտահանող պետությունները սկսում են կորցնել կարևոր խաղացողի իրենց կարգավիճակը և այն զիջում են նոր տեխնոլոգիաների տիրապետող, սակայն էներգակիրներով աղքատ պետություններին, վերջիններիս նշանակությունն էներգետիկ շուկայում շարունակ աճում է՝ փոխելով միջազգային էներգետիկ շուկայի ընդհանուր պատկերը:

<sup>1</sup> The Organization of the Petroleum Exporting Countries (OPEC), [http://www.opec.org/opec\\_web/en/](http://www.opec.org/opec_web/en/)

<sup>2</sup> The International Energy Agency(IEA)<http://www.iea.org/>

**Հայաստան-Վրաստան էներգետիկ համագործակցության հեռանկարները  
և դրանց կարևորությունը տարածաշրջանում ռազմավարական  
էներգետիկ հավասարակշռության ձևավորման համար**

Վերը նշված փոփոխություններն ազդում են նաև մեր տարածաշրջանի վրա, և համեմատելով Հարավային Կովկասում էներգակիրներ սպառող հիմնական պետությունների՝ Վրաստանի և Հայաստանի շահերը էներգետիկ բնագավառում, նկատելի են դառնում այն ընդհանրությունները, որոնք կան այդ պետությունների միջև, և որոնք հնարավորություն են տալիս կառուցել միասնական մոտեցումներ էներգետիկ անվտանգության հարցում, որոնք հետագայում կարող են հիմք հանդիսանալ ընդհանուր քաղաքականության մշակման համար այդ բնագավառում:

Առաջին նկատելի ընդհանրությունն էներգակիրներ սպառող պետությունների կարգավիճակն է, ինչը նշանակում է, որ էներգետիկ անվտանգության կայուն և ճգնաժամերի դեպքում աշխատող համակարգ ստեղծելու համար երկու պետություններն էլ կարիք ունեն հետևյալ առաջնահերթությունների. առաջին հերթին էներգակիրների ներմուծման աղբյուրների բազմազանեցման, երկրորդ հերթին՝ էներգակիրների ուղիների բազմազանեցման և, վերջապես, պետության ներսում էներգետիկ նոր հզորությունների թողարկման: Սրանք այն ուղղություններն են, որոնք հավասարապես կարևոր են երկու պետությունների համար, և որոնք համագործակցության լայն հնարավորություն են տալիս կողմերին:

Եթե համեմատենք իրավիճակն այդ երկու պետությունների՝ Վրաստանի և Հայաստանի էներգետիկ ոլորտում ձևավորվող ընդհանրությունների առումով, ապա նկատելի է առանձին վերցրած մեկ պետության գերիշխանությունն այդ բնագավառում. Հայաստանի դեպքում դա Ռուսաստանն է, Վրաստանի դեպքում՝ Ադրբեյջանը: Նման իրավիճակը խորքային կախվածություն է ստեղծում այդ պետություններից՝ ազդելով ոչ միայն էներգետիկ քաղաքականության, այլև ընդհանրապես պետության անվտանգային համակարգի վրա՝ ստիպելով վերջիններիս ամեն անգամ հաշվի առնել մատակարար պետության շահերն իրենց քաղաքականության մեջ:

Նկատելի է նաև, որ երկու պետություններն էլ էներգետիկ կարողությունների հզորացման համար կարիք ունեն էլեկտրաէներգիայի գեներացման նոր հզորությունների շահագործման, որի ամենամատչելի և արդյունա-

վետ ձևերից է նոր ջերմակայանների կառուցումը, ինչը, սակայն, միաժամանակ նշանակում է գազ մատակարարող հիմնական պետություններից կախվածության մեծացում:

***Էներգակիրներ արտահանող պետությունների թելադրանքից ազատվելու անհրաժեշտության և համագործակցության ձևերի մասին***

Վրաստան-Հայաստան էներգետիկ համագործակցության նոր ժամանակաշրջան է սկսվում, որի հիմնաքարը, կարելի է ասել, դրվել է 2015թ. դեկտեմբերի 23-ին Իրանի, Ռուսաստանի, Վրաստանի և Հայաստանի ներկայացուցիչների միջև փոխըմբռնման հուշագրի ստորագրմամբ<sup>1</sup>: Համաձայն այդ հուշագրի՝ կողմերը սկսում են էլեկտրահաղորդակցման նոր համակարգի կառուցումը, ինչը հնարավորություն կտա միմյանց կապել չորս պետությունների էներգահամակարգերը:

Այս ծրագրի իրականացումը նպաստավոր պայման է ստեղծում, որ Ռուսաստանի, Վրաստանի, Հայաստանի և Իրանի էներգահամակարգերն իրար հետ աշխատեն սինքրոն ռեժիմով, ինչն իր հերթին նպաստում է, որ իրականացվեն ներդրումներ էներգետիկ ոլորտի հզորացման և թողունակության բարձրացման համար:

Այս ներդրումների արդյունքում արդեն 2018թ. շահագործման պետք է հանձնվի Հայաստանից Վրաստան և Իրան մինչև 400 կվտ լարման էլեկտրահաղորդագիծ: Այս ծրագրերի իրականացումը հնարավորություն կտա էլեկտրաէներգիայի փոխհոսքերի հզորությունը մինչև 2021թ. դեպի Վրաստան հասցնել 700 մվտ-ի, իսկ դեպի Իրան՝ առնվազն 1200 մվտ-ի:

Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվի հյուսիս-հարավ էներգամիջանցք, ինչն, իր հերթին, հնարավորություն կտա միաժամանակ աշխատել ԵԱՏՄ և ԵՄ էներգահամակարգերի հետ: Չորս պետությունների էներգահամակարգերի միջև համագործակցության ընդլայնումը հնարավորություն է տալիս ձևավորել տարածաշրջանային էլեկտրաէներգիայի շուկա:

Այս ծրագրի իրականացումը տարածաշրջանում աննախադեպ է թե՛ մասշտաբով և թե՛ հատկապես իր հեռանկարով: Սինքրոն աշխատող համակարգերը հնարավորություն կտան նաև էականորեն փոխել էլեկտրաէներ-

<sup>1</sup>Քառակողմ հանդիպում Հայաստանի, Ռուսաստանի, Վրաստանի և Իրանի մասնակցությամբ, 23.12.2015, See more at: <http://www.minenergy.am/article/520#sthash.QW7vK4le.dpuf>

գիայի գնագոյացման համակարգը և նույնիսկ նպաստել դրա կայունացմանն ու հնարավոր կորուստների նվազմանը:

Սա հնարավորություն կտա եռապատկել, նույնիսկ քառապատկել գազի ներմուծումն Իրանի Իսլամական Հանրապետությունից, ինչն, իր հերթին, կնպաստի ՀՀ-ում գեներացնող նոր հզորությունների շահագործմանը:

Ընդհանրապես, պետք է վերագնահատել Իրանի դերը՝ որպես տարածաշրջանի էներգետիկ մատակարարման համակարգում Ռուսաստանին և Ադրբեյջանին այլընտրանք: Նոր խաղացողի մուտքը և այս հարցում Բանիմաց քաղաքականության իրականացումը հնարավորություն կտան վերջինիս հետ իրականացնել ռազմավարական նշանակության ծրագրեր:

***Ամփոփում (երկկողմ համագործակցության  
չօգտագործված հնարավորությունները)***

Մեծ Մերձավոր Արևելքի ռազմաքաղաքական իրավիճակի փոփոխությունը՝ անվտանգային դինամիկայի նվազումը և էներգետիկ շուկայում տեղի ունեցող կտրուկ փոփոխությունները, հուշում են, որ տարածաշրջանի պետությունները պետք է մշակեն առկա մարտահրավերներին դիմակայելու նոր քաղաքականություն, ինչը հնարավորություն կտա զարգացնել և կայուն պահել անվտանգության համակարգն ընդհանրապես և էներգետիկ համակարգերը՝ մասնավորապես:

Հնարավոր ճգնաժամերի պայմաններում միշտ էլ ամենախոցելիս լինում են էներգետիկ համակարգերը, հետևաբար՝ դրանց անվտանգության մակարդակի բարձրացումն առաջնային է ցանկացած պետության համար: Իսկ էներգակիրների ներմուծումից կախում ունեցող այնպիսի պետությունների համար, ինչպիսին են Վրաստանը և Հայաստանը, այս խնդիրներն առավել ևս կարևոր են, և նրանք պետք է փորձեն այս հարցերը լուծել համատեղ:

Հետխորհրդային շրջանում Վրաստան-Հայաստան հարաբերություններում էներգետիկ գործոնը միշտ կարևոր տեղ է զբաղեցրել, սակայն, միաժամանակ, չի մշակվել համակարգված քաղաքականություն այս ոլորտում, ինչը հնարավորություն կտար նվազեցնել կախումն էներգակիրների ներմուծման պետություններից և դիմակայել առկա մարտահրավերներին:

Կատարվող փոփոխություններն էներգետիկ համաշխարհային շուկայում ընդհանրապես և տարածաշրջանում՝ մասնավորապես, համապա-



տասիսան քաղաքական կամքի առկայության պայմաններում, լավ հնարավորություն են ստեղծում ընդհանուր շահերին համահունչ քաղաքականության մշակման և իրականացման համար:

*Մարտ, 2016թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

*Արմեն Մանվելյան*

Ամփոփագիր

Հնարավոր ճգնաժամերի պայմաններում ամենախոցելի են երկրների էներգետիկ համակարգերն են: Դրանց անվտանգության մակարդակի բարձրացումն առաջնային է ցանկացած պետության համար: Էներգակիրների ներմուծումից կախում ունեցող այնպիսի պետությունների համար, ինչպիսին են Վրաստանը և Հայաստանը, այս խնդիրներն առավել կարևոր են, և նրանք պետք է փորձեն այս հարցերը լուծել համատեղ:

## ОБ ЭНЕРГЕТИЧЕСКОМ СОТРУДНИЧЕСТВЕ АРМЕНИЯ-ГРУЗИЯ

*Армен Манвелян*

Резюме

В условиях возможных кризисов наиболее уязвимыми являются энергетические системы государств. Повышение уровня их безопасности – приоритетная задача любой страны. Для таких зависящих от импорта энергоносителей стран, как Грузия и Армения, эти вопросы особенно важны, и им стоит попытаться решить их совместными усилиями.

## ON THE ISSUE OF ARMENIA-GEORGIA ENERGY COOPERATION

*Armen Manvelyan*

Resume

In potential crises the energy systems of countries are most vulnerable. Increasing their security level is a priority for any state. For countries dependent on energy imports, like Armenia and Georgia, these problems are crucial and they have to try resolving those jointly.

**ՎՐԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՈԼՈՐՏԸ.  
ՎԱՐԿԱՆՇԱՅԻՆ-ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ**

***Կարեն Վերանյան՝***

*Բանալի բառեր՝ վիճակագրություն, վարկանիշ, գիտական, հետազոտական ոլորտ, համեմատական վերլուծություն:*

**1. Արժեքների համաշխարհային հետազոտությունը  
(World Values Survey)**

Արժեքների համաշխարհային հետազոտությունն ուսումնասիրում է մարդկանց արժեքներն ու համոզմունքները և դասակարգում աշխարհի տարբեր երկրներն ու հասարակություններն ըստ նրանց քաղաքակրթական, արժեքաբանական ընդհանրությունների ու առանձնահատկությունների: Մեթոդաբանությունում կիրառվում են մի քանի ցուցիչներ.


1. Ավանդական արժեքները շեշտադրում են կրոնի, ծնող-զավակ հարաբերությունների, ընտանեկան արժեքների կարևորությունը:
2. Աշխարհիկ արժեքները քիչ են կարևորում ավանդական, պահպանողական արժեքները:
3. Հանրային արժեքներն ընդգծում են հանրության տնտեսական և ֆիզիկական անվտանգության հարցերը:
4. «Անհատի» արժեքներնում առաջնահերթ են հանդուրժողականությունը, մարդու իրավունքները:

Կազմակերպության զեկույցում ներառված է նաև քարտեզ, որտեղ պատկերվում են աշխարհի տարբեր երկրներն ըստ իրենց քաղաքակրթական, արժեքաբանական դասակարգումների: Ինչպես տեսնում ենք քարտեզում, Հայաստանն ու Վրաստանը ներառվել են «ուղղափառ» խմբում և դիրքային առումով բավական մոտ են գտնվում միմյանց: Այս դասակարգման մեջ Հայաստանին և Վրաստանին դիրքային առումով մոտ է միայն Ռումի-

---

<sup>1</sup> «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ավագ փորձագետ:

նիան: Մեր տարածաշրջանի մյուս երկիրը՝ Ադրբեջանը, գտնվում է այլ՝ «աֆրիկյան-իսլամական» խմբում, թեև զբաղեցրած դիրքով մոտ է Հայաստանին ու Վրաստանին:



## 2. Բուհերի վարկանշավորում, Webometrics Ranking of World Universities

Աշխարհի լավագույն բուհերի վարկանշավորման *Webometrics Ranking of World Universities* հետազոտությունով զբաղվում է *Cybermetrics* հետազոտական խումբը, որը գործում է Իսպանիայի Ազգային հետազոտական խորհրդի (*Spanish National Research Council*) կազմում: Հետազոտությունում կիրառված մեթոդաբանությունը և գնահատման մոտեցումները համապատասխանում են բուհերի վարկանշավորման բեռլինյան սկզբունքներին (*Berlin Principles on Ranking of Higher Education Institutions*): Վարկանշավորման համար ընտրվել են մի քանի մեթոդաբանական ցուցիչներ.

1. էլեկտրոնային կայքէջին հղումների քանակը,
2. կայքում տեղադրված արժեքավոր նյութերի քանակը,
3. հրատարակված նյութերի քանակը և դրանց հղումները:

Աղյուսակ 1-ում ներկայացված են տարածաշրջանի 3 պետությունների լավագույն բուհերն ըստ իրենց զբաղեցրած դիրքերի: Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի առաջատար բուհերն իրենց վարկանշային ցուցանիշով համադրելի են միմյանց հետ: Ջեկույցի տեղեկատվության համաձայն, Հայաստանի առաջատար բուհ ճանաչված ԵՊՀ-ն զբաղեցրել է զեկույցի 2628-րդ դիրքը, իսկ Վրաստանի առաջատար բուհը՝ Թբիլիսիի Իվանե Ջավախաշվիլու անվան պետական համալսարանը, գտնվում է 2006-րդ հորիզոնականում, այն դեպքում, երբ Ադրբեջանի առաջատար բուհը՝ Խազար համալսարանը, ընդամենը 6405-րդ դիրքում է:

Աղյուսակ 1

*Հարավային Կովկասի առաջատար բուհերի վարկանիշը.  
«Վերամետրիքս» զեկույց (2015թ.)*

Երկիր	Հայաստան (բուհ, դիրքը)	Վրաստան (բուհ, դիրքը)	Ադրբեջան (բուհ, դիրքը)
ԲՈՒՀ	ԵՊՀ (2628)	Թբիլիսիի Իվանե Ջավախաշվիլու անվ. պետական համալսարան (2006)	Խազար համալսարան (6405)
	ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի ինստիտուտ (3022)	Իլիա պետական համալսարան (2602)	Կովկաս համալսարան (7023)
	Հայաստանի ամերիկյան համալսարան (4768)	Վրաստանի տեխնիկական համալսարան (6934)	Նախիջևանի մասնավոր համալսարան (7391)

**3. Հարավային Կովկասի երկրների գիտահետազոտական գործունեությունը. վիճակագրական վերլուծություն**

Հետազոտությունը նվիրված է 2002-2007թթ. հարավկովկասյան երկրների գիտության ոլորտին առնչվող քանակական վիճակագրությանը: Առկա տեղեկատվությունը հիմնվում է տարածաշրջանի երկրների վիճակագրական ծառայությունների տվյալների վրա: Նշենք, որ, ի տարբերություն Հայաստանի և Ադրբեջանի, Վրաստանի պարագայում այդ երկրի ազգային վիճակագրական բյուրոյի էլեկտրոնային կայքում գրեթե հիմնովին բացակայում են գիտու-

թյանը վերաբերող վերջին տարիների վիճակագրական տվյալները: Նկատենք, որ ներկայումս Վրաստանի ազգային վիճակագրական բյուրոյի էլեկտրոնային կայքում առկա են այլ ոլորտներում երկրի արձանագրած վիճակագրական տվյալները, ինչպես, օրինակ, կրթության ոլորտում, սակայն կայքի թե՛ վրացալեզու, թե՛ անգլիալեզու բաժիններում 2004-2005թթ. սկսած բացակայում է գիտությանն առնչվող վիճակագրական տեղեկատվությունը: Լավագույն դեպքում, «Կրթություն և մշակույթ» բաժնում տվյալներ կան սուկ բուհական համակարգում դասախոսապրոֆեսորական կազմի թվաքանակի վերաբերյալ: Այս իրողությունը, թերևս, պայմանավորված է 2004թ. Մ.Սակաշվիլու իշխանության գալով և Վրաստանի արտաքին քաղաքական վեկտորների փոփոխման հանգամանքով: Մյուս կողմից, ինչպես կտեսնենք ստորև ներկայացվող աղյուսակներից, 2004-2005թթ. սկսած՝ Վրաստանի գիտահետազոտական ոլորտը (գիտահետազոտական կազմակերպությունների, ոլորտի գիտական անձնակազմի թվաքանակի կտրուկ նվազում) կտրուկ հետընթաց է ապրել, ինչը վկայում է երկրի գիտական, մտավոր պոտենցիալի՝ գերազանցապես դեպի եվրոպական երկրներ, ԱՄՆ և Կանադա արտագաղթի կտրուկ ակտիվացման իրողության մասին:

Ի տարբերություն Ադրբեջանի, Հայաստանում և Վրաստանում 2002-2005թթ. հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների քանակը համադրելի է: Դժվար չէ նկատել, որ 2004թ. սկսած՝ Վրաստանում գործող, հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների քանակը կտրուկ նվազել է. եթե 2004թ. կար 97 նման կազմակերպություն, ապա 2005թ. դրանց թիվն արդեն 80 էր (*Աղյուսակ 2*).

*Աղյուսակ 2*

*Հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների քանակն ըստ երկրների, 2002-2007թթ.*

Երկիր	2002	2003	2004	2005	2006	2007
Հայաստան	96	99	93	102	101	89
Ադրբեջան	131	138	139	146	145	146
Վրաստան	99	97	97	80	-	

Նույն միտումը նկատվում է նաև Վրաստանի հետազոտություններ և մշակումներ կատարող անձանց թվաքանակի առումով. եթե 2004թ. կար 13.300 գիտաշխատող, ապա 2005թ. հաշվվում էր ընդամենը 9200 (*Աղյուսակ 3*).

## Աղյուսակ 3

Հետազոտություններ և մշակումներ կատարող անձանց թվաքանակը,  
մարդ, 2002-2007թթ.

Երկիր	2002	2003	2004	2005	2006	2007
Հայաստան	6737	6277	6685	6892	6723	5669
Ադրբեջան	16019	17190	17712	18164	17973	18079
Վրաստան	15200	16100	13300	9200	-	

Հարավային Կովկասի երկրների ազգային վիճակագրական ծառայությունները տվյալներ են պարունակում նաև այդ երկրներում տարեկան հիմունքներով իրականացված գիտատեխնիկական աշխատանքների ընդհանուր ծավալների վերաբերյալ: Այսպես, 2003-2007թթ. Հայաստանում իրականացված գիտատեխնիկական աշխատանքների ծավալը հիմնականում կարողացել է պահպանել կայուն զարգացման միտում: Նշյալ ժամանակահատվածում Հայաստանում իրականացված տարեկան գիտատեխնիկական աշխատանքների ծավալով լավագույն ցուցանիշը գրանցվել է 2007թ.՝ մոտ \$18 մլն: Հայաստանի հետ գրեթե համեմատելի են Վրաստանում իրականացված տարեկան գիտատեխնիկական աշխատանքների ծավալների ցուցանիշները: Վրաստանում բարձրագույն արդյունքն արձանագրվել է 2004թ.՝ շուրջ \$14,9 մլն: Ադրբեջանի պարագայում 2003-2007թթ. կտրվածքով նկատվել է իրականացված գիտատեխնիկական աշխատանքների ծավալի կայուն աճման միտում: Ընդ որում, 2007թ. արձանագրված կտրուկ աճի արդյունքում այդ ցուցանիշը եղել է շուրջ \$55,1 մլն (Աղյուսակ 4)։

## Աղյուսակ 4

Գիտատեխնիկական աշխատանքների ծավալը, \$ (մլն)

Երկիր	2003	2004	2005	2006	2007
Հայաստան	≈\$12,8մլն	≈\$12,7մլն	≈\$15,1մլն	\$16,8 մլն	\$18 մլն
Ադրբեջան	≈\$21,6մլն	≈\$23,7մլն	≈\$27,8մլն	\$35,4մլն	\$55,1 մլն
Վրաստան	≈\$11,6մլն	≈\$14,9մլն	≈\$12,8մլն	-	-

Պետք է նկատել, որ ուսումնասիրության շրջանակներում համեմատականներ անցկացնելիս անհրաժեշտ է խնդիրը դիտարկել այդ երկրների ինչպես բնակչության թվաքանակի, այնպես էլ ՀՆԱ-ի և բյուջետային եկամուտների հետ հարաբերակցության համատեքստում:

#### **4. «Ռենդ» կորպորացիայի «Գլոբալ տեխնոլոգիական հեղափոխություն 2020թ.» հետազոտությունը (Global Technology Revolution 2020)**

2006թ. հեղինակավոր «Ռենդ» կորպորացիան հրապարակեց «Գլոբալ տեխնոլոգիական հեղափոխություն 2020թ.» զեկույցը՝ նվիրված աշխարհում գիտության և տեխնոլոգիաների զարգացումը կանխատեսող հեռանկարներին մինչև 2020թ.: Հետազոտությունը հովանավորվել է ԱՄՆ Ազգային հետախուզական խորհրդի կողմից (*Nation Intelligence Council-NIC*): Հետազոտական նախագծի իրականացման համար հավելյալ ֆինանսական միջոցներ են հատկացվել նաև ԱՄՆ Հետախուզության նորարարական տեխնոլոգիական կենտրոնի (*Intelligence Technology Innovation Center*) և ԱՄՆ էներգետիկայի դեպարտամենտի կողմից: «Ռենդ» կորպորացիայի փորձագետների գնահատականներով, մինչև 2020թ. առանձնացվում էր գիտատեխնոլոգիական զարգացման 16 ուղղություն, որոնցից էին՝ մատչելի արևային էներգետիկա, հեռահաղորդակցային տեխնոլոգիաներ, գենետիկորեն մոդիֆիկացված բույսեր, ջրի մաքրման մեթոդներ, էկոլոգիապես մաքուր սննդի արդյունաբերություն, հիբրիդային ավտոմեքենաներ և այլն: Վարկանշային այս զեկույցի մեթոդաբանությունում կիրառվել է 7 չափորոշիչ, որոնցից են՝ ՀԱԱ-ն մեկ շնչի հաշվարկով, 1 մլն բնակչության հաշվով գիտահետազոտական ոլորտում գիտնականների և ինժեներների թվաքանակը, գիտության և տեխնոլոգիաների թեմայով հրապարակված գիտական հոդվածների քանակը, գիտահետազոտական ոլորտի ֆինանսական հատկացումները, գիտահետազոտական ինստիտուտների թվաքանակը և այլն:

Վարկանշային հետազոտությունում լավագույն արդյունքը ԱՄՆ-ինն է՝ 5,03 ամփոփ միավոր, հաջորդը Ճապոնիան է (3,08 միավոր), այնուհետև՝ Գեմանիան (2,12): Լավագույն տասնյակը եզրափակում է Իսրայելը՝ 1,53 միավոր: ԱՊՀ երկրներից առաջատարը ՌԴ-ն է, որը 0,89 ամփոփ միավորով զբաղեցնում է այդ ցուցակի 19-րդ հորիզոնականը: ՌԴ-ին հաջորդում են Ուկրաինան և Բելառուսը՝ 29 և 30-րդ դիրքեր: Գիտակրթական ոլորտում Հայաստանի և Վրաստանի ունեցած ընդհանրությունների և համադրության տրամաբանությունը որոշակիորեն խախտվում է այս վարկանշային զեկույցում: Զեկույցի փորձագիտական գնահատականներով, բարձր են եղել նաև Ադրբեջանի ցուցանիշները, որը զբաղեցրել է ցուցակի 37-րդ հորիզոնականը: Հայաստանը զբաղեցրել է 55-րդ դիրքը՝ 1 դիրքային միավորով զիջելով

Թուրքիային: Տարածաշրջանի երկրներից ամենացածր ցուցանիշը Վրաստանին է՝ 97-րդ հորիզոնական:

### **5. «Գլոբալ նորարարության ինդեքսը 2014թ.» զեկույցը (The Global Innovation Index 2014)**

2014թ. հրապարակվեց Քորնել համալսարանի (Cornell University), INSEAD գործարարության դպրոցի և Ստավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (The World Intellectual Property Organization) «Գլոբալ նորարարության ինդեքսը 2014թ.» զեկույցը: Դրանում կարևորվում են համաշխարհային նորարարության պոտենցիալն ու ընթացիկ ձեռքբերումները՝ որպես տարբեր երկրների տնտեսությունների շարժիչ ուժ և մարդկության բարեկեցության ապահովման գրավական: Ինչպես վստահեցնում են զեկույցի հեղինակները, հետագոտության գնահատականները հնարավորություն են տալիս խորքային մոտեցումներով ընկալել ներկայիս համաշխարհային նորարարության միտումներն ու հեռանկարները: Զեկույցի նպատակն է աջակցել տարբեր երկրների քաղաքական որոշումներ կայացնող գործիչներին և գործարար շրջանակների ղեկավարներին առավել ճկուն և համատեղ քաղաքականություն որդեգրել համաշխարհային նորարարության պոտենցիալի զարգացման ուղղությամբ<sup>1</sup>:

«Գլոբալ նորարարության ինդեքսը 2014թ.» զեկույցը վարկանշավորում է աշխարհի 143 երկրների տնտեսությունների նորարարական պոտենցիալը: Զեկույցի մեթոդաբանությունում կիրառվել է 81 չափորոշիչ: Երկրների նորարարության վարկանշավորումն իրականացվում է 0-100 սանդղակի դասակարգման համաձայն, որտեղ բարձրագույն արդյունքը բնորոշում է տվյալ երկրի նորարարության բարձր, ցածրագույն միավորը՝ ցածր պոտենցիալը (Աղյուսակ 5):

ԱՊՀ անդամ երկրներում առաջատարը Մոլդովան է՝ 43-րդ հորիզոնական, 40,74 ամփոփ միավոր: Բարձր են նաև Ռուսաստանի (49-րդ դիրք), Բելառուսի (58-րդ դիրք) և Ուկրաինայի (63-րդ դիրք) ցուցանիշները: Հայաստանը զբաղեցնում է 5-րդ հորիզոնականը՝ գտնվելով 143 երկրների ցուցակի 65-րդ դիրքում (36,06 ամփոփ միավոր): Նորարարության արդյունավետության

<sup>1</sup>The Global Innovation Index 2014. <http://www.uis.unesco.org/Library/Documents/global-innovation-index-2014-human-factor-in-innovation-en.pdf>



ցուցով Հայաստանն արձանագրել է բավական բարձր արդյունք՝ 0,83 միավորով 143 երկրների շարքում զբաղեցնելով 28-րդ դիրքը: Ի դեպ, Հայաստանը նորարարության պոտենցիալի վարկանիշով, ըստ զեկույցի գնահատականների, լավագույնն է Հարավային Կովկասի երկրների մեջ: Հայաստանի հետ համադրելի է Վրաստանի արդյունքը. այդ երկիրը 34,53 ամփոփ միավորով զբաղեցնում է 74-րդ դիրքը:

*Աղյուսակ 5*

*Գլոբալ նորարարության ինդեքսը 2014թ., Հայաստան և այլ երկրներ*

Դիրքը	Երկիրը	Ամփոփ միավորը (0-100)	Արդյունավետության ցուցիչը
<b>ԱՊՀ երկրներ</b>			
43	Մոլդովա	40,74	1,07
49	Ռուսաստան	39,14	0,79
58	Բելառուս	37,10	0,83
63	Ուկրաինա	36,26	0,90
65	Հայաստան	36,06	0,83
79	Ղազախստան	32,75	0,59
101	Ադրբեջան	29,60	0,58
112	Ղրղզստան	27,75	0,46
128	Ուզբեկստան	25,20	0,61
137	Տաջիկստան	23,73	0,45
<b>Այլ երկրներ</b>			
54	Թուրքիա	38,20	0,93
74	Վրաստան	34,53	0,68
120	Իրան	26,14	0,57

Աղբյուրը՝ <http://www.uis.unesco.org/Library/Documents/global-innovation-index-2014-human-factor-in-innovation-en.pdf>

Տարածաշրջանի երկրներից ցածրագույն արդյունքն Ադրբեջանինն է՝ 101-րդ հորիզոնական: Ընդ որում, նորարարության արդյունավետության ցուցով նույնպես Հայաստանն առաջատար է Հարավային Կովկասում:

**6. ԱՄՆ ազգային գիտական հիմնադրամ. գիտահետազոտական  
ակտիվության վարկանշային զեկույցը 2014թ.  
(US National Science Foundation. Scientific and Technical Activity)**

Այս վարկանշային ուսումնասիրությունն իրականացվել է ԱՄՆ ազգային գիտական հիմնադրամի կողմից, որն ԱՄՆ կառավարությանն առընթեր անկախ գործակալություն է: Հիմնադրամը գործունեություն է ծավալում գիտության և տեխնոլոգիաների զարգացման ոլորտում՝ հատկացնելով դրամաշնորհներ անհատ կամ խմբակային հետազոտողներին: 2014թ. վիճակագրությամբ, հիմնադրամի տարեկան բյուջեն կազմել է շուրջ \$7,2 մլրդ: Գիտահետազոտական վարկանշային զեկույցի մեթոդաբանությունը հիմնվում է գրախոսված գիտական, հրատարակված և գիտական հղումների ինդեքսի համակարգում (*Science Citation Index (SCI)* և *Social Sciences Citation Index (SSCI)*) ընդգրկված գիտահետազոտական հոդվածների վարկանշավորման քանակական հաշվարկի վրա:

Ըստ հիմնադրամի զեկույցի տվյալների՝ ԱՊՀ երկրների մեջ բարձր ցուցանիշներ են արձանագրել ՌԴ-ն, Ուկրաինան և Բելառուսը, որոնց հաջորդում է Հայաստանը: Ի դեպ, նշված երկրների հետ Հայաստանի վարկանշավորման համեմատականում անհրաժեշտ է հաշվի առնել առաջին հերթին Հայաստանի և այդ երկրների բնակչության թվաքանակների տարբերության հանգամանքը (խոսքը հատկապես վերաբերում է ՌԴ-ին և Ուկրաինային, որոնց բնակչությունն անհամեմատ գերազանցում է Հայաստանի բնակչության թվաքանակը): Ասել է թե՛ այլոց նկատմամբ տվյալ երկրի բնակչության քանակական առավելությունն ուղղակիորեն պայմանավորված է այդ պետության գիտահետազոտական պոտենցիալի *քանակական* (սակայն ոչ միշտ՝ որակական) բաղադրիչով:

Հարավային Կովկասի երկրներից լավագույն արդյունքը Հայաստանին է. 184,6 ցուցանիշով զբաղեցրել է 75-րդ դիրքը: Հաջորդն Ադրբեջանն է՝ 80-րդ դիրք (148,7 ցուցանիշ): Հայաստանի հետ համադրելի է նաև Վրաստանի ցուցանիշը, որն արձանագրել է Հարավային Կովկասի ցածրագույն արդյունքը (117,6) և զբաղեցրել 86-րդ հորիզոնականը: Հայաստանի հարակից երկրներից բավական բարձր են եղել Թուրքիայի և Իրանի ցուցանիշները, որոնք զեկույցում ներառված 195 երկրների շարքում զբաղեցրել են 19 և 20-րդ դիրքերը (*Աղյուսակ 6*).

Աղյուսակ 6


Աշխարհի երկրների վարկանշավորումն ըստ գիտահետազոտական ակտիվության, Հայաստան և այլ երկրներ, 2014թ. (195 երկիր)

Դիրքը	Երկիրը	Հոդվածների քանակը
15.	ՌԴ	14 150,9
19.	Թուրքիա	8 328,4
20.	Իրան	8 175,5
42.	Ուկրաինա	1726,9
60.	Բելառուս	341,6
75.	Հայաստան	184,6
80.	Ադրբեջան	148,7
82.	Ուզբեկստան	140,9
86.	Վրաստան	117,6
91.	Ղազախստան	87,4
94.	Մոլդովա	76,2
128.	Տաջիկստան	18,4
131.	Ղրղզստան	17,2
179.	Թուրքմենստան	0,5

Աղբյուրը՝ <http://gtmarket.ru/ratings/scientific-and-technical-activity/info>

Գրաֆիկ 1

Ըստ գիտահետազոտական ակտիվության երկրների վարկանշավորումը 2014թ., Հարավային Կովկաս (ըստ երկրի դիրքի հաշվարկի, որտեղ որքան ցածր է երկրի դիրքը, այնքան բարձր է նրա վարկանիշը)



### 7. Մարդկային կապիտալի ինդեքսը 2015թ.

«Համաշխարհային տնտեսական ֆորում» կազմակերպությունը վերջերս ներկայացրեց Մարդկային կապիտալի ինդեքսը 2015թ. վարկանշային հերթական տարեկան հետազոտությունը, որտեղ երկրները վարկանշավորվում են իրենց մարդկային կապիտալի կամ պոտենցիալի չափորոշման սկզբունքի համաձայն: Վարկանշային հետազոտության մեթոդաբանությունում շեշտադրումները կատարվում են 2 հիմնական ուղղության վրա.

1. կրթության հիմնական արդյունքները, որտեղ հիմնական ուշադրությունը դարձվում է այն հանգամանքի վրա, թե առանձնացված երկրներն ինչքանով են կարողանում ապահովել կրթության ոլորտում հասարակության բոլոր խավերի և տարիքային խմբերի ներգրավվածությունը,
2. տնտեսական ակտիվության արդյունքները, որտեղ հիմնական շեշտադրումը կատարվում է մարդկային կապիտալի չափորոշման վրա՝ ըստ հասարակության տարիքային խմբերի:

Վարկանշային հետազոտության մեթոդաբանությունը երկրների դասակարգման չափորոշման առումով հիմնվում է 0-100 միավոր սանդղակի վրա, որտեղ բարձրագույն միավորը վկայում է սովյալ երկրի մարդկային կապիտալի ոլորտում ունեցած բարձր ցուցանիշների մասին:

Պետք է նկատել, որ մարդկային կապիտալի գնահատման համար կազմակերպության ներկայացրած մեթոդաբանությունում կիրառված չափորոշիչները բավական ընդհանրական են և չեն ընդգրկում մարդկային կապիտալի ողջ պոտենցիալ կամ համալիր բովանդակությունը: Ավելին, երկրի մարդկային կապիտալի հաշվարկման մեջ գիտատեխնոլոգիական արդյունքները կամ արտադրանքն ինքնին հանդիսանում են մարդկային կապիտալի կարևոր բաղադրիչներից մեկը, սակայն միևնույն ժամանակ ուղղակիորեն փոխկապակցված են մարդկային կապիտալի բաղադրիչ հանդիսացող այնպիսի էական գործոնների հետ, ինչպիսիք են սովյալ հասարակության կամ երկրի մարդկային կապիտալի ֆիզիկական հաշվարկը, առողջապահական ասպեկտը, բարեկեցությունը և այլն:

Փորձենք ներկայացնել զեկույցի հիմնական առանձնահատկությունները՝ ըստ մեր առանձնացրած պետությունների վարկանշավորման: Հետազոտությունում ներառված է 124 երկիր:

Ներկայացնենք ԱՊՀ, Հարավային Կովկասի և հարակից երկրների մարդկային կապիտալի վարկանշավորման արդյունքները: Նշենք, որ կազմակերպության զեկույցում ներառվել են վերը թվարկված տարածաշրջանի ոչ բոլոր երկրները, ինչը, թերևս, պետք է պայմանավորել կազմակերպության՝ այդ երկրների մասով անհրաժեշտ տեղեկատվության բացակայության հանգամանքով: Թեև զեկույցում չի ներառվել նաև Վրաստանը, այնուհանդերձ, հաշվի առնելով զեկույցի յուրօրինակությունը՝ այն նույնպես ներառել ենք այս հետազոտության մեջ (*Աղյուսակ 7*).

*Աղյուսակ 7*

*Մարդկային կապիտալի ինդեքսը 2015թ., ԱՊՀ և այլ երկրներ*

<b>Դիրքը (ընդհանուր ցուցակում)</b>	<b>Երկիրը</b>	<b>Սանփոփ միավորը</b>
<b>ԱՊՀ երկրներ</b>		
1 (26)	Ռուսաստան	77,54
2 (31)	Ուկրաինա	76,21
3 (37)	Ղազախստան	74,56
4 (43)	Հայաստան	72,50
5 (44)	Ղրղզստան	71,82
6 (63)	Ադրբեջան	67,58
7 (65)	Տաջիկստան	67,24
8 (71)	Մոլդովա	66,81
<b>Այլ երկրներ</b>		
10 (68)	Թուրքիա	67,09
11 (80)	Իրան	63,20

*Աղբյուրը՝ <http://www.weforum.org/reports>, Համաշխարհային տնտեսական ֆորում*

Հաշվի առնելով վարկանշային զեկույցում ընդգրկված երկրների ընդհանուր քանակը՝ պետք է ասել, որ ԱՊՀ երկրների շարքում լավագույն արդյունքներ արձանագրած 5 երկրները բավական բարձր դիրքեր են զբաղեցրել: Ինչպես նկատելի է աղյուսակից, ԱՊՀ երկրների շարքը գլխավորում է ՌԴ-ն՝ 26-րդ հորիզոնական: Ռուսաստանին անմիջապես հաջորդում են Ուկրաինան և Ղազախստանը, որոնք գտնվում են 31 և 37-րդ դիրքերում:

ԱՊՀ երկրների ցուցակում 4-րդ լավագույն արդյունքը Հայաստանին է՝ 43-րդ դիրք: Հայաստանին դիրքային զգալի տարբերությամբ զիջում է հարևան Ադրբեջանը, որը գտնվում է 63-րդ հորիզոնականում: Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 7-ից, Հայաստանն իր վարկանշային ցուցանիշով անհամեմատ

գերազանցում է նաև իր մյուս հարևան երկրներին՝ Թուրքիային և Իրանին, որոնք գտնվում են 68 և 80-րդ հորիզոնականներում:

### **Հիմնական հետևություններ**

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ի տարբերություն Ադրբեջանի, Հայաստանը և Վրաստանն ունեն քաղաքակրթական, արժեքային ընդհանրական դաշտ: Ավելին, համադրելի են այդ երկու երկրների գիտահետազոտական քանակական ցուցանիշները: Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ Հայաստանը և Վրաստանն ունեն բավական մեծ պոտենցիալ խորացնելու համագործակցությունը գիտակրթական, գիտահետազոտական ոլորտներում: Սակայն ինտերնետային մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ երկու երկրների միջև համագործակցությունը սահմանափակվում է առանձին բուհերի միջև պայմանագրերի կնքմամբ, ինչպես նաև Ջավախքի հայկական կրթօջախներին ուսումնական ձեռնարկների տրամադրմամբ: Չկան ոլորտի զարգացմանն ուղղված հայեցակարգային մոտեցումներ թե՛ հայկական, թե՛ վրացական կողմերից: Հատկապես թույլ են երկու երկրների միջև գիտահետազոտական հաստատությունների, ինչպես նաև փորձագիտական, վերլուծաբանական հանրույթների միջև փոխգործակցության միտումները:

*Մարտ, 2016թ.*

### **ՎՐԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՈԼՈՐՏԸ**

#### **ՎԱՐԿԱՆՇԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ**

#### **Կարեն Վերանյան**

#### **Ամփոփագիր**

Հոդվածում ներկայացվում են Վրաստանի գիտական, գիտահետազոտական ոլորտների վիճակագրական, վարկանշային տեղեկատվական տվյալները, որոնք դիտարկվում են Հարավային Կովկասի և հարակից երկրների հետ համեմատության համատեքստում: Թեմայի շրջանակում խնդիր չի դրվել ներկայացնել Վրաստանի գիտահետազոտական ցուցանիշների որակական առանձնահատկությունները, այլ հիմնական ուշադրությունը դարձվել է Հայաստանի և Ադրբեջանի հետ համեմատության շրջանակում Վրաստանի գիտական ոլորտի քանակական տեղեկատվության ուսումնասիրման խնդիրներին: Համեմատական-վիճակագրական, վարկանշային

հետազոտությունը հիմնվում է տարածաշրջանի երկրների ազգային վիճակագրական ծառայությունների տեղեկատվության, միջազգային վարկանշային կազմակերպությունների զեկույցների տվյալների վրա: Մոնիթորինգի է ենթարկվել նաև ինտերնետային բաց աղբյուրների տեղեկատվությունը հայ-վրացական գիտակրթական, հետազոտական համագործակցության վերաբերյալ:

## НАУЧНАЯ СФЕРА ГРУЗИИ: РЕЙТИНГОВО-СТАТИСТИЧЕСКОЕ СОПОСТАВЛЕНИЕ

*Карен Веранян*

Резюме

В статье представлены статистические и рейтинговые данные о научной и научно-исследовательской сфере Грузии, рассматриваемые в сопоставлении с юнокавказскими и сопредельными странами. В рамках данной темы не ставилась задача представления качественных особенностей научно-исследовательских показателей Грузии, основное внимание обращалось на вопросы изучения количественной информации о научной сфере Грузии по сравнению с Арменией и Азербайджаном. Сопоставительно-статистическое, рейтинговое исследование опирается на данных национальных статистических служб стран региона и данных, содержащихся в докладах международных рейтинговых организаций. Был осуществлен также мониторинг информации с открытых интернет-источников относительно армяно-грузинского научно-образовательного, исследовательского сотрудничества.

## THE SCIENCE IN GEORGIA: A RANKING AND STATISTICAL COMPARISON

*Karen Veranyan*

Resume

The article presents statistical and ranking data on Georgia's scientific, research and development areas reviewed in the context of comparison with the South Caucasus and neighboring countries. Within the framework of the study qualitative aspects of Georgia's scientific and research indicators were not intended to be presented, but rather, the main focus was on issues of studying the quantitative information of Georgia's science in comparison with Armenia and Azerbaijan. The comparative statistical and ranking study is based on information from regional countries' national statistical services, reports from international ranking organizations. Information from open internet sources on Armenian-Georgian scientific, educational and research collaboration was monitored.

**ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՆ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ.  
ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԵԶՐԵՐ ԵՎ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ**

***Վահրամ Հովյան\****

*Բանալի բառեր*<sup>1</sup> սփյուռք, համայնքներ, համագործակցություն, Հայաստան, Վրաստան, Ջավախք, ընդհանուր շահեր:

Արդի աշխարհում, մեծաքանակ միգրացիոն հոսքերի հետ կապված, սփյուռք ունենալը դադարում է լինել առանձին երկրների «մենաշնորհը»: Ավելի ու ավելի է մեծանում սփյուռք ունեցող երկրների ակումբում հայտնվող պետությունների թիվը, որոնք ակտիվ քաղաքականություն են վարում արտերկրի հայրենակիցների հետ համագործակցության ուղղությամբ:

Սփյուռքը մեր օրերում տրանսնացիոնալ հանրության տարատեսակ<sup>1</sup> է դարձել, որը, հաճախ ունենալով ինքնակազմակերպման ցանցային ձևեր, բավական համահունչ է գործում արդի գլոբալացվող աշխարհի տրամաբանությամբ:

Հայաստանը և Վրաստանը, ոչ միայն հարևան, այլև հոգևոր-քաղաքակրթական առումով միմյանց մոտ երկրներ լինելով, արժեք, որ ընդհանուր խնդիրների իրականացման գործում իրենց համագործակցությունը, միջպետական հարաբերություններից բացի, ծավալեն նաև սփյուռքի մակարդակով:

***Նմանություններ և տարբերություններ***

Ի տարբերություն հայկական սփյուռքի, որը ձևավորվել է հիմնականում Հայոց ցեղասպանության հետևանքով, վրացական սփյուռքը հիմնականում միգրացիայի արդյունք է: Այդ պատճառով էլ այն համեմատաբար նոր երևույթ է՝ ի տարբերություն հայկական սփյուռքի, որը կայացման մեծ ճանապարհ է անցել:

\* «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ:

<sup>1</sup> Նկատի ունենք այն, որ սփյուռքը միևնույն ազգային ընդհանրության՝ աշխարհի տարբեր պետություններում գտնվող համայնքների ամբողջություն է:



Թեև վրացական սփյուռքի մասին խոսելիս երբեմն հիշատակվում է նաև պատմական սփյուռքը<sup>1</sup>՝ արտերկրում բնակվող այն վրացիների ամբողջությունը, որոնք Խորհրդային Միության փլուզումից առաջ են հայտնվել Վրաստանի սահմաններից դուրս, սակայն վերջինիս տեսակարար կշիռն ընդհանուր սփյուռքի մեջ անհամեմատ ավելի փոքր է: Համաձայն վիճակագրական տվյալների՝ ԽՍՀՄ փլուզման նախաշեմին՝ 1989թ., Վրաստանում բնակվում էր վրացիների մոտ 95%-ը [1, p. 13]: Մինչդեռ Խորհրդային Միության անկումից հետո, պայմանավորված հիմնականում սոցիալ-տնտեսական գործոններով (գործազրկություն, սոցիալական ծանր պայմաններ և այլն), Վրաստանում մեծ թափով սկիզբ առավ արտագաղթի գործընթացը: 1989թ. մարդահամարի տվյալներով՝ Վրաստանի բնակչությունը կազմում էր 5.400.841 մարդ, 2002թ. մարդահամարի տվյալներով՝ 4.371.535 մարդ, 2014թ. մարդահամարի տվյալներով՝ 3.729.635 մարդ: Այս թվերի դիտարկումը ցույց է տալիս, որ 2002-2014թթ. Վրաստանի բնակչությունը նվազել է մոտ 1.630.000 մարդով: Իհարկե, այս թիվն ամբողջությամբ չի կարելի վերագրել արտագաղթին, քանի որ կան նաև Աբխազիայի և Հարավային Օսիայի խնդիրը: 1989թ. դրությամբ վերջիններս Վրաստանի մաս էին կազմում, և նրանց բնակչությունը նույնպես հաշվառվել է որպես այդ երկրի բնակչություն: Հետագա մարդահամարների ժամանակ Աբխազիայի և Հարավային Օսիայի բնակչությունը դուրս է մնացել հաշվառումից:

Այնուամենայնիվ, հիշյալ հանգամանքը կարող է միայն փոքր մխիթարություն լինել, քանի որ առանց դրա էլ հետխորհրդային շրջանում Վրաստանից արտագաղթը ստացել է ահռելի չափեր: Ինչպես ցույց է տալիս 2002թ. և 2014թ. մարդահամարի տվյալների դիտարկումը, այդ երկու թվականների միջև ընկած ժամանակահատվածում (12 տարի) Վրաստանի բնակչությունը նվազել է 640 հազարով:

Հայկական և վրացական համայնքների նմանությունը որոշակիորեն այն է, որ հետխորհրդային շրջանում երկու երկրներից էլ արտագաղթի հիմնական ուղղությունը եղել է Ռուսաստանը<sup>2</sup>, ինչը նպաստել է այս երկրում

<sup>1</sup> Հիմնականում ժամանակակից Թուրքիայի և որոշակիորեն՝ Իրանի տարածքում բնակվող վրացիներն են:

<sup>2</sup> Հետխորհրդային շրջանում նախկին միութենական հանրապետություններից բնակչության հոսքը դեպի Ռուսաստան հիմնականում գործազրկության հաղթահարման նպատակով (աշխատանքային միգրացիա) մեծ տարածում է ստացել: Դրա արդյունքում է, որ Ռուսաստանը, 2013թ. տվյալներով, ԱՄՆ-ից հետո միգրանտների թվով երկրորդ երկիրն էր աշխարհում [2, c. 5]:

ինչպես հայկական, այնպես էլ վրացական համայնքների սովորաբար: Ըստ վիճակագրական տվյալների՝ հետխորհրդային շրջանում Վրաստանից դուրս եկած աշխատանքային միգրանտների մոտ 60%-ը մեկնել է Ռուսաստան: Ինչ վերաբերում է Հայաստանից արտագաղթին, ապա դրա արդյունքում, եթե 1989թ. դրությամբ ռուսաստանաբնակ հայության թիվը կազմում էր ավելի քան 500 հազար [3, էջ 460], ապա ներկայում ոչ պաշտոնական տվյալներով՝ այն գերազանցում է 2 մլն-ը:

Հայկական և վրացական համայնքների տարբերություններով էլ (մի դեպքում՝ ավանդական, պատմական, մյուս դեպքում՝ ժամանակակից միգրացիայի հետևանքով առաջացած) պայմանավորված են սփյուռքի ընկալման տարբերությունները հայկական և վրացական իրականություններում: Եթե հայ իրականության մեջ «սփյուռք» ասելով հասկանում են առաջին հերթին ավանդական, պատմական սփյուռքը և նրա կողքին նոր միայն հետխորհրդային շրջանում Հայաստանից արտագաղթածների ամբողջությունը, ապա վրացական իրականությունը «սփյուռք» ասելով հասկանում է առաջին հերթին հենց հետխորհրդային շրջանի միգրանտներին, որոնցից շատերն անգամ չունեն իրենց բնակության երկրների քաղաքացիություն՝ կամ բնակվում են ժամանակավոր կեցության իրավունքով, կամ էլ ապօրինի: Եվ միայն վերջիններիս կողքին վրացական ընկալումներում խիստ փոքր նշանակություն է տրվում պատմական կամ ավանդական սփյուռքին:

Հայկական և վրացական համայնքների տարբերություններով պայմանավորված՝ որոշակի տարբերություններ կան նաև սփյուռքի նկատմամբ ՀՀ և վրացական պետության քաղաքականությունների միջև: Վրացական պետությունն իր առջև սփյուռքի հարցերում դնում է հիմնականում երկու նպատակ՝ հնարավորինս աջակցել արտերկիր մեկնած վրացիների խնդիրների լուծմանը (ուսման, աշխատանք գտնելու, ինտեգրացիայի և այլ հարցերում) և հնարավորինս ծառայեցնել սփյուռքի պոտենցիալն ի շահ Վրաստանի:

Սփյուռքի պոտենցիալ ասելով Վրաստանում նկատի ունեն երկու բան՝ ֆինանսական և մարդկային: Ֆինանսական ներուժն արտերկրում ձևավորված վրացական կապիտալն է, որը վրացական պետությունը ձգտում է բերել Վրաստան՝ ամեն կերպ փորձելով խրախուսել սփյուռքի ուղղակի ներդրումներն այդ երկրի տնտեսության մեջ<sup>1</sup>: Ինչ վերաբերում է մարդկային կապիտա-

<sup>1</sup> Սփյուռքի հետ արդյունավետ աշխատող երկրների համար տնտեսության մեջ արտաքին ուղղակի ներդրումների գրեթե կեսը կազմում են սփյուռքի ուղղակի ներդրումները:

լին, ապա Վրաստանում մեծ հույսեր են կապում արտերկրում մասնագիտական բարձր որակավորման հասած ազգությամբ վրացի կադրերի հետ: Վրացական պետությունն անում է հնարավորը արտասահմանյան հատկապես զարգացած երկրներում (օրինակ՝ Գերմանիայում<sup>1</sup>) կրթություն ստացած երիտասարդների և գիտատար ոլորտներում աշխատող վրացի մասնագետների հայրենադարձության և նրանց կարողությունները հայրենի երկրի զարգացմանն ի նպաստ դնելու համար:

ՀՀ-ն նույնպես լուրջ ուշադրություն է դարձնում ինչպես արտերկրի հայկական համայնքներին աջակցության, այնպես էլ Սփյուռքի մարդկային և ֆինանսական կապիտալը Հայաստանի զարգացման մեջ ներգրավելու խնդրին: Սակայն, ի տարբերություն Վրաստանի, ՀՀ-ն աշխատում է ոչ այնքան Հայաստանից արտագաղթած աշխատանքային միգրանտների խնդիրների լուծման (այս ուղղությունը որոշակիորեն կարևորելով հանդերձ), որքան ավանդական համայնքներում հայապահպանության, ֆիզիկական անվտանգության ապահովման (հատկապես Մերձավոր Արևելքի հայ համայնքներում), հայագիտական կենտրոնների ստեղծման և պահպանման ուղղությամբ: Բացի այդ, ավելի լայն են Սփյուռքի հետ աշխատանքի ոլորտները: Օրինակ՝ ՀՀ-ն ակտիվորեն համագործակցում է Սփյուռքի կառույցների հետ համագային խնդիրների (Արցախի ինքնորոշման իրավունքի ճանաչման, Ադրբեջանի և Թուրքիայի հակահայ ագրեսիվ քաղաքականության զսպման, Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման և այլն) լուծման ուղղությամբ:

Երկու երկրներում էլ հայրենի պետությունների կողմից ստեղծվել և աշխատում է հատուկ սփյուռքի գործերով զբաղվող գործադիր իշխանության առանձին գերատեսչություն՝ նախարարություն: Վրաստանում այն կոչվում է Սփյուռքի գործերով նախարարություն<sup>2</sup>: Սակայն, ի տարբերություն Հայաստանի, Վրաստանում Սփյուռքի հետ պետության հարաբերությունները և պետական քաղաքականությունը վերջինիս նկատմամբ կարգավորվում են

<sup>1</sup> Վրաստանում բավական մեծ տարածում ունի «գերմանասիրությունը», երկրում գործում են բազմաթիվ դպրոցներ, որտեղ առաջնային օտար լեզուն գերմաներենն է: Երիտասարդության (ուսանողության) ավելի քան 11%-ը տիրապետում է գերմաներենին: Այդ պատճառով էլ Վրաստանից արտագաղթը Գերմանիա բավական մեծ տարածում ունի հատկապես երիտասարդության (որոնք մեկնում են այդ երկրում կրթություն ստանալու նպատակով) և որակյալ կադրերի շրջանում: Ի տարբերություն Գերմանիայի այլ երկրներ (օրինակ Թուրքիա, Հունաստան և այլն) վրացի միգրանտները մեկնում են հիմնականում աշխատելու որպես բանվորներ, դայակներ, հիվանդապահներ, աղախիններ և այլն:

<sup>2</sup> Ինչպես Հայաստանում, Վրաստանում նույնպես Սփյուռքի գործերով նախարարությունը ստեղծվել է 2008թ.:

առանձին՝ «Արտասահմանում բնակվող հայրենակիցների և սփյուռքի կազմակերպությունների մասին» օրենքով [4]:

Եթե հայկական սփյուռքին բնորոշ է համազգային կազմակերպությունների առատությունը՝ ի դեմս կուսակցությունների, եկեղեցիների, բարեգործական, մշակութային, կրթական և այլ հաստատությունների, որոնք իրենց գործունեությունը ծավալում են ամբողջ աշխարհի հայ համայնքներում, ապա վրացական սփյուռքին բնորոշ են հիմնականում տեղական նշանակություն ունեցող՝ համայնքային կառույցները: Այնուամենայնիվ, հայկական սփյուռքը նույնպես դեռևս ունի ողջ սփյուռքը ներկայացնող համահայկական կառույցի ձևավորման խնդիր<sup>1</sup>:

Մեկ այլ տարբերություն է այն, որ եթե վրացական սփյուռքի կազմակերպությունները հիմնականում կրում են կրթամշակութային բնույթ և հանդիսանում են տեղական համայնքային ինքնակազմակերպման ինստիտուտներ, ապա հայկական սփյուռքին բնորոշ է կազմակերպական կառույցների տեսակային բազմազանությունը: Այնտեղ գործում են քաղաքական կառույցներ՝ ի դեմս ավանդական կուսակցությունների և լոբբիստական կազմակերպությունների, կրոնական հաստատություններ՝ ի դեմս Հայ Առաքելական<sup>2</sup>, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների, բարեգործական, մշակութային, մարզական և այլ կազմակերպություններ:

Վրացական սփյուռքի կազմակերպություններն իրենց առջև դնում են հիմնականում հետևյալ խնդիրները՝ աջակցություն արտերկրում հայտնված հայրենակիցներին, աջակցություն հայրենիքին, աջակցություն բնակության երկրի և հայրենիքի միջև կապերի զարգացմանը և այլն: Հատկանշական է, որ վրացական սփյուռքին, ի տարբերություն հայկականի, հատուկ չէ լոբբիստական գործունեությունը: Դա կարելի է բացատրել երկու գործոնով: Առաջինը մարդկային և կազմակերպչական ռեսուրսների սղությունն է: Վրացական սփյուռքն արևմտյան երկրներում, որտեղ էլ հիմնականում լոբբիզմը հանդիսանում է քաղաքական ինստիտուտ, այնքան ստվարաթիվ չէ, որքան հայկականը: Բացի այդ, լուրջ դժվարություն է այն, որ, լինելով հիմնականում աշ-

<sup>1</sup> Բանն այն է, որ գործունեության աշխարհագրական համընդգրկունությունը համասփյուռքյան կառույցի բնութագրիչներից միայն մեկն է: Կան նաև այլ բնութագրիչներ, որոնց բացակայության դեպքում անհնար է տվյալ կառույցը համարել համազգային [տե՛ս 5, էջ 81-85]:

<sup>2</sup> Հայ Առաքելական եկեղեցին ունի չորս նվիրապետություն, որոնցից երեքը՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը, Կ.Պոլսի Հայոց պատրիարքությունը և Երուսաղեմի Հայոց պատրիարքությունը, գործում են Սփյուռքում: Ինչ վերաբերում է հիմնական նվիրապետությանը՝ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնին, ապա այն նույնպես բազմաթիվ թեմեր ունի Սփյուռքում:

խատանքային միգրանտներ, վրացական սփյուռքի ներկայացուցիչները հիմնականում չեն հանդիսանում իրենց բնակության երկրների քաղաքացիներ, ինչն օրենսդրորեն բարդացնում է կազմակերպություններ հիմնելու գործը: Օրինակ՝ Գերմանիայում օրենսդրությունը պահանջում է, որ կազմակերպության անդամների նվազագույնը 50%-ը լինեն այդ երկրի քաղաքացիներ: Երկրորդ գործոնը լոբբիստական գործունեության անհրաժեշտության ցածր մակարդակն է: Վրաստանը, անկախությունից ի վեր արտաքին քաղաքականության մեջ որդեգրելով եվրատլանտյան ուղղությունը, քաղաքական առումով սերտ հարաբերությունների մեջ է արևմտյան պետությունների հետ, ինչի հաշվին էլ որոշակի ինքնաբավություն ունի այդ երկրներում իր շահերը պաշտպանելու տեսանկյունից: Օրինակ, եթե 2017թ. բյուջեով ԱՄՆ-ը Հայաստանի համար նախատեսում է հատկացնել մոտ \$22.5 մլն օգնություն, իսկ Ադրբեջանին՝ \$11 մլն<sup>1</sup>, ապա Վրաստանն առանց լոբբիստական ջանքերի ԱՄՆ պետբյուջեից կստանա \$63 մլն<sup>2</sup>: Ստացվում է, որ Վրաստանին հատկացվող օգնությունը գրեթե կրկնակի գերազանցում է Հայաստանին և Ադրբեջանին հատկացվող օգնությունը՝ միասին վերցրած<sup>3</sup>:

Հայկական լոբբիստական կազմակերպություններն ԱՄՆ-ում ակտիվ աշխատանք են տանում, որպեսզի Հայաստանին հատկացվող օգնության չափը հասցվի \$40 մլն-ի, ևս \$5 մլն հատկացվի ԼՂՀ-ին: Անգամ այս խնդիրների հաջող իրականացման դեպքում, սակայն, Վրաստանին հատկացվող օգնությունը կգերազանցի ՀՀ-ին, ԼՂՀ-ին և Ադրբեջանին հատկացվող օգնությունը՝ միասին վերցրած (\$56 մլն):

### ***Համագործակցության հեռանկարներ***

Թեև մինչ այժմ արտերկրում հայկական և վրացական համայնքների միջև համագործակցության հարուստ փորձ չկա, այնուամենայնիվ, կան դրա որոշակի նախադրյալներ: Դրանք կազմում են այն խնդիրների ամբողջությունը,

<sup>1</sup> Վերջին շրջանում ԱՄՆ-ում սկսել է ակտիվություն ցուցաբերել նաև ադրբեջանական լոբբին [տե՛ս 6, էջ 138-152], որը, թեև ինքնուրույնաբար չի կարող մրցակցել հայկականի հետ, սակայն իր թիկունքում զգում է ադրբեջանական պետության, ինչպես նաև թուրքական լոբբիի աջակցությունը:

<sup>2</sup> Վրաստանն Իսրայելից հետո երկրորդ երկիրն է աշխարհում ԱՄՆ-ից ստացած օգնության չափով: 1990-ական թթ. Հայաստանը լուրջ մրցակից էր Վրաստանի համար: Օրինակ՝ 1997թ. ՀՀ-ին և ԼՂՀ-ին ԱՄՆ պետական բյուջեից հատկացված օգնության չափը միասին վերցրած կազմել է \$100 մլն [7, էջ 94]: Հետագայում, սակայն, Հայաստանին հատկացվող գումարների աստիճանական նվազման հետևանքով Վրաստանը կայուն կերպով ամրապնդվեց երկրորդ տեղում:

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս ԱՄՆ Տնտեսական աջակցության հիմնադրամը ռազմական ֆինանսավորում է նախատեսում Հայաստանին, Վրաստանին և Ադրբեջանին, <http://www.panorama.am/am/news/2016/02/10/ԱՄՆ-հիմնադրամ-Հայաստան-Վրաստան-Ադրբեջան/1526372>

որոնք ընդհանուր են ինչպես երկու համայնքների, այնպես էլ Հայաստանի ու Վրաստանի համար:

Թիվ մեկ խնդիրը, որն ընդհանուր է Հայաստանի և Վրաստանի համար, և որի շուրջ կարող է ծավալվել երկկողմ համագործակցությունը սփյուռքում, կապված է Վրաստանի ժողովրդագրական խնդիրների հետ և առնչվում է Ջավախքին: Չնայած Վրաստանի ժողովրդագրական խնդիրները և Ջավախքի հիմնահարցը սույն աշխատանքում անմիջականորեն չեն հանդիսանում քննության առարկա, սակայն արժե մի փոքր անդրադառնալ դրանց՝ որպես հայ-վրացական համագործակցության հիմք:

Վրաստանում տեղի ունեցող ժողովրդագրական գործընթացների առանձնահատկություններից մեկն այն է, որ երկրում աստիճանաբար մեծանում է մուսուլման, մասնավորապես՝ ադրբեջանական բնակչության տեսակարար կշիռը: Հողվածը պատրաստելու ժամանակ վերջին՝ 2014թ. մարդահամարի տվյալները դեռևս վերջնականապես ամփոփված չէին: Հետևաբար, սույն հոդվածում հնարավոր չէ ըստ այդ մարդահամարի տվյալների պաշտոնական վիճակագրական տվյալներ ներկայացնել Վրաստանի ազգային փոքրամասնությունների թվաքանակի վերաբերյալ: Սակայն նախորդ՝ 1989թ. և 2002թ. մարդահամարի տվյալների համեմատությունը բավական խոսուն է, հատկապես Վրաստանի էթնիկ խմբերի թվաքանակի դինամիկայի և երկրի ընդհանուր բնակչության մեջ նրանց տեսակարար կշռի առումով: Եթե 1989թ. Վրաստանի հայ բնակչության թվաքանակը կազմում էր մոտ 360 հազ., ապա 2002թ. մարդահամարի տվյալներով այն կազմել է մոտ 250 հազ.: Ասվածը նշանակում է, որ 13 տարիների ընթացքում վրաստանաբնակ հայության թվաքանակը նվազել է շուրջ 110 հազարով:

Հիշյալ ժամանակահատվածում տեղի է ունեցել նաև ադրբեջանական բնակչության թվաքանակի նվազում, սակայն ոչ այն չափերով, ինչ հայկականի պարագայում: Եթե 1989թ. Վրաստանի ադրբեջանցիների թվաքանակը կազմում էր մոտ 307 հազ., ապա 2002թ. մարդահամարի տվյալներով այն կազմել է 285 հազ.: Այսինքն՝ նույն ժամանակահատվածում վրաստանաբնակ ադրբեջանցիների թիվը կրճատվել է ընդամենը 20 հազարով, խորհրդանշական թիվ՝ հայ բնակչության նվազման համեմատ:

Արդյունքում, եթե 1989թ. դրությամբ հայերը քանակապես գերազանցում էին ադրբեջանցիներին՝ հանդիսանալով վրացիներից հետո երկրորդ էթնիկ

խումբն այդ երկրում, ապա 2002թ. դրությամբ իրավիճակը կտրուկ փոխվում է՝ ի վնաս հայերի: 285 հազ.-ը 250 հազ.-ի դիմաց հարաբերակցությամբ այսուհետ ադրբեջանցիներն են դառնում քանակապես երկրորդ էթնիկ փոքրամասնությունը վրացիներից հետո:

Թեև, ինչպես վերը նշվեց, 2014թ. մարդահամարի վերջնական արդյունքների բացակայության պայմաններում անհնար է տալ ներկայում Վրաստանում բնակվող հայերի և ադրբեջանցիների թվաքանակի վերաբերյալ պաշտոնական տվյալներ, այնուամենայնիվ, ըստ փորձագիտական տվյալների, 2002-2014թթ. հայերի և ադրբեջանցիների թվաքանակների միջև առկա տարբերությունն էլ ավելի է խորացել: Այդ տարիներին ադրբեջանաբնակ հայության թվաքանակի անկումը գնահատվում է տասնյակ հազարներով՝ ընդհուպ մինչև 100 հազ., մինչդեռ ադրբեջանցիների թվաքանակը գրանցել է էական աճ՝ հասնելով մինչև 400 հազ.-ի:

Նկար 1

Վրաստանի էթնիկ քարտեզը



Հիշյալ հիմնախնդիրներն առնչվում են Ջավախքին այնքանով, որքանով որ հայ և ադրբեջանցի բնակչության հարաբերակցության էական խախտումը Վրաստանում կարող է հանգեցնել ադրբեջանցիների կողմից այդ տարածա-

շրջանի ժողովրդագրական յուրացմանը: Այսինքն՝ Ջավախքում հայկական տարրի նվազման պարագայում այն կարող է փոխարինվել և լրացվել ադրբեջանական տարրով: Իսկ դա մարտահրավեր է ոչ միայն Հայաստանի, այլև հենց Վրաստանի համար: Վրաստանի էթնիկ քարտեզի (*Նկար 1*) դիտարկումը ցույց է տալիս, որ ադրբեջանցիների կողմից Ջավախքի յուրացման դեպքում Հայաստանի և Վրաստանի միջև կառաջանա «մուսուլմանական (ադրբեջանական) սեպ»: Այսինքն՝ հայ-վրացական սահմանի ամբողջ երկայնքով կառաջանա ադրբեջանցիներով բնակեցված գոտի, որն անջրպետող նշանակություն կունենա երկու երկրների հարաբերությունների համար:

Նման սցենարի դեպքում Վրաստանի համար մարտահրավերը կայանում է հետևյալ հանգամանքներում:

Ադրբեջանցիների կողմից Ջավախքի ժողովրդագրական յուրացման դեպքում Վրաստանը, ոչ միայն արևմուտքից և հարավ-արևելքից, այլև հարավից կհայտնվի մուսուլմանական պաշարման մեջ: Հյուսիս-արևելքում Վրաստանը նույնպես ունի լրջագույն խնդիրներ: Նախ՝ արխազական և հարավօսական հակամարտությունների հետևանքով շրջափակման ենթարկելով այդ երկրները՝ Վրաստանն ինքն է իրեն մեկուսացրել այդ հատվածներում: Երկրորդ՝ Ռուսաստանի հետ բարդ քաղաքական հարաբերությունները նույնպես որոշակի խնդիրներ են ստեղծում Վրաստանի համար հյուսիս-արևելքում: Եվ երրորդ՝ ոչ պակաս կարևոր գործոն է այն, որ Ռուսաստանի հարավային՝ Վրաստանի հետ սահմանակից շրջանները (Չեչնիա, Ինգուշիա, Դադստան, Կարաչաև-Չերկեսիա, Կաբարդինո-Բալկարիա) նույնպես մուսուլմանաբնակ են: Հետևաբար, միակ գոտին, որը ճեղքում է Վրաստանի շրջափակվածությունը մուսուլմանների կողմից, Ջավախքն է: Վերջինիս կորստի դեպքում այն ամբողջությամբ կհայտնվի մուսուլմանական շրջապատում: Նման վտանգ սպառնում է նաև Հայաստանին: Ասվածից բխում է, որ Ջավախքի ժողովրդագրական յուրացումն ադրբեջանական տարրի կողմից կհանգեցնի նրան, որ Հայաստանը և Վրաստանը կդառնան առանձին փոքրիկ քրիստոնեական կղզյակներ իսլամական մեծ ծովում:

Ջավախքի ժողովրդագրական յուրացումն ադրբեջանցիների կողմից կհանգեցնի նաև Վրաստանում ադրբեջանական անջատողականության ակտիվացմանը: Որքան էլ, ըստ փորձագիտական գնահատականների, ադրբեջանական հանրույթը Վրաստանում քաղաքականապես իներտ է, միևնույն է,



ժողովրդագրական գործոնը չի կարող իր դերը չխաղալ: Այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել նաև Թուրքիայի և Ադրբեջանի գործոնը, որոնք դրսից ազդու միջոցներով կարող են հրահրել և հովանավորել ադրբեջանական անջատողականությունը Վրաստանում: Եթե անգամ ադրբեջանական անջատողական շարժում չառաջանա Վրաստանում, ապա ժողովրդագրական գործոնի ազդեցությամբ Վրաստանը Ջավախքը կորցնելու պարագայում վերջնականապես կհայտնվի մարիոնետային պետության կարգավիճակում Թուրքիայի և Ադրբեջանի ձեռքում, որոնք ցանկացած պահի կարող են շահարկել այդ գործոնը նրա դեմ:

Վրացական հասարակական-քաղաքական շրջանակներում տարածված է այն մտայնությունը, թե Ջավախքի հայաթափումը կչեզոքացնի հայկական անջատողականության սպառնալիքը: Իրականում, սակայն, այն կհանգեցնի մեկ այլ և շատ ավելի վտանգավոր՝ ադրբեջանական անջատողականության վերելքին, որին դիմագրավելը շատ ավելի բարդ կլինի: Եթե, ինչպես ցույց է տվել պատմության փորձը, հայկական անջատողականության հարցում հեշտ է Հայաստանի հետ գալ պայմանավորվածությունների և փոխշահավետ համաձայնության արդյունքում չեզոքացնել այդ սպառնալիքը, ապա ադրբեջանական անջատողականության պարագայում շատ ու շատ ավելի բարդ, գրեթե անհնար կլինի Թուրքիայի և Ադրբեջանի հետ նման պայմանավորվածությունների գալը:

Ասվածից հետևում է, որ Վրաստանի շահերից է բխում Ջավախքում հայկական մեծամասնությամբ բնակչության պահպանումը<sup>1</sup>: Դա, թերևս, միակ գործոնն է, որ կարող է զսպել ինչպես ադրբեջանական, այնպես էլ հայկական անջատողականությունը: Հայտնի «բաժանիր, որ տիրես» սկզբունքի տրամաբանությամբ՝ Վրաստանը, ապահովելով որոշակի հավասարակշռություն հայկական և ադրբեջանական բնակչության միջև, կարող է կանխել երկու կողմից էլ սպառնացող անջատականության վտանգը:

Այսպիսով, Ջավախքի հայապահպանության խնդիրը, բխելով ինչպես հայկական, այնպես էլ վրացական շահերից, համագործակցության լուրջ հիմք է նաև սփյուռքում: Վերջին տարիներին ԱՄՆ հայկական լոբբին ջանքեր է գործադրում, որպեսզի այդ երկրի կողմից Վրաստանին հատկացվող օգնության մի մասն ուղղվի Ջավախքի զարգացմանը: Կարծում ենք, այս խնդրի

<sup>1</sup> Վրաստանը, ինչպես ակնհայտ է վերոշարադրյալից, չունի բավականաչափ ժողովրդագրական ռեսուրս Ջավախքը վրացիներով բնակեցնելու համար:

իրականացմանը կարելի է հասնել ոչ միայն և ոչ այնքան հակադրության կամ պայքարի, որքան համագործակցության միջոցով: Կարելի է գալ պայմանավորվածության, ըստ որի՝ հայկական լոբբին կնպաստի Վրաստանին հատկացվող գումարների մեծացմանը՝ պայմանով, որ դրա մի մասը ծախսվի Ջավախքի զարգացման ծրագրերի վրա<sup>1</sup>:

Որպեսզի նման համագործակցությունը վերացական չլինի, անհրաժեշտ է այն իրականացնել կոնկրետ հայ-վրացական համատեղ նախագծերի մշակման և իրականացման մակարդակով: Օրինակ՝ ժամանակին շրջանառության մեջ էր դրվել Ջավախքում հայ-վրացական համալսարանի հիմնման գաղափարը, որն այդպես էլ կյանքի չկոչվեց: Վերացականությունից կոնկրետության գալու համատեքստում խիստ կարևոր են հիշյալ և նմանատիպ այլ (հաղորդակցային ենթակառուցվածքների, համատեղ տնտեսական նախագծերի և այլնի վերաբերյալ) նախագծերի հիմնավորված պատրաստումը և ԱՄՆ-ի կողմից ֆինանսավորման ներկայացնելը:

Միյուրքում հայ-վրացական համագործակցության որոշակի հնարավորություն կա նաև Թուրքիայում: Այնտեղ առկա են ինչպես հայկական, այնպես էլ վրացական պատմամշակութային հուշարձաններ: Նրանց պահպանման, վերականգնման և այլ հարցերը կարող են դառնալ հայկական և վրացական համայնքների համագործակցության առարկա: Դրա համար որոշակի բարենպաստ միջավայր է ստեղծում նաև վերջին շրջանում Թուրքիայի վրա կիրառվող միջազգային ճնշումը՝ կապված կրոնական փոքրամասնությունների իրավունքների հարգման և մասնավորապես՝ եկեղեցական գույքի վերադարձման խնդրի հետ:

Ճիշտ է, վրացիները Թուրքիայում չունեն կրոնական փոքրամասնության կարգավիճակ<sup>2</sup>, սակայն նրանց փաստացի գոյությունն արդեն հիմք է այլ քրիստոնյա փոքրամասնությունների հետ համագործակցելու համար: Բացի այդ, նրանք կարող են Հույն Ուղղափառ եկեղեցու շրջանակներում իրականացնել այդ համագործակցությունը: Բանն այն է, որ Կ.Պոլսի հունական պատրիարքությունն ունի ոչ միայն Թուրքիայի հույների, այլև բոլոր ուղղափառ քրիստոնյաների շահերի ներկայացուցիչը լինելու գործառույթ<sup>3</sup>: Այսպի-

<sup>1</sup> Հայկական կայացած լոբբին ԱՄՆ-ում և Վրաստանի ջերմ հարաբերություններն այդ երկրի հետ լուրջ նախապայման են նման համագործակցության համար:

<sup>2</sup> Այդպիսի կարգավիճակ ունեն միայն հայերը, հույները և հրեաները:

<sup>3</sup> Թեև 1453թ. Բյուզանդական կայսրության անկումից հետո Կ.Պոլիսը փաստացիորեն կորցրեց ողջ աշխարհի ուղղափառ քրիստոնյաների հոգևոր կենտրոնի իր դերը, սակայն ֆորմալ առումով այն մինչ օրս պահպանում է իր այդ կարգավիճակը:

սով, չնայած Վրաստանը Թուրքիայի հետ միջպետական հարաբերությունների շնորհիվ որոշակիորեն կարողանում է ապահովել այդ երկրում վրացական պատմամշակութային հուշարձանների պահպանումն ու վերականգնումը, սակայն ավելորդ չէ նաև այդ հարցում վրացական համայնքի համագործակցությունն այլ քրիստոնյա համայնքների, մասնավորապես՝ հայկականի հետ [8, էջ 619-620]:

Հայկական և վրացական համայնքների միջև որոշակի համագործակցության դաշտ կա նաև Ռուսաստանում: Հետխորհրդային շրջանում նախկին միութենական հանրապետություններից դեպի ՌԴ մեծ թվով բնակչության միգրացիայով պայմանավորված՝ այդ երկրում որոշակիորեն վերելք է ապրում ծայրահեղականությունը<sup>1</sup>: Այն դրսևորվում է հատկապես Միջին Ասիայից և Կովկասից եկածների նկատմամբ անհանդուրժողականությամբ և բռնություններով: Հայկական և վրացական համայնքները Ռուսաստանում, ունենալով անվտանգության հետ կապված միևնույն խնդիրները, կարող են համագործակցել այլատյացության, խտրականության և նման այլ երևույթներից օրենքի շրջանակներում համատեղ պաշտպանվելու նպատակով:

Այսպիսով, որքան էլ տարբեր լինեն հայկական և վրացական համայնքները սփյուռքում, կան որոշակի հարցեր, որոնց պարագայում նրանք ունեն ընդհանուր շահեր և խնդիրներ: Դրա հետ միասին, հայկական և վրացական հոգևոր-քաղաքակրթական մերձավորությունը լուրջ հիմք է ոչ միայն միջպետական, այլև սփյուռքի համայնքների մակարդակով համագործակցության համար:

*Մարտ, 2016թ.*

### Աղբյուրներ և գրականություն

1. Georgian Diaspora and Migrant Communities in Germany, Greece and Turkey: Transnational Realities and Ties with Georgia, International Centre for Migration Policy Development, Vienna – Austria, April 2014.
2. *Кузнецhevский В.Д.*, Этнические диаспоры и титульная нация в России: Аналитические обзоры РИСИ, М., 2014, Выпуск 1.

<sup>1</sup> Դրա պատճառներն ունեն ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ քաղաքակրթական բնույթ: Նախկին միութենական հանրապետություններից եկած աշխատանքային միգրանտները հանդիսանում են համեմատաբար էժան աշխատուժ, որոնք զբաղեցրել են աշխատանքի շուկան ՌԴ-ում՝ տեղի բնակչության մի զգալի հատվածի թողնելով գործազուրկ: Քաղաքակրթական առումով՝ միգրանտներն իրենց հետ բերում են իրենց երկրների արժեքներն ու բարքերը, որոնք անհամատեղելի են ռուսաստանյան հասարակության արժեքների ու բարքերի հետ:

3. «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, Հայկ. հանրագիտարան հրատ., 2003:
4. Law of Georgia on Compatriots/Expatriates Residing Abroad and Diaspora Organizations, [http://www.carim-east.eu/media/legal%20module/natfr/GE\\_2.2%20LawDiaspora\\_En.pdf](http://www.carim-east.eu/media/legal%20module/natfr/GE_2.2%20LawDiaspora_En.pdf)
5. Հովյան Վ., Սփյուռքի ինքնակազմակերպման խնդիրների շուրջ, «Գլոբուս», 2014, թիվ 11-12, էջ 78-87:
6. Նահապետյան Հ., Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայ գործունեությունը, Երևան, «Գասպրինտ» հրատ., 2010:
7. Պետրոսյան Բ., Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1988-2001թթ., Երևան, «Գիտություն» հրատ., 2011:
8. Հովեան Վ., Եկեղեցական գոյքի վերադարձման խնդիրը որպես հայոց պահանջատիրության բաղկացուցիչ, Հայկազեան հայագիտական հանդես, 2015, հատոր ԼԵ, էջ 605-622:

### **ՀԱՅՎԱԿԱՆ ԵՎ ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՆ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ. ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԵԶՐԵՐ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ**

#### *Վահրամ Հովյան*

#### Ամփոփագիր

Ի տարբերություն հայկական սփյուռքի, որը ձևավորվել է հիմնականում Հայոց ցեղասպանության հետևանքով, վրացական սփյուռքը հիմնականում միգրացիայի արդյունք է: Եթե հայկական սփյուռքին բնորոշ է համազգային կազմակերպությունների առատությունը՝ ի դեմս կուսակցությունների, եկեղեցիների, բարեգործական, մշակութային, կրթական և այլ կազմակերպությունների, որոնք իրենց գործունեությունը ծավալում են ամբողջ աշխարհի հայ համայնքներում, ապա վրացական սփյուռքին բնորոշ են հիմնականում տեղական նշանակություն ունեցող՝ համայնքային կառույցները:

### **АРМЯНСКИЕ И ГРУЗИНСКИЕ ЗАРУБЕЖНЫЕ ОБЩИНЫ: ГРАНИ СОПОСТАВЛЕНИЯ И ПЕРСПЕКТИВЫ СОТРУДНИЧЕСТВА**

#### *Ваграм Овян*

#### Резюме

В отличие от армянской диаспоры, сформировавшейся в основном вследствие Геноцида армян, грузинская диаспора – преимущественно результат миграции. Если армянской диаспоре присуще обилие общенациональных организаций в лице партийных, церковных, культурных, благотворительных и других организаций, разворачивающих свою деятельность в армянских общинах всего мира, то для грузинской диаспоры характерны в основном общинные структуры локального значения.

---

**ARMENIAN AND GEORGIAN COMMUNITIES IN FOREIGN COUNTRIES:  
FACETS OF COMPARISON AND PROSPECTS OF COOPERATION**

*Vahram Hovyan*

Resume

Unlike the Armenian diaspora, which was formed due to the Armenian Genocide, the Georgian diaspora is largely a result of migration. Armenian diaspora is characterized by an abundance of pan-Armenian organizations: political parties, churches, benevolent, cultural, educational and other organizations, which act in Armenian communities all around the world, whereas for the Georgian diaspora local community structures are typical.

ՄՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ ՀՀ  
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐՈՒՄ

*Դավիթ Սարգսյան\**

*Բանալի բառեր*՝ աշխարհաքաղաքական ընտրություն, սփյուռք, հայ համայնքներ, մեդիադաշտ, Եվրասիական միություն, Եվրամիություն:

Հայաստանի աշխարհաքաղաքական ընտրության թեմայի շուրջ հայաստանյան մեդիադաշտին բնորոշ անմիատարրությունը ցայտուն է դրսևորվում ոչ միայն տեղական, այլև Հայկական սփյուռքի լրատվամիջոցներում: Նախ, սփյուռքն ինքը չափազանց խայտաբղետ է՝ տարբեր պատմական հանգամանքների և ժամանակակից իրողությունների կրող ու պահպանող: Համայնքի առաջացման ժամանակաշրջանը, ձևավորված կայուն ավանդույթները, ինքնակազմակերպման աստիճանը, ավանդական հաստատությունների առկայությունը, հյուրընկալող երկրի քաղաքական համակարգն զգալիորեն պայմանավորում են հայության տվյալ հատվածի, հետևաբար՝ նրանց համայնքային շահերն արտահայտող լրատվամիջոցի իդձերը: Էական է նաև տվյալ գաղթօջախի հայության տեղեկատվության աղբյուրների բազմազանությունը: Եվրոպական երկրներում, Մերձավոր Արևելքում և Ռուսաստանում լույս տեսնող հայկական լրատվամիջոցներն օբյեկտիվ պատճառներով տարբեր տեղեկատվական միջավայրերի կրող են: Ըստ այդմ՝ Հայաստանին և նրան առնչվող աշխարհաքաղաքական գործընթացներին ուղղված սփյուռքյան հայացքներն էլ տարբեր են, երբեմն՝ տրամագծորեն:

Էական են նաև հայաստանյան օրակարգում հայկական գաղթօջախների առանձնահատկությունների ընկալումը, նրանց սահուն ինտեգրումը երկրի մեդիադիսկուրսում: Որքան մեծ է Հայկական սփյուռքում գործող լրատվամիջոցների ներկայացվածությունը (թեկուզ միջնորդավորված) հայաստանյան մեդիադաշտում, այնքան բարձր են փոխադարձ տեղեկացվածության մակար-

\*ԵՊՀ ասպիրանտ:

դակը, ընդհանուր խնդիրների և մարտահրավերների գիտակցումն ու հայության համահավաքության ինտեգրատիվ գործառնությունը: Մասնավորապես, վերջին երկու տասնամյակում սփյուռքահայ լրատվամիջոցները, դառնալով համընդհանուր հարամիտման (կոնվերգենցիայի) գործընթացի կրողը, որոշակիորեն ինտեգրվեցին հայաստանյան մեդիադաշտին: Դրան նպաստեցին նաև համացանցի զարգացումն ու համացանցային տիրույթում սփյուռքահայ լրատվամիջոցների ընդգրկվածությունն ու մատչելիությունը: Սփյուռքի հանրաճանաչ պարբերականների մեծ մասն ստեղծեց սեփական համացանցային կայքը՝ հնարավորություն տալով աշխարհի տարբեր ծագերում ապրող հայերին հաղորդակից լինելու գաղթօջախների անցուղարձին և զարգացումներին: Նման նպատակ են հետապնդում նաև սփյուռքում գործող էլեկտրոնային լրատվամիջոցները, հատկապես ռադիոկայանները, որոնք, ընդգրկված լինելով համացանցային տիրույթում, ունակ են առցանց հեռարձակմամբ կապ հաստատելու իրենց ունկնդիրների հետ և նպաստելու հայրենիք-սփյուռք կապի ամրապնդմանը [1]:

Հայաստանյան լրատվամիջոցներն ինտեգրացիոն նախագծերում մեր երկրի մասնակցությունը և աշխարհաքաղաքական կողմնորոշման շուրջ ներքին դիսկուրսը դիտարկում են առավելապես հայաստանցիների աչքերով: Հայկական սփյուռքը՝ որպես որոշիչ գործոն, միայն երբեմն է հիշատակվում, այն էլ՝ ոչ թե ինքնաբավ որոշում կայացնողի, այլ Երևանին լրացուցիչ ազդակներ հղելու համատեքստում: Եվրամիության հետ Ասոցացման պայմանագրի բանակցությունների կամ Մաքսային միությանն անդամակցության շուրջ քննարկումների դիտարկման տիրույթը հայաստանյան մեդիամիջավայրում բավական սահմանափակ է. դրանում հիմնականում չեն ներառվում աշխարհասփյուռ հայության համահավաք շահերն ընդհանրապես և տարբեր գաղթօջախների շահերը՝ մասնավորապես, չկա լրագրողական այն գիտակցումը, որ որոշակի ինտեգրացիոն ուղեգծի ընտրությունը կոնկրետ հետևանքներ կունենա նաև սփյուռքի հայ համայնքների քաղաքական կյանքում:

Անգամ համահայկական հետաքրքրություն ներկայացնող հիմնահարցերը՝ արցախյան հիմնախնդիրն ու Հայոց ցեղասպանության ճանաչման պայքարի հարցն արծարծելիս լրատվամիջոցները, Հայաստանի ինտեգրացիոն ուղեգծի ընտրության հարցի շրջանակում, հիմնականում շրջանցում են սփյուռքի ներուժի գործոնը: Մինչդեռ հատկապես Հայոց ցեղասպանության ճանաչման

պայքարի հարցում առաջամարտիկը հենց սփյուռքի հայկական համայնքներն ու կազմակերպություններն են: Հայաստանյան լրատվադաշտի մեծ մասն աղոտ պատկերացում ունի սփյուռքի իրական կարիքների վերաբերյալ:

Աշխարհի հայաշատ քաղաքներից ռեպորտաժներն առավելապես կրում են իրադարձային բնույթ, ասենք՝ լուսաբանվում են լուսանջելեսահայերի պարբերական դարձած հակաթուրքական ակցիաները: Մինչդեռ սփյուռքի հայության կյանքի բազմաշերտ, համակողմանի և ընդգրկուն լուսաբանումը հայաստանյան հեռուստառադիոթերթում և մամուլում կաղում է, ինչն էլ ազատ տեղեկատվական տարածքը լցնում է սփյուռքի մասին միջերով և նախապաշարմունքներով: Ավանդական սփյուռքի, օրինակ՝ Լիբանանի կամ Իրանի հայ համայնքների մասին լուսաբանումներն էլ առավելապես վերաբերում են կա՛մ միջկուսակցական, կա՛մ եկեղեցական շրջանակին՝ շրջանցելով բուն համայնքների ներկայացուցիչների կենցաղն ու կյանքը:

Սփյուռքահայ փորձագետների և խմբագիրների խոսքը ևս հաճախադեպ չէ հայաստանյան մեդիաիրականությունում: Նրանցից մի քանիսը, օրինակ՝ ամերիկյան «Կալիֆոռնիա կուրիեր» թերթի հրատարակիչ և խմբագիր Հարութ Սասունյանը<sup>1</sup> կամ Բեյրութի «Ազդակ» օրաթերթի խմբագիր Շահան Գանտահարյանն<sup>2</sup> առավել հաճախ են հայտնվում հայաստանյան հեռուստաթերթում կամ մամուլում, սակայն սփյուռքի ամբողջ ներկայացվածությունը, բնականաբար, չեն ապահովում:

Ուշագրավ է, որ եթե տեղական լրատվամիջոցները լավ չեն պատկերացնում սփյուռքի հայկական համայնքների կյանքի մանրամասները, սփյուռքահայ կամ արտասահմանում աշխատող հայազգի փորձագետներն էլ հաճախ իրականությունից կտրված պատկերացում ունեն հայաստանյան իրավիճակի վերաբերյալ: Ընդ որում, արևմտյան և ռուսաստանյան սփյուռքի ներկայացուցիչներն արմատապես հակադիր միջերի կրող են: Ամերիկյան կամ եվրոպական փորձագիտական դաշտը ներկայացնող հայազգի վերլուծաբանները հայաստանյան ցանկացած հիմնախնդրի շուրջ դատում են հետևյալ գաղափարաբանությամբ. Ռուսաստանին պետք է հնազանդ Հայաստան, որն արտաքին քաղաքականության առումով կունենա ձևական անկախություն, իսկ տնտեսական և անվտանգության առումով լրիվ կախված կլինի

<sup>1</sup> <http://www.azatutyun.am/media/video/25113292.html>, Բացարիկ հարցազրույց Հարութ Սասունյանի հետ:

<sup>2</sup> <http://civilnet.am/2014/12/17/shahan-kandaharian-turkey-mahcupyan/#.VtBRdn2LTcs>,

Խորհուրդներ՝ հակառակ ուղղությամբ. Շահան Գանտահարյան:



Մոսկվայից<sup>1</sup>: Ի հակադրություն նման մտայնության՝ ռուսահայ շրջանակները Մաքսային միությանը Հայաստանի անդամակցության նպատակադրումը համարում են անշրջելի, արդարացված և իմաստուն<sup>2</sup>:

Տեղական լրատվադաշտն ընդհանուր առմամբ չափից դուրս հայաստանակենտրոն է, սփյուռքյան լրահոսը դրանում հրատապ չէ կամ էլ կրում է խորհրդանշական բնույթ: Փոխարենը տեղական լրատվամիջոցներում լայնորեն առկա է արտագաղթի, հարկադիր աշխատանքային միգրացիայի մոտիվը: Հատկապես մամուլը, համացանցն ու ռադիոն, որոշակի վերապահումներով՝ նաև հեռուստատեսությունը, վերջին տարիներին այս իրողության մասին ահազանգում են խիստ որոշակի, անզամ հուզական տարր պարունակող ձևակերպումներով՝ «Ժողովրդագրական աղետ», «Բնակչության զանգվածային արտագաղթ», «դատարկվող գյուղեր ու քաղաքներ» և այլն: Մինչդեռ արտագաղթող հայության բնակատեղիի և կարգավիճակի փոփոխության, նրանց հետագա ճակատագրի լուսաբանման հարցում գրեթե ոչ մի լրատվամիջոց հետևողական չէ:

Հայաստանի աշխարհաքաղաքական կողմնորոշման և ինտեգրացիոն ուղեգծի ընտրության հարցը սփյուռքահայ լրատվամիջոցներում առանձնահատուկ նրբերանգ ունի. դիսկուրսի կիզակետում առավել հաճախ ոչ թե բուն քաղաքական իրողություններն են, այլ հայ ժողովրդի քաղաքակրթական պատկանելության հարցը: Հատկապես Եվրոպայում հրապարակվող հայկական և հայալեզու լրատվամիջոցներն առատ են Հին աշխարհամասում հայության դերի քննարկումներով, որոնք սովորաբար հանգում են եվրոպական քաղաքակրթության մեջ հայության ունեցած մեծ վաստակի գնահատմանը: «Եվրոպան մեզ պետք է հարզի որպես նոր եվրոպական քաղաքակրթության խորունկ աղբյուրներից մեկը», - Չեխիայում հրատարակվող «Օրեր» պարբերականին տված հարցազրույցում կարծիք է հայտնում Ռուսինիայի էկոնոմիկայի նախկին նախարար, այդ երկրի հայերի միության նախագահ, գրող Վարուժան Ոսկանյանը<sup>3</sup>:

Եվրոպայի հայկական սփյուռքի հանրային օրակարգը հակասական է. մի կողմից՝ նշվում է, որ նոր գաղթած հայաստանցիները, որոնք ավանդական

<sup>1</sup> <http://168.am/2015/06/27/508789.html>, «Մոսկվան կփորձի կանխել իշխանափոխության ցանկացած լուրջ փորձ». Լիլիթ Գևորգյան:

<sup>2</sup> <http://yerkirmedia.am/index.php?act=news%26lan=hy%26id=2945?act=news&lan=hy&id=21952>, Անդրանիկ Միհրանյան. Մաքսային միությանը միանալու՝ Հայաստանի իշխանությունների որոշումը ճիշտ էր:

<sup>3</sup> <http://orer.eu>, Ռուսինիայի հայերը. պատմություն, ներկա, ապագա:

սփյուռք չեն և առավելապես մտահոգ են իրենց անձնական կյանքով և ընտանիքների ապագայով, քան համայնքային առօրյայով, դժվար են ինտեգրվում զարգացած երկրների կյանքին, և նրանց լիարժեք կենսագործունեության համար պետք է շուտափույթ ինտեգրում, մյուս կողմից՝ օրախնդիր է ակունքներից հեռանալու, ինքնության պահպանման, ավանդական ազգային արժեքներին հարազատության մոտիվը: Համարվում է, որ վերջին շրջանում Հայաստանից արտագաղթածները հետաքրքրված չեն քաղաքական հիմնախնդիրներով, նրանց տարագրության պատճառը սոցիալ-տնտեսական է, հետևաբար՝ հայաստանյան քաղաքական օրակարգը նրանք չեն տեղափոխում սփյուռքահայ հասարակական շրջանակներ:

Հատկանշական են նաև եվրոպահայ գաղթօջախներում հայերի քաղաքական ակտիվության, երկրի հանրային կյանքում լայն ներկայացվածության մասին հրապարակումները: «Օրերի» նույն անդրադարձի մեջ, Ռուսիայի հայերի պնդմամբ՝ պատգամավորության հայ թեկնածուների օգտին քվեարկող ռուսացիների թիվը խոստումնալից է: Մակայն առավել ծանրակշիռ եվրոպական երկրներում, օրինակ՝ Իտալիայում, հայերի քաղաքական մասնակցության ցուցանիշն անբավարար է, և սփյուռքահայ գործիչներն իրենք են կոչ անում հայրենադարձների նոր սերնդին՝ արագորեն մտնել եվրոպական քաղաքականության ոլորտ<sup>1</sup>:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հեղինակային խմբի իրականացրած «Սփյուռքի դիրքորոշումները ՀՀ աշխարհաքաղաքական կողմնորոշումների շուրջ» հետազոտության արդյունքները ևս փաստում են, որ սփյուռքը ՀՀ ինտեգրման գործընթացների վերաբերյալ մեղիաքննարկումներում առանձնապես ակտիվ չէ և ավելի շուտ հակված է արտացոլելու հայաստանյան մեղիադիսկուրսը [2]: Հեղինակային խումբը եզրակացնում է, որ ՀՀ աշխարհաքաղաքական կողմնորոշումների շուրջ ավանդական, ինչպես նաև նոր սփյուռքի կողմից արտահայտված տեսակետները գերակայող չեն և ավելի հաճախ ազդվում են Հայաստանից ստացվող տեղեկատվական հոսքերից: Որպես առավելապես սեփական դիրքորոշումներով հանդես եկող մեղիահարթակներ են նշվում Իրանի «Ալիք», Ռուսաստանի «Ноев Ковчег» և ԱՄՆ «Ասպարեզ» պարբերականները:

Եվրոպայի հայկական մամուլը բացասաբար է գնահատում Եվրամիության հետ Ասոցացման պայմանագրի ստորագրումից հրաժարումն ու Մաք-

<sup>1</sup> <http://orer.eu>, Գրիգոր Իստամբուլի. Նոր սերունդը պետք է մտնի եվրոպական քաղաքականության մեջ:

սային միության օգտին ընտրությունը: Սակայն ի տարբերություն հայաստանյան կամ ամերիկահայ մամուլի՝ Եվրոպայի հայկական լրատվամիջոցներն առավելապես զբաղվում են Ռուսաստանի քննադատությամբ և ոչ թե Եվրամիության գնահատանքով: Դրա օրյեկտիվ պատճառն այն է, որ Եվրոպահայ մամուլը Եվրոպական համայնքի մի մասն է, և մյուս գաղթօջախներում որպես առավելություն ընկալվող իրողությունները Եվրոպական երկրների հայկական մամուլն ընկալում է որպես ինքնին հասկանալի և ավելորդ հիմնավորում չպահանջող: Փոխարենն առատ է Հայաստանի և Ռուսաստանի գործելակերպի քննադատությունը, Երևանին՝ Կրեմլի պահանջի առաջ տեղի տալու, Մոսկվային էլ՝ ճնշում գործադրելու և որոշում պարտադրելու հարցում:

Հայաստանի ինտեգրացիոն մոդելի փոփոխության նկատմամբ սպասելի հետաքրքրություն են ցուցաբերում ավանդական մերձավորարևելյան սփյուռքի, նախևառաջ՝ Սիրիայի, Լիբանանի և Իրանի, ինչպես նաև Եվրասիական տարածքի, գլխավորապես՝ Ռուսաստանի հայկական լրատվամիջոցները:

Մերձավոր Արևելքի հայալեզու լրատվամիջոցներից հայաստանյան մեդիադաշտում ամենամեջբերվողը Բեյրութի «Ազդակ» օրաթերթն է: Եվրամիության հետ Հայաստանի տևական բանակցություններն «Ազդակի» էջերում առանձնապես չեն լուսաբանվում, քանի որ ինֆորմացիոն առիթն զգալի չէ, և այն ընկալվում է որպես բնականոն գործընթաց: Մաքսային միությանը Հայաստանի անդամակցության ցանկության արտահայտումից ի վեր օրաթերթը պարբերաբար անդրադառնում է հայաստանյան իշխանությունների վարքին. միտումը հիմնականում քննադատական է:

«Ազդակի» և մերձավորարևելյան մյուս հայկական լրատվամիջոցների խմբագրական քաղաքականության բնորոշ գիծը, ի տարբերություն արևմտյան կամ Եվրասիական հայկական մամուլի, տարածաշրջանն իր ամբողջ կոնֆիգուրացիայով պատկերացնելն է: Մեծ Մերձավոր Արևելքի մեջ ներառվում է նաև Հայաստանը, հետևաբար՝ դրա կենտրոնում գտնվող Սիրիայի և Լիբանանի հայալեզու պարբերականներն ինքնաբերաբար նույնականացնում են տարածաշրջանային իրողությունները: 2013թ. սեպտեմբերի 3-ից մի քանի օր անց «Ազդակի»՝ «Ռուսաստանի ճնշման տակ. Հայաստանը կանգնեց պարտադրուած ընտրութեան առաջ» խորագրով հոդվածն ընդհանուր առմամբ արտահայտում է այն նույն գաղափարական, արժեքանական և քաղա-

քական նրբերանգները, որոնք իշխում են հայաստանյան մամուլում<sup>1</sup>: Հեռարձակող լրատվամիջոցները (նախևառաջ ռադիոկայանները) և նմանատիպ դիրքորոշման կրող են. Բեյրութի «Վանայ ձայն» հայկական ռադիոկայանն ունի նաև առցանց հեռարձակում և մերձավորարևելյան գաղթօջախներում պահանջված լրատվամիջոց է<sup>2</sup>:

Այս և հետագա հրապարակումներում, անդրադարձ կատարելով Հայաստանի արտաքին քաղաքական և անվտանգության ուղեգծերին, մերձավորարևելյան մամուլը ելնում է հետևյալ հայեցակետից. Հայաստանը չունի բնականոն հարաբերություններ և բաց սահմաններ իր հարևաններից երկուսի հետ, հետևաբար՝ Երևանը չի կարող վարել չեզոք և հավասարակշռված արտաքին քաղաքականություն: Քանի դեռ Ադրբեջանն սպառնում է նոր պատերազմով, իսկ Թուրքիան Հայաստանին տնտեսապես ծնկի բերելու նպատակով շարունակում է շրջափակման թշնամական քաղաքականությունը, Հայաստանն այլ ընտրություն չունի, քան ապավինել երրորդ ուժին, այսինքն՝ Ռուսաստանին, եզրակացնում է մերձավորարևելյան հայ սփյուռքի մամուլը:

Ռուսաստանի հայկական ռուսալեզու մամուլը, առաջին հերթին՝ «*Hoeb Ковчег*» և «*Еркрамас*» պարբերականները, լայն անդրադարձներ են կատարում Մաքսային միությանը Հայաստանի անդամակցության նպատակահարմարության խնդրին: Ռուսաստանի հայկական լրատվամիջոցների խմբագրական քաղաքականությունն այս հարցում երկակի է. մի կողմից՝ հասկանալի պատճառներով նրանք շատ ավելի լայն հասանելիություն ունեն Ռուսաստանի գլխավորած վերպետական կազմավորումների շուրջ բազմաբնույթ տեղեկատվության, մյուս կողմից՝ Դաշնության տեղեկատվական միջավայրն առանձնահատուկ է, երբեմն՝ գաղափարական, հուզական և արժեքանական որոշ կաղապարների կրող, ինչն էլ ուղղակիորեն անդրադառնում է ռուսալեզու հայկական պարբերականների հրապարակումների վրա: Այլ կերպ ասած՝ Մաքսային միությունը ներսից դիտարկելը տեղեկատվական հազեցածության առումով օգտավետ է, սակայն ընկալումների անկողմնակալության տեսանկյունից՝ ոչ այնքան:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ Հայաստանի և Հայկական սփյուռքի ընդհանուր տեղեկատվական տարածքը դեռևս թույլ է: Դրա միասնականացման

<sup>1</sup> <http://www.aztagdaily.com/archives/147182>, Ռուսաստանի ճնշման տակ, Հայաստանը կանգնեց պարտադրուած ընտրութեան առաջ:

<sup>2</sup> <http://www.voiceofvan.net/>, Վանայ ձայն:

փորձերը վերջին տարիներին թեև զգալի են և անգամ ինստիտուցիոնալ կարգավիճակ են ձեռք բերել (Լրագրողների համահայկական համաժողովների անցկացում), ամեն դեպքում, համահայկական խնդիրների շուրջ տեղեկատվական միջավայրերը, ազդակները, աղբյուրներն ու ընկալումները Հայաստանում և սփյուռքում բացարձակապես տարբեր են: Հայաստանի ինտեգրացիոն ուղեգծի շուրջ զարգացումներն, ընդհանուր առմամբ, անբավարար են ներկայացված սփյուռքի հայկական լրատվամիջոցներում: Ընդ որում, խնդիրը փոխադարձ է. սփյուռքի լրատվամիջոցներում հայաստանյան իրողությունների ընկալումն աղոտ և միջնորդավորված է, տեղական մեդիան էլ վատ է պատկերացնում, հետևաբար՝ քիչ է լուսաբանում հայկական գաղթօջախների անցուդարձը:

Ի դեմս սփյուռքի հայկական լրատվամիջոցների՝ հայաստանյան մեդիադաշտը կարող է ունենալ սկզբնաղբյուրների բացառիկ ցանց: Ընդ որում, խոսքը և՛ վերատպումների, և՛ սփյուռքահայ ՋԼՄ-ի հետ կապեր հաստատելու և նրանց հետ մշտական կապի մեջ գտնվելու մասին է: Հայաստանյան և սփյուռքի լրատվամիջոցները միմյանց համար կարող են ծառայել որպես յուրօրինակ թղթակցական կետեր: Հայաստանը բնակչության թվի հարաբերակցությամբ աշխարհում ամենամեծ սփյուռքն ունեցող երկրներից մեկն է, առաջատարը հետխորհրդային տարածքում, և լրատվամիջոցների համահայկական ցանցը կարող է ազգային նույնականացման հզորագույն գործիք ծառայել: Հաշվի առնելով, որ ամենահայաեռ գաղթօջախները Ռուսաստանում, ԱՄՆ-ում և Ֆրանսիայում են, որոնք, ի դեպ, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրներն են, սփյուռքն իր տեղեկատվական ցանցով կարող է լուրջ նպաստ բերել արցախյան հիմնախնդրի քարոզչական ճակատում:

*Մարտ, 2016թ.*

### Աղբյուրներ և գրականություն

1. *Հովսեփյան Մ.*, Ռադիոժուռնալիստիկայի հիմունքներ. պատմություն և տեսություն (դասախոսություններ), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014, էջ 57:
2. Սփյուռքի դիրքորոշումները ՀՀ աշխարհաքաղաքական կողմնորոշումների շուրջ, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2014, էջ 22:

**ՄՓՅՈՒՌՔԱՅ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ ՀՀ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐՈՒՄ**

*Դավիթ Սարգսյան*

Ամփոփագիր

Հոդվածը ներկայացնում է Հայաստանի աշխարհաքաղաքական կողմնորոշման թեմատիկայով Հայկական սփյուռքի մամուլի հրապարակումների ընդհանուր օրինաչափությունները և տեղական լրատվադաշտում սփյուռքյան ՁԼՄ-ի ներկայացվածությունը: Հայության համահավաք տեղեկատվական հետաքրքրությունների համապատկերում ամփոփվել են Հայկական սփյուռքի լրատվամիջոցներում մեր երկրի ինտեգրացիոն ուղեգծի անդրադարձերի վերաբերյալ հիմնական միտումները:

**СМИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ОРИЕНТИРАХ  
ГЕОПОЛИТИЧЕСКОГО ВЫБОРА АРМЕНИИ**

*Давит Саргсян*

Резюме

В статье рассматриваются ключевые позиции передовых СМИ армянской Диаспоры по тематике геополитического выбора Армении, а также представленность медийной сферы Диаспоры в СМИ Армении. В контексте информационных интересов мирового армянства вкратце изложены основные тренды освещения интеграционных процессов вокруг Армении в средствах массовой информации армянской Диаспоры.

**MASS MEDIA OF THE ARMENIAN DIASPORA IN TERMS  
OF THE GUIDING CRITERIA FOR ARMENIA'S GEOPOLITICAL CHOICE**

*Davit Sargsyan*

Resume

The article discusses the key perceptions and positions of the leading media of the Armenian Diaspora on the subject of the Armenia's geopolitical choice. The issue of the Diaspora media representation in Armenia-based newsrooms is also scrutinized. In the context of the informational interests of Armenians worldwide, the main trends of covering the country's integration processes in the Armenian Diaspora media are summarized.

## ՀԱՄԱՑԱՆՑԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

### *Էդգար Ալեքսանյան՝*

*Քանալի բառեր՝* քաղաքական կուսակցություններ, համացանց, վեբ կայքեր, մեդիահաղորդակցական կուսակցություններ, կուսակցական ցանցեր, կիրեռկուսակցություններ:

Ժամանակակից քաղաքական կուսակցությունները, «հանուն իշխանության» մղվող պայքարին մասնակցելու և իրենց նպատակներին հասնելու համար, սկսել են օգտագործել համացանցային ռեսուրսները: Արդի տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) զարգացման պայմաններում դասական զանգվածային լրատվամիջոցները (ԶԼՄ) բնութագրվում են վերահսկման բարձր մակարդակով, ինչը թանկացրել է օգտագործումը քաղաքականության մեջ: Ակնհայտ է, որ միայն ցանցային կառավարման հնարավորություններն արդյունավետ օգտագործելու պարագայում են կուսակցությունները կարողանում ընդարձակել իրենց սոցիալական տարածությունը, նպատակամետ օգտագործել իրենց ունեցած ռեսուրսները և մրցակցել վիրտուալ հարթակում: Չնայած պետությունը փորձում է քաղաքական կուսակցությունների համար ԶԼՄ-ի հավասար հասանելիություն ապահովել, այդ ջանքերը բավարար չեն մրցակցային պայմանները հավասարեցնելու համար: Այս տեսանկյունից համացանցը մի շարք առավելություններ ունի: Այն մարտահրավեր է նետում քաղաքական գործընթացներին մասնակցելու սահմանափակ հնարավորություններին՝ տալով քաղաքացիներին լրացուցիչ տեղեկատվություն ստանալու, միմյանց հասանելի լինելու, կարծիքների փոխանակում և համագործակցություն կազմակերպելու հնարավորություն: Այս ամենն էլ ավելի դյուրին ու էժան է դարձնում քաղաքական գործընթացները՝ ընդարձակելով կուսակցությունների մասնակցության սոցիալական հիմքը: Դա հատկապես կարևոր է հարաբերականորեն նորաստեղծ կուսակցությունների և այլընտրանքային

<sup>1</sup> ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ:

տեսակետների ներկայացման համար: Ստիպելով դասական քաղաքական կուսակցություններին հարմարվել նոր պայմաններին՝ համացանցը քաղաքական սուբյեկտների և հասարակ քաղաքացիների համար հավասարեցնում է տեղեկատվական, դիսկուրսային և կազմակերպչական հնարավորությունները: Եթե քաղաքական կուսակցությունը կազմակերպություն է, որի նպատակն է ընտրություններին մասնակցելու, խորհրդարանում տեղեր ապահովելու և կառավարություն ձևավորելու միջոցով իր քաղաքականության իրականացումը, ապա ցանցերի օգտագործումն այս նպատակների իրագործման համար բավական գործուն է և արդյունավետ: Քաղաքական կուսակցությունները, սակայն, տարբեր կերպ են օգտագործում իրենց ցանցային ներուժը: Դրանց մի մասը պահպանում է կազմակերպչական դասական կառուցվածքը՝ համացանցն օգտագործելով որպես գործունեության երկրորդական ռեսուրս, մի մասն էլ ցանցային համագործակցության ազդեցության հետևանքով նոր կառուցվածքային հատկանիշներ է ձեռք բերում, մյուսներն ընդհանրապես վերակազմակերպվում են որպես ցանցային կուսակցություններ: Այս խնդիրների առավել ակտիվ ուսումնասիրությամբ զբաղվում է զարգացած երկրների կուսակցականագիտությունը:

ՀՀ-ում կատարվում են համացանցային ռեսուրսն օգտագործելու առաջին փորձերը: Ընդ որում՝ քաղաքական կուսակցությունների գործելաճի փոփոխությունների ուսումնասիրումն ընդհանուր առմամբ սահմանափակվում է միայն նոր տեղեկատվական տեխնոլոգիաների՝ քաղաքական կուսակցությունների գործունեության վրա ունեցած ազդեցության յուրահատկության և կարևորության շեշտադրմամբ: ՀՀ-ում բավականաչափ ուսումնասիրված չէ դասական կուսակցությունների կերպափոխումը, ինչպես նաև նոր տեսակի կուսակցությունների առաջացման գործընթացի ազդեցությունը կոալիցիոն կառավարությունների կազմման և գործունեության վրա: Մինչդեռ ակնհայտ է, որ ՏՀՏ-ների զարգացումը հնարավորություն է տալիս քաղաքական կուսակցություններին օգտագործել համացանցը որպես իրենց քաղաքականության ներկայացման բազմամակարդակ ռեսուրս:

Քաղաքական կուսակցությունների և քաղաքական գործիչների կողմից օնլայն տիրույթի յուրացման գործընթացի առավել ակտիվ փուլը սկսվեց 2004թ., երբ տեղի ունեցավ անցում Web 1.0 տեխնոլոգիայից Web 2.0-ին, որը վեբ կայքերի բովանդակությունն ինտերակտիվ համագործակցության, տեսա-



նելի դարձնելու, անձնավորման և հաղորդակցական խթանման միջոցով լրացնելու հնարավորություն էր ընձեռում: Նոր տեխնոլոգիաների ներդրման արդյունքում կուսակցությունները սկսեցին ակտիվորեն օգտագործել համացանցն իրենց ներկայացնելու համար: Պ.Նոռիսը, ուսումնասիրելով այն հիմնական խնդիրները, որոնք կարելի է լուծել կուսակցությունների վեբ կայքերի միջոցով, առանձնացնում է դրանց հատկություններից երկուսը. 1. վեբ կայքերը գործում են որպես բազմակարծությունը խթանող ֆորումներ, որոնք ընդդիմադիր քաղաքական գործիչներին իրենց տեսակետն արտահայտելու, ինչպես նաև կուսակցության քաղաքականությանը և դրա նպատակներին առնչվող տեղեկատվության ծավալը մեծացնելու հնարավորություն են ընձեռում, 2. վեբ կայքերը քաղաքական մասնակցության միջոցի դեր են խաղում՝ հեշտացնելով կուսակցությունների և քաղաքացիների միջև փոխադարձ կապի հաստատումը [1, p. 21-45]:

Գոյություն ունի քաղաքական կուսակցությունների համացանցային ներկայության գործառույթների մեկնաբանման երեք հիմնական մոտեցում: Առաջին մոտեցման համաձայն՝ կուսակցության մուտքը համացանց չի փոխում դրա քաղաքականության և գործունեության էությունը: Ժամանակակից տեղեկատվական հասարակության պայմաններում քաղաքականությունը գոյություն ունի *«որպես հասարակ քաղաքականություն»* [2, p. 256]: Երկրորդ մոտեցման հիմքում ընկած է համացանցի ժողովրդավարական էությունը, որը հնարավորություն է ընձեռում հավասարեցնել քաղաքական սուբյեկտների տեղեկատվական և ներկայացուցչական հնարավորությունները քաղաքական գործընթացների համատեքստում: Դա հատկապես կարևոր է քաղաքական փոքր խմբերի համար, որոնք չեն կարող իրենց հավասար մրցակցություն թույլ տալ դասական ռեսուրսներն ու ազդեցության միջոցներն օգտագործելով: Երրորդ մոտեցման էությունը տեղափոխվելն է օնլայն տիրույթ. կուսակցությունները սկսում են կերպափոխվել կառուցվածքային տեսանկյունից և իրականացնել իրենց քաղաքականությունը՝ հաշվի առնելով տեղեկատվական ցանցի յուրահատկությունները: Դրանց մեծ մասը փաստացի վերածվում է նոր ցանցային կուսակցությունների: Համացանցն այս համատեքստում այն ազդակի դերն է խաղում, որը խթանում է դասական կառուցվածքային միավորների կերպափոխումն այնպես, որ քաղաքական կուսակցությունները սկսում են փոխվել:

Փաստորեն, արդի կուսակցությունների համար բնութագրական է *մասնագիտացած մեդիահաղորդակցությունը*՝ հետևյալ հատկանիշներով [3, p. 77].

- մասնագիտացած հաղորդակցական մենեջմենթ,
- խնդիրների ձևակերպում մեդիահաղորդակցական տրամաբանության շրջանակներում,
- անցում համաձայնեցված ծրագրերից առանձին խնդիրների,
- իշխանության ռազմավարական կենտրոնի կողմից գտված, գիտակցված հնարավորությունների առկայություն,
- կուսակցական ակտիվ անդամների դերի նվազում (կամավորներ և այլն):

Քննարկվող շրջանակում նպատակահարմար է առանձնացնել վեբ կայքերի հետևյալ հիմնական գործառույթները՝ կուսակցական հեղինակության մասսայականության ամրապնդման, կուսակցականաշինության, քարոզելու և տեղեկատվության տարածման, շահերի համատեղման, կուսակցական ֆինանսների հավաքագրման, կուսակցական միությունների ստեղծման, հաղորդակցման, սոցիալական ցանցերի, համագործակցող կազմակերպությունների հետ կապի պահպանման գործառույթ [4, c. 29]: Լրացնելով այս գործառույթները որոշակի բովանդակությամբ՝ կուսակցությունները քաղաքացիների հետ պասիվ շփման ձևաչափից աստիճանաբար անցում կատարեցին ակտիվ շփման:

Կուսակցականագիտական գրականության մեջ քաղաքական կուսակցությունների վեբ կայքերի առանձնահատկություններն այսօր ակտիվ ուսումնասիրվում են: Ընդհանուր առմամբ, այնպիսի ցուցանիշներ, ինչպիսին են տեղեկատվական ապահովվածությունը, ռեսուրսային բազայի ամրապնդումը, մասնակցությունը, ցանցայնացումը, արշավների կազմակերպումը և այլն, կուսակցական կիբեռտիրության գնահատման հիմքն են կազմում: Դրան զուգահեռ՝ նշվում է նաև, որ կուսակցությունների վեբ կայքերը քաղաքացիների՝ կուսակցական կյանքին մասնակցելու հնարավորությունների ընդլայնման տիրույթ են ստեղծում թափանցիկության, հետադարձ կապի և քննարկումների միջոցով: Այսօր հիմնականում ուշադրություն է դարձվում կուսակցությունների՝ սոցիալական ցանցերում (*ВКонтакте, Facebook, Twitter, Youtube* և այլն) ներկայությանը: Սակայն հույսը միայն համացանցում կուսակցության առկայության փաստի վրա դնելը բավական չէ արդյունավետ քաղաքական գործունեության համար: Այս նկատառումներով S.Oլտնը և S.Նելտոնն առա-

ջարկում են գործողությունների տասը կետ, որոնց իրականացումը կբերի օնլայն տիրույթի օգտագործման և քաղաքական գործունեության արդյունավետության ցուցանիշի բարձրացմանը [5, p. 63-64]: Հ.Մարգեթսը, որն առաջին անգամ առաջարկեց լրացնել քաղաքական կուսակցությունների ընդունված դասակարգումը (կադրային, մասսայական, լայնամասշտաբ, կարտելային) նոր տեսակով՝ կիբեռկուսակցություն, այդ նոր տեսակի հիմնական առանձնահատկությունը տեսնում է այն փաստի մեջ, որ *դրանք (կիբեռկուսակցությունները) հրաժարվում են անդամակցության դասական մեխանիզմներից և անցնում են ընտրողների հետ անմիջական կապի ձևաչափին*: Հ.Մարգեթսը նշում է. «Հիմնական առանցքային հատկանիշն այն է, որ կիբեռկուսակցություններն օգտագործում են ցանցային տեխնոլոգիաները ոչ այնքան անդամակցության դասական սկզբունքները, որքան ընտրողների հետ հարաբերություններն ամրապնդելու համար: Այդ տեխնոլոգիաներն ավելի շատ նպաստում են անդամների թվի նվազմանը, այլ ոչ թե հակառակը [6, p. 528-536]:»

*Կիբեռկուսակցություններն առանձնանում են հետևյալ հատկանիշներով.*

- կուսակցության ակունքներ, որոնք են՝ անդամակցության փոփոխված սկզբունք, ընտրագանգվածի խառնածին համակարգ՝ S2S և համացանց,
- սատարման ձևեր. անմիջական կապ ընտրողի հետ, ընտրողների նախասիրություններով պայմանավորված կուսակցական ուժեղ մրցակցություն,
- անդամակցության բացակայություն, «համախոհ» հասկացության ազատ ընկալում (ընդ որում՝ տեսականորեն համախոհների թվին են դասվում բոլոր ընտրողները),
- հաղորդակցման կուսակցական միջոցներ, ցանցային հաղորդակցության միջոցներ՝ ներքին և արտաքին ցանցեր,
- քաղաքացիական հասարակության և պետության միջև զբաղեցրած դիրք, կուսակցությունը՝ որպես կազմակերպություն (այլ ոչ թե ինստիտուտ), այդ կազմակերպությունները գործում են պետության և քաղաքացիական հասարակության սահմանին:

Այս հատկանիշներով օժտված են նաև այն դասական կուսակցությունները, որոնք սկսում են ակտիվորեն օգտագործել S2S-ն իրենց գործունեությունում: Բայց էլ ավելի հատուկ են դրանք վիրտուալ կիբեռկուսակցությունների բացարձակապես նոր երևույթին, որն ի հայտ եկավ 2010-

ական թթ՝ ի լրումն դասական կուսակցությունների: Նորամուծությունը գիտական գրականության մեջ միանշանակ չի ընդունվում՝ հատկապես նկատի ունենալով կիրեռկուսակցությունների գաղափարագուրկ վիճակը: Այս համատեքստում ուսումնասիրելով կիրեռկուսակցությունները՝ Փ.Թագարթը շեշտադրում է նրանց ժողովրդահաճո բնույթը [7, p. 128]: Համաձայնվելով արտահայտված կարծիքի հետ՝ նշենք, որ մեր ուսումնասիրած գիտական գրականության մեջ ոչ միայն գաղափարախոսական հատկանիշները, այլ նաև «հանուն իշխանության համար» մղվող պայքարում պարտականությունները հստակեցված չեն: Դա էլ հնարավորություն է տալիս վարել ժողովրդահաճ ցանցային քաղաքականություն՝ անտեսելով ռեալ սոցիալական տարածությունում առկա շահերի խմբերը:

### ***Քաղաքական կուսակցությունները և շահերի խմբերը***

Ցանցային համագործակցության պայմաններում, հանուն իշխանության համար մղվող պայքարին առավել ժողովրդավարական բնույթ հաղորդելու նպատակով, երիտասարդ կուսակցությունները նպատակամետորեն փոխհարաբերվում են շահային խմբերի հետ: Ժողովրդավարական անցման գործընթացում գտնվող երկրների կուսակցական գործունեությունն ուսումնասիրող փորձագետներն այն կարծիքին են, որ նշված համագործակցության հետևանքով կուսակցությունները վերածվում են նոր կառուցվածքային միավորների՝ այսպես կոչված *լայն կուսակցական ցանցերի (extended party networks)*: Կուսակցությունների և շահային խմբերի համագործակցության ցանցային վերլուծությունը հիմնված է երկու հիմնական հանգամանքների վրա. 1. կուսակցությունների և շահային խմբերի միջև ցանցային համագործակցության ձևավորման առանձնահատկություններ, 2. շահային խմբերի հետ ինտենսիվ համագործակցության պայմաններում քաղաքական կուսակցությունների ցանցային կերպափոխումներ:

Կուսակցությունների և շահային խմբերի միջև համագործակցության թուլացումը պայմանավորված է նույն այն գործոններով, որոնք նպաստում են կուսակցությունների՝ մասսայական կազմակերպություններից լայնամասշտաբ կարտելային կուսակցությունների վերածվելուն: Ներկայումս առանձնացվում են կուսակցությունների և շահային խմբերի միջև համագործակցության, ինչպես նաև այդ համագործակցության ձևերի և ինտենսիվության վրա

ազդեցություն ունեցող հետևյալ հիմնական գործոնները: Առաջինը շահային խմբերի տարբերակման և սեգմենտացման գործընթացն է: Երկրորդ՝ թուլանում են տարբեր տեսակի սոցիալական պառակտումների դերը և նշանակությունը: Այդ պառակտումները նախկինում ստիպում էին սոցիալ-դեմոկրատներին միավորվել արհմիությունների, խոշոր հողատերերին՝ գյուղատնտեսական միությունների, իսկ քրիստոնեական կուսակցություններին՝ կրոնական կազմակերպությունների հետ: Երրորդ գործոնի էությունն այն է, որ զանգվածային տեղեկատվության միջոցների դերի նշանակության մեծացումը (դա հատկապես վերաբերում է սոցցանցերին) նպաստում է տեղեկատվական ռեսուրսների փոխանակման նոր եղանակների ի հայտ գալուն, որոնք չեն ենթադրում կուսակցությունների և շահային խմբերի միջև կոորդինացվող կապի առկայություն: Իսկ չորրորդ գործոնը ենթադրում է, որ մեծացել են շահային խմբերի քաղաքական ազդեցության հնարավորությունները, ինչի հետևանքով վերջիններս կարող են չհամագործակցել կուսակցությունների հետ, կուսակցություններն էլ ավելի քիչ ուշադրություն են հատկացնում դասական կապերին: Վերջին գործոնը ենթադրում է, որ ժամանակակից կուսակցությունների կարտելային բնույթը և ներկուսակցական համագործակցությունը կոորդինացնելու ձգտումը, ինչպես նաև կուսակցության և պետության միջև կապի կարևորումը խթանեցին քաղաքական հասարակության մասնատումը հարաբերականորեն ինքնուրույն կուսակցական և քաղաքացիական հասարակության տարբեր ասոցիացիաների կողմից ձևավորված սեգմենտների: Իսկ այն փաստը, որ կուսակցությունները հայտնվեցին քննադատության կենտրոնում՝ որպես պետության ազդեցության գործակալներ, նպաստեց քաղաքական կուսակցությունների և քաղաքացիական ասոցիացիաների դասական կապերի թուլացմանը:

*«Լայն կուսակցական ցանցերի»* տեսությունը կուսակցաշինությունը և կուսակցության գործունեությունը դիտարկում է ներկուսակցական և արտակուսակցական ֆորմալ կառույցների շուրջ ձևավորված կապերի համատեքստում: Իրականում կուսակցությունն այսօր ներկայացնում է տարաբնույթ կապերի ցանց, որն օգտագործվում է ընտրություններում հաջողության հասնելու և սեփական քաղաքականություն (ինչպես ընդդիմադիր, այնպես էլ լոյալ) անցկացնելու համար: Առանձնացվում են ցանցային համագործակցության հետևյալ հիմնական մասնակիցները՝ կուսակցության ֆորմալ կազմակերպչա-

կան միավորներ, ֆինանսական դոնորներ, կուսակցական ակտիվիստներ, արշավների կազմակերպիչներ, կուսակցության հետ համագործակցող շահային խմբեր, բարեկամաբար տրամադրված լրատվամիջոցներ: Մի կողմից՝ այսպիսի լայն կուսակցական ցանցերում դրանք չեն կարող գործել փոխկախվածության պայմաններից դուրս: Հիմնվելով կուսակցական ցանցերի և դրանց *կոալիցիոն բնույթի վերլուծության վրա*՝ Մ.Գրոսմանը և Ք.Դոմինգեզը նշում են, որ «կուսակցական գործիչները... ընդամենը ուժեղ փոքրամասնությունների կոալիցիայի ներկայացուցիչներ են՝ անելով դա այնպես, որ պաշտոնական կոմիտեները չեն կարող իշխանության կրող հանդիսանալ առանց նրանց շահերը հաշվի առնելու [8, p. 771]»: Մյուս կողմից՝ այդպիսի ցանցերում գործիչներից ոմանք կարող են լինել ավելի ազդեցիկ, քան մյուսները: Սակայն վճռորոշ նշանակություն ունի այն, որ ֆորմալ կազմակերպությունները ներառում են ճանաչված՝ հեղինակավոր առաջնորդներին, որոնք համագործակցությունն ու կոորդինացիան ուժեղացնելու իշխանություն ունեն: Հիերարխիայից դուրս առավել կարևոր սուբյեկտները կարող են գործել միայն ոչ պաշտոնական և ոչ անմիջական կերպով [9, p. 637]: Ընդհանրապես, քաղաքական կուսակցությունների և շահային խմբերի միջև նոր հարաբերությունների կայացման հետ կապված ԱՄՆ-ում *կոալիցիոն կուսակցությունների նոր տեսության* անհրաժեշտության հարց է առաջ քաշվում: Դրան զուգահեռ՝ շեշտվում է, որ կուսակցական քաղաքական սուբյեկտները սկսում են մենեջերի դեր կատարել՝ նպաստելով *շահային խմբերի և կուսակցական կոալիցիայի միջև համագործակցության կայացմանը* [10, p. 581]: Սակայն շեշտվում է, որ կուսակցական լայն ցանցերի իրական վերլուծությունն ի ցույց է դնում ֆորմալ ցանցային համագործակցության համատեքստում կազմակերպչական միավորների կատարած դերի ոչ միանշանակ լինելը:

Դիտարկենք վերոնշյալ հատկությունները ԱՄՆ քաղաքական կուսակցությունների օրինակով: Մ.Գրոսմանը և Ք.Դոմինգեզը դեմոկրատների և հանրապետականների ցանցերի մասին որոշակի տվյալներ են բերում ըստ ցանցային համագործակցության երեք հիմնական ուղղությունների՝ *սատարմանն ուղղված արշավներ, օրինաստեղծ կոալիցիաներ և քաղաքական գործողությունների կոմիտեներ* [8, p. 777]: Ուշադրություն է դարձվում ցանցերի վճռորոշ գործիչների և ցանցային կառուցվածքի որոշակի առանձնահատկությունների վրա: Սատարմանն ուղղված արշավների համեմատությունը ցույց է տալիս, որ

դեմոկրատներն ու հանրապետականներն առանձնապես չեն տարբերվում այնպիսի ցուցանիշներով, ինչպիսին են ցանցի ծավալը (խմբերի քանակը ցանցում)՝ համապատասխանաբար 121 և 118 խումբ: Գրեթե նույնն է ցանցի խտության ցուցանիշը (առկա և տեսականորեն հնարավոր կապերի քանակի համեմատություն)՝ 0.21 և 0.17: Չեն տարբերվում նաև կենտրոնացման ցուցանիշները (այս ցուցանիշը ցույց է տալիս առկա կապերի քանակով առաջնահերթ համարվող հանգույցների և մնացած հանգույցների հարաբերությունը)՝ 14.1% և 14.4%: Զգալիորեն տարբերվում են կենտրոնական հանգույցների ցուցանիշները (այն հանգույցների քանակը, որոնք կանխորոշում են երկու հանգույցների միջև ամենակարճ հեռավորությունը): Դեմոկրատների համար այս ցուցանիշը կազմում է 6.4%, հանրապետականների համար՝ 13.1, ինչը խոսում է այն մասին, որ հանրապետականների ցանցում ամենակարճ հեռավորության համար պատասխանատու գործիչներն ավելի շատ են: Այս փաստը հաստատվում է նաև ԱՄՆ քաղաքական կուսակցությունների ցանցային մյուս վերլուծություններով: Այսպես, այդ երկրի երկու խոշորագույն կուսակցությունների համաժողովների պատվիրակների ցանցային ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ հանրապետականների ցանցը ներառում է ավելի շատ կազմակերպություններ՝ պատվիրակների ավելի մեծ թվով, այնինչ դեմոկրատների ցանցի կազմակերպությունների թվաքանակն ավելի մեծ է, սակայն պատվիրակների թվաքանակը բավական համեստ է: Այս տեսակետից դեմոկրատական կուսակցությունը ձգտում է կենտրոնացնել տեղեկատվական հոսքը կուսակցական կառուցվածքային միավորների միջոցով, իսկ հանրապետականներն օգտագործում են իրենց համախոհներին գործողությունների կոորդինացման և տեղեկատվության փոխանցման համար [11, p. 1665-1666]: Դեմոկրատների պարագայում սատարման կազմակերպման *հիմնական գործող սուբյեկտներն արհմիություններն են, հանրապետականների պարագայում՝ բիզնեսը*: Առաջիններին հատուկ է գործող սուբյեկտների բաշխումը ցանցով մեկ՝ կենտրոնից եզրեր, այնինչ հանրապետականներն ունեն ազգային տեսանկյունից ավելի նոսր կառուցվածք, որը ձևավորվել է պահպանողականների տարբեր խմբերի կողմից:

Եվրոպայում կուսակցությունների ցանցային վերակառուցումն ընթացել և ընթանում է զարգացած տրիպարտիզմի պայմաններում: Ցանցային հարաբերությունները ԵՄ առաջատար երկրներում հնարավորություն են տալիս կուսակցություններին իշխանության համար պայքարում ընդգծված ներ-

կայացնել հանրային շահը և այն այլընտրանքները, որոնք առկա են սոցիալական ցանցում քաղաքականությունը խճանկարային ներկայացնելու համար: Եվրոպական կուսակցություններն այսօր քաղաքական օրակարգը մշակում են՝ առաջին հերթին այն ներկայացնելով սոցիալական ցանցերին: Փաստորեն, հանուն իշխանության համար մղվող պայքարը որդեգրել է ցանցայնացման գաղափարը՝ ազդեցություն թողնելով քաղաքական արշավների և կուսակցությունների քաղաքական կազմակերպման վրա: Ցանցային քաղաքական կուսակցությունների գաղափարն առավել հարմար է դառնում Եվրոպայի «երիտասարդացող» կուսակցական համակարգի վերլուծության համար: Ինչպես նշում է Ռ. Կարլսենը, Նորվեգական աշխատավոր կուսակցության համար օնլայն ռազմավարության հենասյունը դարձավ թեմատիկ ցանցային կառուցվածքի ձևավորումը, որը կուսակցության անդամների՝ կուսակցական կյանքին մասնակցելու շեմն իջեցնելու, ինչպես նաև նոր անդամներ ձեռք բերելու նպատակ ունեւ, ինչը թույլ է տալիս խոսել դեպի կազմակերպման ցանցային մոդել կատարվող անցման մասին [12, p. 158-170]:

*Մարտ, 2016թ.*

### Աղբյուրներ և գրականություն

1. *Norris P.*, 2003. Preaching to the Converted? Pluralism, Participation and Party Websites. – Party Politics. Vol. 9. No. 1.
2. *Margolis M., Resnick D.*, 2000. Politics as Usual: The Cyberspace «Revolution». Thous Oaks, CA.
3. *Hartleb F.*, 2012. All Tomorrow's Parties: The Changing Face of European Party Politics. Brussels. Center for European studies.
4. *Кислицына И.С.*, 2009. Политические партии в коммуникативном пространстве Интернета. Российская академия государственной службы при Президенте Российской Федерации.
5. *Olson T., Nelson T.*, 2010. The Internet's Impact on Political Parties and Campaign. KAS International Reports. No. 6.
6. *Margetts H.*, 2006. Cyber Parties. – Handbook of Party politics (ed. by R. Katz: W. Crotty). Newbury Park, London, New Delhi.
7. *Taggart P.*, 2000. Populism. Buckingham: Open University Press.
8. *Grossmann M., Dominguez C.*, 2009. Party Coalitions and Interest Groups Networks. – American Politics Research Vol. 37 N 5.
9. *Koger G., Masket S., Noel H.*, 2009. Partisan Webs: Information Exchange and Party Networks. – British Journal of Political Science. Vol. 39. N 3.
10. *Bawn K., Cohen M., Karol D., Masket S., Noel H., Zaller J.*, 2012. A theory of Political Parties, Groups, Policy, Demands and Nominations in American Politics. – Perspective on Politics. Vol. 10 N 3.



11. *Heany M., Masket S., Miller J., Strogovich D.*, 2012. Polarized Networks: The Organizational Affiliations of National Party Convention Delegates. – American Behavioral Scientist. Vol. 56 N 12.
12. *Karlsen R.*, 2013. Obama's Online Success and European Party Organizations: Adoption and Adaptation of U. S. Online Practices in the Norwegian Party Convention Delegates. – Journal of Information Technology and Politics. Vol. 10. N 2.

## ՀԱՄԱՑԱՆՅՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՎԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

*Էդգար Ալեքսանյան*

Ամփոփագիր

Դասական կուսակցություններն այսօր կանգնած են քաղաքական նոր հաղորդակցության նետած մարտահրավերի առջև: Կազմակերպչական դասական մոտեցումներն այլևս նախկինի պես արդյունավետ չեն: Այդ պատճառով քաղաքական կուսակցությունները սկսում են ակտիվորեն հարմարվել իրավիճակին, ինչը հանգեցնում է դրանց գործունեության ցանցային վերակազմակերպմանը:

## ИНТЕРНЕТ И ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ПОЛИТИЧЕСКИХ ПАРТИЙ

*Эдгар Алексанян*

Резюме

Традиционные партии сегодня сталкиваются с рядом проблем, связанных с новой системой политической коммуникации. Традиционные организационные подходы уже не могут быть такими же эффективными, какими являлись в прошлом. Как следствие, политические партии начинают активно приспосабливаться к новым условиям, что, в свою очередь, приводит к сетевой реорганизации их деятельности.

## INTERNET AND DEVELOPMENT TRENDS OF POLITICAL PARTIES

*Edgar Aleksanyan*

Resume

Today classical parties are faced with challenges posed by new political communication. The classical organizational approaches are no longer as effective as they used to be. As a result, the political parties actively adapt to the situation, which leads to the network reorganization of their activities.

**«21-ԲԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես**  
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ  
ՀՀ Արդարադատության նախարարության  
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.  
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1  
Կայք՝ [www.noravank.am](http://www.noravank.am)  
Էլ.-փոստ՝ [21dar@noravank.am](mailto:21dar@noravank.am), [office@noravank.am](mailto:office@noravank.am)  
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46  
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 28.04.2016թ.  
Թիվ 2 (66), 2016թ.  
Տպաքանակը՝ 150:

Թուղթը՝ կավճապատ, ֆորմատը՝ 70x100 1/16  
Պայմանական 8 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen  
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում